ԷՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

- ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՅԿ -

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՍԿՐՏՉԻ Ա.

ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԷՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

- ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՅԿ -

Տպարան Մայր Աթոռոյ
ս. Էջմիածնի
1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Զամենայն ինչ, զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք:
Բ. Եւ պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ:
Գ. Ապաշխարեցէք եւ հաւատացէք յԱւետարանն:
Դ. Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է Նա եւ արդար առ ի թողուլ մեզ զմեղս մեր:
Ե. Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, յիս բնակեսցի, եւ Ես ի նմա:

Եւ դու քարոզեա՛ զբանն, հա՛ս ի վերայ ժամու եւ տարաժամու. յանդիմանեա՛, սաստեա՛, մխիթարեա՛ ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ:
Բ Տիմոթ. Դ. 2

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Սիրելի՛ ընթերցող

Երբ և իցէ մտքովդ ա՞նց ես կացրել, թէ մեր պապերը, մեր նախնիքը քրիստոնեաներ են եղել, և մենք, որ նրանց մրուրն ենք, ինչպիսին ենք: Նմանութիւն կա՞յ մեր ու նրանց մէջ: Նրանք հաւատի պաշտպանութեան համար իրանց անձն են զոհ բերել, եկեղեցու ամէն մի քարը իրանց արիւնով շաղախել, մէնք հաւատի մասին չենք էլ մտածում: Նրանք ոչ մի օր առանց եկեղեցու չեն դիմացել, մենք ամիսներով էլ եկեղեցու երես չենք տեսնում: Նրանք, ինչ որ եկեղեցում կարդացուում ու երգւում է, նրա մեծ մասը անգիր են գիտեցել, մենք «Հայր մերն» էլ հազիւ գիտենք: Նրանք ինչ արել են, հոգով, սրտով ու մտքով են արել. մենք ինչ անում ենք, ձևի համար, ուրիշներին երևալու և փառաւորուելու համար ենք անում: Մի խօսքով, նրանք գործքով են եղել քրիստոնեայ, մենք՝ լոկ անունով:

Մեզանում հազարից մէկը չգիտէ, թէ ինչ է աղօթք, ինչ է պահք, ապաշխարութիւն, խոստովանութիւն, հաղորդութիւն, և ի՞նչպէս պետք է կատարենք: Հազարից մէկը չգիտէ, թէ ինչպես պէտք է ապրենք՝ լա՛ւ մեռնելու համար. ինչպէս պէտք է մեռնենք՝ յաւիտեա՛ն ապրելու համար: Այս պատճառով այս անգամ ես խօսելու եմ քեզ հետ ահա ա՛յդ բաների մասին՝ յուսալով որ քեզ համար սխալը ուղղուի, մութը պարզուի:

Է. Քահ. Նազարեանց

ԲԱՆ Ա

Զամենայն ինչ, զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք:
Մատթ. ԻԱ 22

Ի՞նչ է նշանակում ԱՂՕԹՔ անել

Երբ ստեղծուածը հոգով, սրտով ու մտքով կապւում է իր Ստեղծողի հետ, ժամանակաւորը՝ յաւիտենականի հետ, մահկանացուն՝ անմահի հետ, դրան ասում ենք աղօթք անել:

Բայց միայն մարդս չէ, որ աղօթում է. բոլոր արարածները՝ թէ՛ բանական, թէ՛ անբան, թէ՛ շնչաւոր, թէ՛ անշունչ, աղօթում են Աստծուն: Երբ առաւօտեան արշալուսին ծառերը ճռուողում են, կովերը բառաչում, ոչխարները մայում, ծառն իր սօսաւիւնով, ծաղիկը գլուխը վեր տնկելով, ծովն իր ծփալով, հողմն իր շնչով՝ ամէնքը միասին մի ընդհանուր աղօթք է, որ վեր են բարձրացնում դէպի Ամենակալի գահը: Երկինք, գետինք, ծով ու ցամաք, զգացմունք ու լեզու դարձած, իր Ստեղծողին է ուղղում իր առաջին հայեացքը, իր առաջին խօսքը: Իսկ բանական մարդը, այդ բոլորի մէջ իր Արարչի մատը տեսնելով, իր մէջ Նրա շունչը զգալով, նորոգում է Նրա հետ իր մշտական կապը՝ բաց անելով Նրա առաջ իր սիրտը: Ահա այն ժամանակ, սուրբ Ոսկեբերան հայրապետի ասածի պէս, բարձրանում է աղօթքը, և իջնում է Աստուծոյ ողորմութիւնը:

Վշտերի ու հոգսերի մէջ աչք բաց արած մարդուն այնքան այլոց մխիթարանքը չէ օգնում, ինչքան այն, որ նա իր սիրտը բաց է անում ուրիշի մօտ, իր վշտերն ու ցաւերն է պատմում: Միթէ միևնոյնը չէ՞ պատահում մարդուս, երբ աղօթք է անում, երբ իր անզօրութիւնն ու ոչնչութիւնը դնում է իր Ստեղծողի առաջը: Երբ դու աղօթում ես, այն սուրբ բոպէներին, երբ քեզ շրջապատող աշխարհը մոռացած՝ ծխում ես

քո սրտի բուրվառը դէպի Նրան, Որի առաջ դու հող ես և մոխիր, մի ներքին փոփոխութիւն չե՞ս զգում մէջդ, սիրտդ չէ՞ թեթևանում, անձդ չէ՞ հանգստանում, վշտերիդ դառնութիւնը չէ՞ մեղմանում: Երբ անասունը ցաւագարում է, երբ քաղցում է, չէ՞ մռնչում. նրա մռունչն իր աղօթքն է առ Աստուած: Երբեմն անդաստանների կողմը արտերը փչացնող քամիներ են փչում, որից նրանք խկոյն թառամում, գետին են խոնարհում, բայց յետոյ մի ամպի կտոր է գալիս, կաթիլներ է ցօղում վրաները և նրանց թմբրած գլխները կրկին վեր է բարձրացնում: Մեր հոգին էլ ունի իրան թառամեցնող, չորացնող քամիները, որոնք ամէն կողմից ամէն ուղղութեամբ փչում են վրան: Աստուծուց հեռացած լինելու մեղքերն են, որ չորացնում են նրան. անձրեւ է հարկաւոր նրան՝ կրկին զուարթանալու համար, և հոգու տապը զովացնող այդ անձրևը՝ աղօթքն է: Ամէն ստեղծուած կախումն ունի, կեանք ունի, յոյս ունի ստեղծողից: Այս պատճառով աղօթքը բուն ունի դրած ամէն մարդու հոգու խորքում, ամէն տեղ և ամէն ժամանակ: Վայրենի մարդուն անգամ, որ իր սրտի ուզածը խոսքով յայտնելու համար լեզու չունի, աղօթքը վշտերի միջոցին ստիպում է իր անմիտ երեսը դէպի երկինք ուղղել և անհաւատ հօրը ստիպում է ծունր խոնարհիլ իր որդու մահուան անկողնի մօտ:

Աղօթքը Աստուծոյ բարկութիւնը իջեցնում է, մեղաւորին հետը հաշտեցնում, սրտի ախտերն ու կեղտերը լուանում է, վտանգներից ազատում: Աղօթքը մի ոսկէ շղթայ է, որով Աստուած մօտենում է մարդուս նեղութեան ժամանակ: Ի՞նչպէս ազատուեց Յօնան մարգարէն կիտի փորից. ձեռքը ձգելով աղօթքի շղթան: Ի՞նչպէս ազատուեցին երեք մանկունքը Բաբիլոնի հնոցից. բռնելով աղօթքի շղթան: Ի՞նչպէս աւազակը խաչի վրայից դրախտը մտաւ. ձեռք ձգելով աղօթքի շղթան: Ի՞նչպէս փշրուեցին բանտում Պօղոս առաքեալի երկաթի շղթաները. ապաւինելով աղօթքի ոսկէ շղթային:

Բայց պէտք է մեր սուրբ հայրապետներին ականջ դնել, թէ ինչպէս են գովում աղօթքը, ի՛նչ ոյժ ու զօրութիւն են տեսնում նրա մէջ: Մէկն

ասում է. «Աղօթքն է հաւատի հիմքը, աստուածութեան սանդուղք, հրեշտակաց բարեկամ»: Միւսը ձայն է տալիս. «Աղօթքն է թշնամու խարազան, մեղաւորի ապաստարան, Աստուծոյ պատարագ»: Երրորդը թէ՝ «Աղօթքն է ուղևորի վահան, աշխատեալի հանգիստ, անքոյթ նաւահանգիստ»:



Աղօթելուց առաջ պէտք է հարկաւոր պատրաստութիւնը տեսնել: «Երբ աղօթելիս լինես,- ասում է Յիսուս,- մտի՛ր սենեակդ, փակի՛ր դռներդ և խնդրուածքդ փո՛ր Հօրդ առաջը»: Զպէտք է կարծել, թէ դրանով ուզում է ասել, որ իբր ամէն մարդ աղօթելիս պէտք է անպատճառ մտնի իր տունը: Այլ ուզում է ասել՝ կտրի՛ր քո յարաբերութիւնը քեզ շրջապատող ամէն բանի հետ, ամփոփուի՛ր ինքդ քո մէջ, ուշք ու միտքդ լաւ ժողովի՛ր, որ խնդրելիքդ ուղղակի առ Աստուած ուղղես, բոլոր զգայարանքներիդ դռները փակի՛ր աշխարհային ունայն մտքերի, ձայների ու տեսարանների դէմ և ապա սկսի՛ր քո խօսքի թելը: Իսկ եթէ ինքդ չոգած ես եկեղեցում, բայց հոգիդ դուրսն է, եթէ շրթունքդ աղօթքի խօսքերն է մրմնջում, իսկ միտքդ ուրիշ բաների վրայ է, դու ճշմարիտ աղօթող չես: Եթէ հոգիդ չէ աղօթում, եթէ սիրտդ չէ արտասուում, ինչքան էլ ծունր դնես, երկրպագես, արցունք թափես՝ անօգուտ է:

Աղօթելու պատրաստութիւնը հասկացնելուց յետոյ՝ Յիսուս ուղղակի աղօթելու կերպի մասին է խօսում: «Երբ աղօթելիս լինես,- ասում է,- շատախօս մի՛ լինիր»: Շատախօսութիւնը մարդու հետ ըստ ինքեան ճանձրալի է, մա՛նաւանդ՝ Աստուծոյ հետ, իսկ աղօթողի համար՝ մինչ անգամ վնասակար. որովհետև նա, շատ խօսքեր ասելիս չկարողանալով բոլոր ուշքը մի բանի վրայ պահել, դառնում է մի խօսուն մեքենայ: Եթէ շատախօսութեան միտքն այն է, որ խնդիրը լաւ հասկացուի, շատ աւելորդ է, որովհետև Աստուծուն լաւ են յայտնի

մեր պէտքերը, «Առաւե՛լ քան զոր խնդրեմք և իմանամք»: Թո՛ղ, ասում է Յիսուս, հեթանոսները, կռապաշտներն այդպէս աղօթեն իրանց աստուածներին: Նրանք կարծում են թէ շատ խօսքեր ասելով, շատախօսելով միայն կարող են մի բան հասկացնել իրանց քարի, երկաթի, ոսկու և արծաթի աստուածներին, որոնք աչք ունեն՝ չեն տեսնում, ականջ ունեն՝ չեն լսում, և ոչինչ չէ մտնում նրանց գլուխը: Իսկ դու գործ ունես աստուածների Աստուծոյ հետ, որ քո խնդրելուց էլ առաջ գիտէ ինչ է հարկաւոր քեզ:

Շատախօսութիւնն էլ երկու տեսակ է: Առաջինն՝ երբ մարդս Աստուծուն աղօթելիս սովորեցնում է Նրան, թէ ինչ է հարկաւոր իրան, ինչ չէ հարկաւոր: «Տէ՛ր Աստուած,- ասում է,- չեմ ուզում Քեզ-նից հարստութիւն, գանձ ու մեծութիւն, տո՛ւր ինձ առողջութիւն, և բաւական է»: Մի և նոյն է, թէ կաւը ասէր բրուտին. «Ինձնից կարա՛ս չինիր, ո՛չ թէ կճուճ»:

Եւ այսպէս, ինչ որ իր կարծիքով իրան հարկաւոր է ու օգտակար, միայն այն է խնդրում՝ չմտածելով, թէ ինչքան անմիտ է իր խնդիրը և ինչքան անսահման Աստուծոյ իմաստութիւնը, որ իրանից լաւ գիտէ իր օգուտն ու վնասը: Քիչ չէ պատահել, որ երբ մէկից մի բան ենք խնդրել ու մերժուել է, մեր ուզածը չենք ստացել, փոխանակ տրտմե-լու ուրախացել ենք, որովհետև գործքով համոզուել ենք, որ եթէ կատարուէր մեր խնդիրը, այս կամ այն կողմով պէտք է վնասուէինք: Եւ եթէ նա, որից կախուած էինք համարում մեր վիճակի բարելաւու-թիւնը, մեզ չկարեկցելով մերժեց, բայց գոհ մնացինք, ի՛նչքան աւելի գոհ պէտք է լինենք մեր ստեղծողից, որ մերժում է՝ մեր բարին ցան-կանալով: Այո՛, Աստուծոյ մի առանձին բարերարութիւն է, որ շատ շատ անգամ մեր խնդրածը չէ տալիս մեզ:

Երկրորդ՝ երբ աղօթողը վճռել է ունենալ մի բան և անպատճառ ուզում է ստանալ, այդ ժամանակ նա, ինչպէս մի փաստաբան, աշխա-տում է համոզել Աստուծուն, որ անպատճառ տայ իրան՝ էլ չմտածելով

թէ՝ Աստուած էլ կամենո՞ւմ է տալ, թէ ոչ: «Տէ՛ր Աստուած, - ասում է,- օրը երկու անգամ ժամ գալով՝ յոգնեցի, շատ ծունր դնելով՝ ծնկներս մաշուեց, շատ արտասուելով՝ աչքս կուրացաւ, ե՞րբ պէտք է հասցնես ինձ Քո օգնութիւնը. ես արդէն հողի հետ հաւասարուեցի»: Այսպիսի խնդրուածքով Աստուծուն դիմելը անմտութիւնից էլ աւելի է, որովհե-տեւ դրանով խնդրողը մտնում է Աստուծոյ իրաւունքների մէջ:

Մեր խնդրելիքը պէտք է լինի Աստուծոյ կամքի համաձայն: Մենք ոչ թէ պէտք է ասենք՝ Աստուած, ինձ ա՛յս տուր, ա՛յն տուր, այլ՝ «Դու լաւ գիտես՝ ինչ է հարկաւոր ինձ, ինչն օգտակար. տուր ինձ ա՛յն, ինչ որ հաճելի է Քե՛զ. այնքա՛ն տուր, ինչքան կամենում ես. ա՛յն ժամանակ տուր, երբ կամենաս»: Եթէ Յիսուս չարչարանքի բաժակն Իրանից հե-ռացնելու համար աւելացնում էր. «Բայց ոչ ինչպէս Ես եմ կամենում, այլ՝ ինչպէս Դու», մենք՝ տարակուսած մարդիկս, մեր ուզա՞ծը պէտք է խնդրենք: Իսկ սուրբերից մէկն ասում էր. «Ես աւելի կը ցանկանամ մի չնչին որդ լինել Աստուծոյ կամքով, քան թէ մի սերովբէ՝ ի՛մ կամքով»:



Մենք Աստուծուն պէտք է խնդրենք ո՛չ թէ շատախօսութեամբ, այլ՝ պնդերեսութեամբ, ինչպէս մի մուրացիկ, որ, թէպէտ վրան ուշք դարձ-նող չկայ, սակայն երեսը պնդացնում է և ճանձրացնելու չափ խնդրում: Մենք, երբ մեզ նեղացնում են խնդրելով, զայրանում ենք, բայց Աստուած ա՛յն ժամանակն է զայրանում, երբ Նրան շատ չենք խնդրում: Յիսուս դրա համար մի գեղեցիկ օրինակ է բերում:

«Կարո՞ղ է լինել,-ասում է,-ձեր մէջ մէկ այնպիսի մարդ, որի դրա-ցին կէս գիշերին գնայ մօտը և ասի. «Սիրելի՛ս, բարեկամս հեռաւոր տեղից եկել է, ոչինչ չունիմ ուտելու, երեք հա՛ց տուր խնդրեմ, դնեմ առաջը», և նա պատասխան տայ. «Այս կէս գիշերիս ի՞նչ հաց ուզե-լու ժամանակ է, դուռս փակ, երեխաներս էլ անկողնումս քնոտած,

խնդրեմ հանգիստ թողնես ինձ, չեմ կարող վեր կենալ և ուզածդ տալ»: Ճշմարիտ եմ ասում,- աւելացնում է Յիսուս,- եթէ դրացիութեան պատճառով չտայ, գոնէ այնպէս երեսը պնդացնելու համար՝ վեր կը կենայ և կը տայ նրան իւր ուզածը»:

Եւ ի՞նչ է այդ Քո բերած նմանութիւնը, Տէ՛ր Յիսուս: Դու բնութեամբ անքո՛ւն, իսկ Քո առակի դրացին՝ անկողնում ձգուած. Դու Իսրայէլի անքուն պահապանը, Դու Յակոբի տան ոչխարների արթուն Հովիւը, իսկ սա՝ քնի տարած. միթէ Դու է՞լ ես քնում, անքո՛ւն Բնութիւն:

Եթէ քնկոտը խնդրողի պնդերեսութիւնից ուզածը տուեց, միթէ արթունը չի՞ տայ: Եւ որպէսզի մեզ հաստատի այդ մտքի մէջ և ձգտել տայ այդ միջոցով մեր խնդրածը ձեռք բերելու, Յիսուս մի երկրորդ օրինակ էլ է բերում: Այդ օրինակի մէջ Աստուծոյ անհուն բարերարութեան մի փոքրիկ նմանութիւնը Նա ցոյց է տալիս ոչ թէ անկողնում ձգուած դրացու, այլ դատաւորական աթոռի վրայ բազմած դատաւորի մէջ:

«Մի դատաւոր կար,-ասում է,-մի քաղաքում. ոչ Աստուծուց էր վախենում, ոչ մարդուց ամաչում: Նոյն քաղաքում մի խեղճ այրի կին էլ կար, որ ամէն օր գնում էր դատարան և դատաստան էր խնդրում իր թշնամու դէմ: Բայց դատաւորը երկար ժամանակ ականջ չէր դնում նրան: Նրա հոգը չէր թէ՝ թշուառ այրիի հարուստ դրացին նրա բոլոր կայքը՝ հնչին պարտքի հաշւումը գրաւել էր, որբերի ձեռքից հացը խլել, միակ ապաւէն խրճիթն էլ ձեռք գցելու վրայ էր: Անտէր, անօգնական այրին, որի կուրծքը տնքում էր անվերջ հառաչանքներից, որ շատ անգամ էր ընկել պարտատիրոջ ոտքերը և գթութիւն խնդրել, այժմ էլ լուսանալուն պէս վազում էր դատարան, դատաւորի խիղճն էր թակում: Բայց նրա խիղճը թմրած էր, և նա մնում էր քարացած և խուլ:

«Դատ արա թշնամուս դէմ» խօսքերը վերջապէս յոգնեցրին նրա լսելիքը, խայթեցին նրա խիղճը: Եւ մեր «անիրաւ դատաւորը» սկսեց խելքը գլուխը հաւաքել և այսպէս մտածել. «Թէև ես Աստուծուց չեմ վախենում և մարդուց չեմ ամաչում, գոնէ այս պնդերես այրիից օձիքս

թափ տալու համար՝ անեմ իր դատաստանը և ականջս հանգիստ պահեմ»: «Մտածի՛ր հիմա,- ասում է Յիսուս,- եթէ անիրաւ դատաւորը խնդրողի պնդերեսութիւնից յօժարում է վերջապէս կատարել նրա խնդիրը, հապա Աստուած չի՞ անցնի Իր ծառաների, Իր որդոց կողմը, որոնք «աղաղակում են առ Նա ի տուէ և ի գիշերի»:

Մի խօսքով՝ Աստուած կամենում է, որ աղօթելով ձանձրացնենք Իրան, խնդրենք մուրացկանների պէս, որոնք չեն դադարում ուզելուց, կրկնելուց, դուռը բաղխելուց, մինչև չեն ստանում:

Աղօթելիս չպէտք է չարաչար խնդրել. ինչպէս Յակոբոս առաքեալն ասում է, «Խնդրում էք, բայց չէք ստանում, որովհետև չարաչար էք խնդրում», դէպի ուրիշները աններող գտնուելով էք խնդրում: Չարաչար խնդրողները կեղծաւոր, հպարտ, անողորմ մարդիկն են, որոնք իրանց աղօթքով աւելի բարկացնում են Աստուծուն, քան թէ քաղցրացնում: Չարաչար խնդրողները նրանք են, որոնք խցում են իրանց ականջները ուրիշների խնդիրը չլսելու համար. և այդպիսիների մասին Աստուծոյ օրէնքների մէջ կարդում ենք պարզապէս. «Ով որ խցում է իր ականջը, որ չլսի տնանկին, նա ինքն էլ կաղաղակի առ Աստուած, և չի լսի նրան»:

Երբ չարաչար աղօթողը իր համար է աղօթում, այնպէս աղաչանքով ու պաղատանքով է խօսում, այնպիսի համոզիչ լեզու է բանեցնում, որ կարողանայ հաւանելի անել Աստուծուն. «Աղաչում եմ,- ասում է,- Տէ՛ր, ողորմի՛ր անարժանիս, քա՛ղցր դատաւոր, բարերա՛ր և մարդասէր, մի՛ յիշիր իմ մեղքերը, անտե՛ս արա իմ յանցանքները. եթէ արդարն ու մեղաւորը փնտռես, ո՞վ կարող է փրկուել»: Իսկ երբ նա, իր թշնամուց վիրաւորուած, գնում աղօթքի է կանգնում, իր խնդրուածքը ուրիշ կողմն է շուռ տալիս. «Տէ՛ր Աստուած,-ասում է,- անա-

չառ դատաւոր ես, անիրաւութիւնը ատում ես, մի՛ ներիր իմ թշնամուս, թափիր նրա գլխին Քո բարկութեան կրակն ու կայծակը, արդար հատուցո՛ւմ արա»:

Իսկ Աստուած ի՞նչ է պատասխանում. «Երբ քեզ լինեմ դատելիս, ուզում ես որ քաղցր ու բարերար լինեմ, չյիշեմ քո մեղքերը, իսկ երբ քո թշնամուն լինեմ դատելիս, ուզում ես արդար ու անաչառ լինեմ: Չէ՞ որ առաջ իբրև քաղցր դատաւորի էիր աղաղակում, իբրև մարդասիրի էիր համոզում, իբրև անյիշաչարի աղաչում, այս ի՞նչպէս փոխուեցիր: Բայց լա՛ւ իմացիր, անկարելի է, որ դու Ինձնից բարիք ստանաս, իսկ թշնամիդ՝ արդար հատուցում, որովհետև բարերարը դէպի ամէնքն էլ բարերար է, և արդար դատաւորը դէպի ամէնքն էլ անաչառ: Դեռ կարելի է, որ թշնամուդ հակառակ աղօթելիս՝ դատաւորիդ զայրացնես քո դէմ: Արդար դատաւորի աչքում երկուսդ էլ մէկ էք, Նա երկուսիդ խնդիրն էլ հաւասարապէս է քննում»:

Աղօթքը պէտք է լինի հաւատով: Մենք պէտք է խնդրենք հաւատով, հետևենք յուսալով, բաղխենք սիրով: Հաւատով, յուսով և սիրով աղօթքն երկնքի բանալին է, որ բաց է անում Աստուծոյ ողորմութեան դուռը, ինչպէս յուսադրելով ասում է Յիսուս. «Ամէն բան, ինչ որ աղօթքի մէջ խնդրէք հաւատով, կը ստանաք »: Աղօթքը թոյլ է, եթէ յենուած չէ հաւատի վրայ, անհաւատ, անյոյս, անսիրտ աղօթքը նման է անծուխ խնկան, չի կարող բարձրանալ առ Աստուած: Ինչպէս ծերութիւնից ուժասպառ եղած մարդը շուտ շուտ գայթում ընկնում է, եթէ գաւազանի վրայ չէ հաստատուած, այնպէս էլ աղօթքը չի կարող Աստուծուն մօտենալ և մնալ, եթէ հաւատով չէ ամրացած: Այն ամէն մարդ, որ Յիսուսից օգնութիւն էր խնդրում՝ հաւատ ցոյց տալով, հաւատ, որ նրա զգացմանց, նրա խօսքի, նրա աղաչելու կերպի մէջ էր երևում, ստանում էր իր խնդրածը: Ամէն այդպէս խնդրողի Յիսուս հասցնում էր Իր օգնութիւնը՝ ասելով «Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ», այսինքն՝ քո հաւատը աւելի է շարժում Իմ սիրտը, քան թէ քո

խօսքը: Ահա՛ դրա մի լաւ օրինակը:

Քանանացի հեթանոս կնոջ մէկը, դուրս գալով իրանց սահմաններից, պատահում է այնտեղ Յիսուսին և աղաղակում. «Տէ՛ր, օգնի՛ր ինձ, աղջիկս հիւանդ է, դևոտւում է չարաչար, չկայ մէկը, որ բժշկի նրան, իմ ճարը Դու ես, օգնի՛ր»:

Բայց Յիսուս պատասխան չէ տալիս, Նա լուռ ու մունջ շարունակում է ճանապարհը: Կինն այժմ շտապով առաջ է ընթանում և փակում է Նրա ճանապարհը, այնպէս որ Նա էլ չէ կարողանում առաջ գնալ: Նա տարածում է բազուկները դէպի Տէրը, ցոյց է տալիս Նրան իր արտասուալից աչքերը, իր վշտալի դէմքը, իր մայրական պատառոտած սիրտը, աշխատում է շարժել Նրա սիրտը իր կտրուած, խզուած, երկչոտ ձայնով: Խեղճ կինը մի բան է միայն աղաղակում՝ «Տէ՛ր, օգնի՛ր ինձ»: Ուզում է ասել. «Ես գիտեմ, որ իբրև հեթանոս կին իրաւունք չունեմ յոյս դնելու Քո օգնութեան վրայ, գիտեմ, որ Դու եկել ես միայն Քո աչքի լսի պէս սիրած Իսրայէլի ժողովրդիդ համար, բայց, ինչ ուզում է լինի, ում համար ուզում է եկած լինես, ես չեմ թողնի Քեզ»:

Տէրն աւելի խիստ ու կծու կերպով է պատասխանում.

- Լաւ չէ, որ երեխաների ձեռքից հացն առնենք, շներին տանք: Ես Իմ ժողովրդի հացը օտարին չեմ կարող տալ, թող դեռ իմ ժողովուրդը կշտանայ, տեսնենք յետոյ ձեզ համար է՞լ մի բան կը մնայ:

Յիսուսի սիրտը՝ մարդացած Աստուծոյ սիրտը, անկասկած, աւելի է արիւնոտւում, քան՝ այն թշուառ կնոջ սիրտը, որ լսում է, ինչպէս իր խնդիրը մերժւում է, ինչպէս իրան համեմատում են շների հետ. բայց և այնպէս «հովուասէր շունը» ձեռք չէ վեր առնում Հովուից և ձայն է տալիս.

- Տէր, չէ՞ որ շներն էլ իրանց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով են կերակրւում: Աշխարհս օգնութիւն է ստանում Քեզնից: Միթէ միայն ե՞ս պէտք է սխալուեմ յոյսերիս մէջ. միթէ միայն ի՞նձ պէտք է արձակես դատարկաձեռն. միթէ Դու ինձ համար ուրիշ բարիք չունե՞ս. Քո ամէն բարութիւնով լի սեղանից միթէ կտորներ, փշրանքներ

չե՞ն մնացել. ինչո՞ւ զուր կորչեն այն փչրանքները, որոնց կարօտ չեն Քո «երեխաները»:

Յիսուս յաղթւում է, ոչ մի բառով չէ յանդիմանում նրա թախանձանքը, ոչինչ խօսք չէ ասում նրա յամառութեան մասին, ընդհակառակը գովում է նրան և ակամայ ձայն տալիս.

- Ա՛յ կին, մեծ է քո հաւատը, թող լինի ինչպէս ուզում ես:

Կինը գնում է տուն և որդուն գտնում է բժշկուած:

Աղօթքը պատահական չպէտք է լինի, նա մի ներքին, հոգեկան պահանջ պէտք է լինի: Աղօթքին և շուտ շուտ աղօթելուն պէտք է վարժեցնենք մեր սիրտն ու հոգին. աղօթքը մեր սովորական պարապմանց կարգը պէտք է անցնի, եթէ ոչ՝ ամէն անգամ հոգեպէս նորոգուելու կարիք պէտք է զգանք և ամէն անգամ նորից պէտք է սկսենք արդէն մի անգամ բռնած ճանապարհը: Կարելի է դու մտածես թէ՝ ինչպէ՞ս ժամանակ գտնեմ շուտ շուտ աղօթելու, եկեղեցին էլ հեռու է, օրը երկու անգամ ինչպէ՞ս գնամ:

«Օրը եօթն անգամ պէտք է օրհնեմ Քո անունը, Տէ՛ր,-ասում է Դաւիթը.-սուրբ պարտքս պէտք է համարեմ օրը եօթն անգամ Քեզանով զբաղուել, Քեզ յիշել, ամէն տեղ Քեզ եմ տեսնում, Քեզ եմ գտնում. թէ՛ երկնից բարձունքն եմ թեւակոխում, Քեզ այնտեղ եմ տեսնում, թէ՛ երկրի անդունդն եմ խորասուզւում, Քեզ այնտեղ եմ գտնում»: Իսկ եթէ անթիւ հոգսերով ծանրաբեռնուած թագաւորը ժամանակ էր գտնում միշտ Աստուծուն յիշելու, օրը եօթն անգամ Նրա հետ խօսելու, Նրան աղօթելու, դու, որ նրանից անհամեմատ շատ ժամանակ ունես, ինչո՞վ կարող ես արդարանալ:

Բացի սրանից, հրէայ աղօթողը շատ ծէսեր ունէր կատարելու: Նա պէտք է մտնէր տաճարը, առնէր կրակարանը, փայտ ու կրակ տանէր, առնէր դաշոյնը, կանգնէր զոհաբերութեան սեղանի առաջ և կատարէր ուրիշ շատ պարտականութիւններ: Իսկ քեզ դրանցից ոչ մէկն էլ հարկաւոր չէ, ուր էլ որ լինիս, երբ էլ ուզենաս՝ ամէն տեղ ու ամէն

ժամանակ հետդ է զոհն էլ, զոհարանն էլ, փայտ ու կրակն էլ, դաշոյնն էլ, և այդ բոլորը դու ինքդ ես: Դռնապա՞ն ես, կարող ես դռանդ մօտ կանգնած աղօթել. անդամալո՞յծ ես, կարող ես նստած տեղդ աղօթել. ուղևո՞ր ես, կարող ես ճանապարհիդ աղօթել: Հարկաւոր է միայն, որ կամքի յօժարութիւն, հոգու տրամադրութիւն ունենաս, այն ժամանակ ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը և ո՛չ այլ ինչ չի կարող քեզ արգելք լինել: Կարող ես ծունկ էլ չչոգել, կուրծքդ էլ չկոծել, բազուկներդ էլ չտարածել, որովհետև Աստուած տեղը, ժամանակն ու ձևը չէ հարցնում, Նա միայն պահանջում է վառվռուն սիրտ և ողջախոհ հոգի:

Մովսէս մարգարէն ձայնով չէր աղօթում, բայց Աստուած ասեց նրան. «Ի՞նչ ես աղաղակում»: Սամուէլի մայր Աննան շրթունքները չէր շարժում, բայց Աստուած լսեց նրա աղօթքը: Եզեկիա թագաւորը, մահուան անկողնում պառկած, երեսը դէպի պատը դարձրած, ջերմ հոգով «Աստուած» աղաղակեց, Աստուած փոխեց նրա մահուան վճիռը, և նա առողջացաւ: Յոնան մարգարէն կիտի փորից աղօթեց, ողջ առողջ ցամաք դուրս եկաւ, Աստուծոյ դեսպանութիւնը կատարեց: Դանիէլ մարգարէն առիւծների գբից աղօթեց և անվնաս դուրս եկաւ այնտեղից: Լուսաւորիչը խոր վիրապի օձերի մէջ աղօթեց, առողջ դուրս եկաւ, ազգը լուսաւորեց:

Ով յուզում է իր ուղեղը, ով արթնացնում է իր հոգին, ով տեղափոխւում է երկինք և այսպիսով Աստուած իրանն է համարում, նա այդպիսի սուրբ խօսակցութեան մէջ վարժուելով՝ երեսը շուռ է տալիս կենսական բոլոր հոգսերից, երկրաւոր բոլոր հրապոյրներից և թեւաւորւում, մարդկային կրքերից բարձր է կանգնում: Նրա աչքում՝ ցածում եղած մարդիկ իրանց մանր կրքերով ու չնչին հաշիւներով շատ փոքր են երևում, ուստի և չէ ուզում հաւասարուել նրանց: Եթէ այդպիսի մէկը աղօթելուց յետոյ իր թշնամուն տեսնի, էլ չի կարող նայել վրան իբրև թշնամու վրայ, որովհետև աղօթքի վառած բոցը դեռ նրա սրտումն է, որտեղից հալածել, այրել, ոչնչացրել է ամէն չար

ցանկութիւն: Բայց որովհետև մենք, իբրև թոյլ արարած, կարող ենք անհոգութեան մատնուել, ուստի, զգալով, որ ժամանակ անցնելուց յետոյ մեզանում վառուող բոցը հետզհետէ սառչում է, շուտով պէտք է աղօթքի դիմենք և տաքացնենք մեր սառած հոգին: Ինչպէս, երբ ճաշի նստած միջոցին նկատում ենք, որ կերակուրը սառել է, նորից դնում ենք կրակի վրայ, որ տաքանայ, այնպէս էլ աղօթքի վրայ, ինչպէս վառուած ածուխների վրայ, պէտք է դնենք մեր շրթունքը և կրկին վառենք մեր սիրտն ու հոգին բարեպաշտ մտքերով:

Մենք՝ մարմնաւոր կեանքով ապրող մարդիկս, որ հոգևորի մասին ոչինչ չենք մտածում, ուզում ենք, որ աղօթքը զգալի, տեսանելի, չոշափելի՛ կերպով մեր ցանկացածը բերի մեր ձեռքը, մեր գրպանը դնի, մեր տունը, մեր այգին լցնի: Բայց այն ժամանակ էլ ի՞նչ դին պէտք է ունենար աղօթքը: Դու էլ կաղօթես, ես էլ կաղօթեմ, մեզ պէս հազարաւորն էլ կաղօթեն, ամէն օր կաղօթենք, ամէն ժամ կաղօթենք, և շատ էլ միմեանց հակառակ, մինչ անգամ անմիտ բաներ կը խնդրենք. ի՞նչ կը լինի, թէ ամենիս խնդրածն էլ մեր ուզածի պէս կատարուի. բրուտը արև կուզի, երկրագործը՝ անձրև, Աստուած որի՞ն պէտք է լսի: Եթէ ինչ որ մտքովդ անց կացնես, իսկոյն կատարուի, այդպիսի աղօթքը ոչ թէ Աստուծուն որդիաբար սիրելուց կը լինի առաջ եկած, այլ շահասիրութիւնից, և ո՞ր անխելքը չի աղօթի այնպիսի Աստուծուն, որ իսկոյն լսում ու անհաշիւ կատարում է ամէնքի ուզածը:

Մեր աղօթքի պատասխանը մենք կը ստանանք միայն այն ժամանակ, երբ ունենանք կենդանի հաւատ: Իսկ եթէ հաստատ հաւատ ունենալով էլ մենք անպատասխան մնանք, որ անկարելի է, ապա այդ կը նշանակի՝ այն Աստուածը, որ մեր սրտում դրել է աղօթելու կարիքը, մի այնպիսի Աստուած է, որ մեր մէջ սահմանել է քաղց՝ առանց

կերակրի, ծարաւ՝ առանց զովացման, մի Աստուած, որ Իր ստեղծածին ասում է. «Այսպիսի Աստուած եմ Ես. դու միշտ պէտք է հարցնես, իսկ Ես երբէք չպէտք է պատասխանեմ քեզ. դու միշտ պէտք է դուռս բաղխես, բայց երբէք չպէտք է բացուի քեզ»:

Բայց այդպէս չէ՛. առ հասարակ մարդս ինչ խնդրում է, ստանում է: Եթէ դու ընկերոջդ համար մի վնասակար բան ես խնդրում, ստանում ես, միայն ոչ թէ ընկերոջդ, այլ քե՛զ համար: Եթէ խնդրածդ Աստուած էլ քեզ օգտակար է համարում, տալիս է, իսկ եթէ միայն դու ես օգտակար համարում, այն ժամանակ Աստուած չտալով բարիք է հասցնում քեզ: Տկար ես, առողջութիւն ես խնդրում, Աստուած քեզ չէ տալիս, ընդհակառակը՝ ցաւդ ու վիշտդ աւելացնում է. չպէտք է կարծես, թէ դու լաւ բան խնդրեցիր, Աստուած քեզ վատը տուեց. որովհետև ցաւիդ սաստկանալը Աստուծոյ հաշուով աւելի էր օգտակար քեզ, քան թէ առողջանալդ: Այսպէս, Աստուած քո կամքդ ուղղում է դէպի բարին, երբ անօգուտ առողջութեան փոխանակ տալիս է քեզ օգտակար ցաւ: Մեր սուրբ հայրապետներից մէկը ասում է. «Թէ ստանանք մեր խնդրածը, թէ չստանանք, միշտ պէտք է աղօթենք և շնորհակալ լինենք ոչ միայն ստանալու, այլ և չստանալու համար՝ մտածելով, որ երբ Աստուած չէ տալիս մեր ուզածը, դա քիչ բարերարութիւն չէ, քան եթէ տար, որովհետև մենք այնպէս լաւ չգիտենք, թէ ինչն է մեզ օգտակար, ինչպէս Նա գիտէ»:

Տեսնենք վերջապէս՝ թէ ի՛նչ պէտք է խնդրենք Աստուծուց: Մենք սովորաբար Աստծուց խնդրում ենք երկրաւոր, ժամանակաւոր բարիք, երկնաւոր ու յաւիտենական բարիքները մոռանում ենք: Մոռանում ենք, որ մենք այս «տրտմութեան հովտում «մի պանդուխտ ենք, մի ուղևոր», որ վաղ թէ ուշ հասնելու է իր բնիկ երկիրը, իր հայրենիքը՝

երկինք: Մեր Աստուծուց, որ այսօր մեր Հայրն է և վաղը մեր դատաւորն է լինելու, մենք խնդրում ենք շատ մանր մունր բաներ, մեծերը թողնում ենք: Մենք պէտք է մեծերը խնդրենք, որովհետև մեծի մէջ փոքրն էլ կայ, բայց փոքրի մէջ մեծը չկայ: Այո՛, երկրաւոր, ժամանակաւոր բարիքները կարող ենք խնդրել՝ միայն միշտ աւելացնելով՝ եթէ հոգուս էլ օգտակար է, իսկ հոգևոր բարիքը պէտք է խնդրենք անպայման և համարձակ: Յիսուս Ինքն է սովորեցնում. «Ամենից առաջ,- ասում է,- խնդրեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը, իսկ մնացած բարիքներն ըստ ինքեան կը տրուին ձեզ»: Այս կողմից շատ լաւ օրինակ է հանդիսանում մեզ Սողոմոնը:

Մի անգամ Աստուած երևեցաւ նրան երազում և ասեց.

- Խնդրի՛ր Ինձնից, ինչ որ ուզում ես:

- Տէ՛ր,-պատասխանեց Սողոմոնը,-Դու ինձ թագաւոր դրիր մի մեծ ազգի վրայ, իսկ ես մի անփորձ երիտասարդ եմ: Խնդրում եմ Քեզնից՝ տո՛ւր ինձ սուրբ սիրտ և իմաստուն միտք, որ կարողանամ բարին չարից զանազանել և այս ահագին բազմութեան դատաստանը անել արդարութեամբ:

Աստուած ասեց.

-Որովհետև դու Ինձնից ոյժ ու զօրութիւն, հարստութիւն, փառք ու երկար կեանք չխնդրեցիր, այլ երկնային արքայութիւնը ժառանգելու համար սրբութիւն և իմաստութիւն խնդրեցիր, այս պատճառով ես քեզ տալիս եմ ոչ միայն այն, ինչ որ խնդրեցիր, այլ և այն ամէնը, ինչ որ չխնդրեցիր: Ես քեզ տալիս եմ երկնաւոր ու երկրաւոր բարիքները միանգամայն: Ես կը տամ քեզ այնպիսի հոգի և իմաստութիւն, որ ոչ քեզ նմանը եղած լինի քեզնից առաջ, ոչ էլ լինի մէկը քեզնից յետոյ:

Եւ Աստուած կատարեց Իր խոստումը. Սողոմոնը եղաւ իմաստուն ոչ միայն թագաւորների, այլ և բոլոր Իսրայէլի մէջ: Նրա իմաստութեան համբաւը հասաւ աշխարհի ամէն կողմերը, և «դշխոյն հարաւոյ»՝ Սաբայի թագուհին, աշխարհի մի հեռաւոր ծայրից եկաւ Սողոմոնի

իմաստութիւնը լսելու: Եւ նրա իմաստուն խօսքերը այսօր էլ կարդացւում են մեր եկեղեցում:

Մեր եկեղեցական սուրբ հայրերն էլ, որոնք սքանչելի աղօթքներով զարդարել են մեր ամէնօրեայ ժամերգութիւնը, միշտ միայն երկնաւոր բարիքն են խնդրում, իսկ երկրաւորներից միայն այն բաներն են խնդրում, որոնցով կարող ենք ձեռք բերել երկնաւորը, այն է՝ հաւատ, յոյս, սէր և պատուիրանապահութիւն:

Ահա այդ խնդրուածներից մի քանիսը.

- Աստուա՛ծ, որ Լոյս ես և Արարիչ լուսոյ, բնակող անմատոյց լուսոյ մէջ, այս առաւօտեան լուսոյ ծագման բոպէներին ծագի՛ր մեր հոգու մէջ աստուածգիտութեան լոյսդ:

- Տէ՛ր, ծածկի՛ր մեզ Քո ամենազօր Աջիդ հովանու տակ, զօրացրո՛ւ մեզ Սուրբ Հոգովդ, պահի՛ր մեզ աչքի լսի պէս:

- Տո՛ւր մեզ շնորհք, որ կարողանանք սիրել Քեզ մեր բոլոր սրտով ու մտքով և մեր բոլոր զօրութեամբ կատարել Քո պատուիրանները:

- Տէ՛ր, որ «երից մանկանց» աղօթքի զօրութեամբ Բաբելոնի հնոցի հուրը հանգցրիր երկնային ջրերիդ հեղեղներով, թափի՛ր մեզ վերայ էլ Քո բարերար ողորմութեան ցօղը և հանգցրո՛ւ մեր յանցանաց հնոցի բոցը:

- Տո՛ւր մեզ կարողութիւն, որ ուղիղ հաւատով և առաքինասէր վարքով ապրենք այս աշխարհում և ապա արժանանանք երկնից արքայութեանդ:

Աղօթենք մենք էլ մեր Շնորհալի ս. Ներսէս Հայրապետի հետ.

«Աստուա՛ծ իմ, որ բանաս զձեռն Քո և լնուս զամենայն զարարածս ողորմութեամբ Քով. Քե՛զ յանձն առնեմ զանձն իմ. Դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան»:

ԲԱՆ Բ

Եւ պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ:
Մատթ.Դ 2

Այնպիսի ժամանակներում ենք ապրում, երբ փողի ու փորի թագաւորութիւնը խլել է մարդուս գլխից բանականութեան թագը և նրան իր բարձրութիւնից իջեցրել, անբան անասունին է հաւասարացրել: Ինչքան մարդս մօտեցել է փողին, այնքան հեռացել է Աստուծուց. ինչքան տաքացել է փողի վրայ, այնքան սառել է Աստուծուց. իր Աստուածը նա փողի մէջ է փնտռում, և երբ մէկն ասում է. «Փողը երկրորդ աստուածն է», «առաջին աստուածն է»՝ վրայ է բերում միւսը: Ինչո՞ւ: Որովհետև, հէնց որ լուսանում է, փողի մասին ենք խօսում, փորի մասին մտածում:

Իսկ եթէ դեռ կան մարդիկ, որոնք լուսաբացին երեսները դէպի արևելք, դէպի «չաղաթաթախ աղօթարան» ուղղած՝ աղօթում են, անկասկած, նրանք էլ փողի ու փորի համար են աղօթում:

Բայց մարդս ստեղծուած է աւելի բարձր, աւելի հոգևոր կեանքով ապրելու, քան թէ ցած, մարմնաւոր կեանքով: Երբ մենք վերինը, հոգևորը թողած՝ անսանձ, անզուսպ կեանք ենք անցկացնում, դրանով ցոյց ենք տալիս, որ մեր կեանքի անասնական մասովն ենք ապրում. ո՞ւր է հապա մարդկայինը: Երբ մենք հոգին ու հաւատը թողել՝ մարմինն ու փողն ենք պինդ բռնել, երբ հաւատի պատուէրները թողել՝ փողին ենք ծառայում, երբ հոգու պահանջները մոռացած՝ մարմնի պահանջներն ենք կատարում, էլ ո՞րտեղ մնաց Աստուծոյ պատկերը, Աստուծոյ նմանութիւնը: Մեր բանական պատկերն անբան անասունի պատկերի հետ չե՞նք փոխել արդեօք: Ահա մի այսպիսի ապականուած ժամանակ՝ այս փողապաշտութեան, այս փորապաշտութեան ժամանակ, որ մեզ ջրհեղեղի ժամանակներն է յիշեցնում՝ «Ուտէին, ըմպէին, կանայս առնէին և

արանց լինէին», երբ փողատէրը պարարած, ճարպակալած՝ ամենակեր խոզի կերպարանք է ստացել, երբ մարմնապաշտը որովայնի թաղանթները, ստամոքսի պատերն է լայնացնում, երբ հէնց մեծ պասի առաջին օրից վաճառանոցները լի են ամէն տեսակ մսեղէնով ու ձկնեղէնով, երբ որովայնամոլի կարմրատակած թշերից արիւն է կաթկաթում, երբ չորեքշաբթին ու ուրբաթը ուրիշ օրերից ոչնչով չեն զանազանւում, և պասը միայն օրացոյցներումն է գրուած, մի այսպիսի մարմնապաշտ ժամանակ, ահա, ես ուզում եմ խօսել «պասուայ» մասին:

Բայց ի՞նչ է խօսում նրա մասին ինքը ժողովուրդը: Ժողովուրդը, եթէ նա չքաւոր է, աղքատ կամ նահապետական ընտանիք, այնքան է սիրում ու գովում պասը, որ հաւատի չէնքի հիմնաքարերից մէկն է համարում, պահում է նրան սրբութեամբ և խստութեամբ, գիտէ անգիր թէ՝ որ ամսին ինչ պաս է գալիս, որ տօնից յետոյ որ պասի բարեկենդանն է: Նա «բերան փակէք» ու «բերան բացէք» էլ ունի, որի մասին ուրիշը հասկացողութիւն անգամ չունի: Նա, մանաւանդ մեծ պասի առաջին առաւօտը, եկեղեցում «Լուացարուք, սրբեցարուք»-ը լսելուց յետոյ գնում տուն, մոխրաջրով այնպէս է լուանում, մաքրում ու պասահան անում ամանները, որ խեղճ պղնձեղէնի հոգին էլ հետն է դուրս գալիս: Նա պաս ուտելն ու թուրքանալը մէկ է համարում, պաս ուտողը նրա աչքի գրողն է, էլ լափ ու լուտանք չէ մնում, որ նրա գլխին չթափի: Գիւղացի ժողովուրդը մեծ պասի առաջի օրը այնպիսի մի սրբազան ուրախութիւն է զգում, ինչպիսին Զատիկ օրը: Նրանք այդ օրը տնէ տուն ման գալով և ջերմ համբոյրներ տալով միմեանց՝ շնորհաւորում են պասը:

Ի՞նչ է ասում իր վիճակից գոհ փարթամը. «Պասը յիմար բան է, մարդկանց հնարած բան է. պասն էն է, ինչին որ ձեռքդ չէ հասնում: Ի՞նչ է՝ լոբի ուտեմ՝ դրախտ կը գնամ, միս ուտեմ՝ դժո՞խք կը գնամ: Լոբին էլ, միսն էլ Աստուծոյ ստեղծած է, ուրբաթն էլ, շաբաթն էլ Աստուծոյ օրն է: Կե՛ր, եղբա՛յր. ո՞վ է հարցնում, կեանքն առանց էն էլ շատ կարճ է»:

Ի՞նչ է նշանակում պաս: Պաս կամ պահս բառը դուրս է եկած

պահք բառից, որ նշանակում է պահեցողություն, պահել: Բայց ի՞նչը պահել: Պէտք է պահենք, այսինքն զսպենք մեր անձը, որպէս զի չթմրի, չքնի, չմեռնի մեր հոգին: Ինչքան մարմինը գերանում, զուարթանում է, այնքան հոգին նրա մէջ ճնշւում, խեղդւում է: Եւ որովհետև մեր բոլոր զգացմունքները բթանում, քարանում են պարարտացնող կերակուրներից և գրգռիչ խմիչքներից, այս պատճառով սահմանուած է նաև կերակրեղէնի պահեցողութիւն:

Պահեցողութեան նպատակն է մարմինն ու զգայութիւնները մահացնել՝ հոգին ապրեցնելու համար: Պահեցողութեան նպատակն է մտքի մաքրութիւն և սրտի սրբութիւն: Եւ որովհետև դրանց երկուսին էլ կարող են արատաւորել ու վնասել աչքի տեսողութիւնը, ականջի լսողութիւնը, լեզուի ասողութիւնը և այլն, ուստի պէտք է դրանց վրայ էլ սահմանենք պահեցողութեան կանոններ: Եթէ ոչ՝ անօգուտ բան է բերանով պահել, իսկ միւս զգայարանքներով չզգուշանալ մեղքի առիթներից: Պէտք է պահենք մեզ ոչ միայն կերակրեղէնից, այլ և այն ամէն բանից, ինչ որ կարող է մեղքի պատճառ դառնալ: Իսկ նա, ով միայն կերակրեղէնի պահքն է բռնում՝ առանց իր զգայարանքների վրայ պահապաններ դնելու, նման է այն մարդուն, որ մի կողմից պարիսպ է կանգնեցնում թշնամու առաջը, միւս կողմից տասը տեղ դուռն է բաց թողնում նրա համար: Մի բան էլ կայ. Քրիստոս գլուխն է, մենք՝ Նրա մարմնի անդամները: Ինչպէս Քրիստոս առաջ խաչուեց ու յետոյ փառաւորուեց, այնպէս էլ մենք առաջ պէտք է մեր մարմինը պահքով ու ճնշելով խաչ հանենք, որ յետոյ արքայութեան մէջ Քրիստոսի հետ փառաւորուենք, ինչպէս առաքեալն է ասում. «Որպէս կցորդք եմք չարչարանացն, նոյնպէս և մխիթարութեան»: Առանց չարչարանքի փառաւորուել չկայ. փշով պսակուած գլխի անդամներին վարդի պսակ չի վայելի:

❊ ❊ ❊

Շատերը պահքն արհամարհում են՝ ասելով, որ հայրապետների սահմանած բան է և Քրիստոս Աւետարանի ոչ մի տեղում չէ հրամայում պաս պահել: Առաջին՝ հայրապետները ուղղակի իրանցից ոչինչ չեն սահմանել, եթէ առաջուց սահմանուած չեն տեսել առաքեալներից, Յիսուսից կամ եթէ հիմք չեն ունեցել Սուրբ Գրքից: Եւ եթէ հայրապետներն էլ սահմանած լինին, նրանց էլ պէտք է հնազանդուենք, որովհետև քրիստոնեան պարտաւոր է հնազանդուել ո՛չ միայն Յիսուսին, այլ և Նրա հիմնած եկեղեցուն, ո՛չ միայն առաքեալներին, այլ և նրանց օրինաւոր յաջորդներին, պէտք է պահպանի ո՛չ միայն Յիսուսի պատուիրանները, այլ և Եկեղեցու պատուիրանները: Երկրորդ՝ Յիսուս, այո՛, չէ հրամայում պաս պահել, բայց յայտնի է՝ շատ վաղ էր սահմանուած հրէից մէջ, որոնք հինգշաբթին պահում էին ի յիշատակ այն բանի, որ Մովսէսը բարձրացաւ Սինա սարը, և երկուշաբթին՝ ի յիշատակ այն բանի, որ նա այնտեղից բերեց Իսրայէլի ժողովրդի համար քարեղէն տախտակները: Նոյն բանն է հաստատում Յիսուսի առակի փարիսեցին, որ գոռոզաբար պարծենում էր Աստուծոյ առաջ. «Շաբաթը երկու անգամ պաս եմ պահում»: Երրորդ՝ թէպէտ Յիսուս ուղղակի չէ հրամայում պաս պահել, բայց Նա ոչ միայն ընդդէմ չէ պահեցողութեանը, այլև շատ տեղ գովում է պասը և նրա փրկարար ներգործութիւնը: Օրինակ՝ երբ Յիսուսի մօտ բերին բժշկելու մի դիւահար, որին աշակերտները չէին կարողացել բժշկել, Նա ասեց. «Այս տեսակ հիւանդութիւնը ուրիշ բանով չէ բժշկւում, այլ միայն աղօթքով ու պահքով»:

Շատերն էլ չեն պահում՝ պատճառ բերելով, թէ Քրիստոս ասել է. «Ինչ որ մտնում է բերանը, այն չէ պղծում մարդուն»: Եթէ այդպէս է, ուրեմն Քրիստոս Ինքն է մեղքի ճանապարհները սովորեցնում և խրատում է, որ մենք աւելի անհաշիւ ուտող-խմող լինինք, աւելի որովայնամոլ լինինք, քան թէ հրէայք և հեթանոսները. որովհետև առաջին մեղքը և մեր մահուան գլխաւոր պատճառը եղաւ որկրամոլութիւնը: Սրա հակառակ՝ ընդունելով, որ պահքը շատ օգտակար բան է՝

Քրիստոս աղօթքի մասին խօսելուց յետոյ խօսում է պահեցողութեան կերպի մասին՝ ասելով. «Բայց երբ դու պահելիս լինես, մի՛ պահիր կեղծաւորների նման, որոնք աղտոտում են իրանց երեսը և տրտում կերպարանք են ստանում, որ մարդկանց երևան, թէ պահում են: Այլ դու օծի՛ր գլուխդ անուշահոտ իւղով, մաքուր լուա՛ երեսդ, որ արածդ դրսից երևալու նպատակով չլինի»:

Մենք ամէն տեղ Յիսուսի ասածի ոգի՛ն պէտք է հասկանանք, ո՛չ թէ միայն խօսքերը: Երբ Նա ասում է, որ բերանը մտած կերակուրը չէ պղծում մարդուս, այդ այն մտքով է ասում, որ աւելի պարզ ցոյց տայ, թէ չարութեանց բոյնը մարդուս սիրտն է: Եւ հէնց միևնոյն տեղում Նա աւելացնում է թէ՝ «Անլուայ ձեռքով հաց ուտելը չէ պղծում մարդուս»: Միթէ դրանով Յիսուս հրամայում կամ հաւանում է, որ մենք աղտոտ, անլուայ ու անմաքրասէ՞ր լինենք: Ինքը չէ՞ր, որ վերնատանը լուաց Իր աշակերտների ոտքերը: Եթէ մաքրութիւնը հարկաւոր էր ոտքերին, միթէ աւելի հարկաւոր չէ՞ր ձեռքերին, որոնցով պէտք է ուտէին զատկական գառը: Պարզ է, որ Յիսուս միշտ այն մտքով է խօսում, որ արտաքին սրբութիւնը մի առանձին նշանակութիւն չունի, ներքին սրբութիւն է հարկաւոր, սրտի սրբութիւն է հարկաւոր: Իսկ սրտի սրբութիւնը, մտքի մաքրութիւնը, հոգու կենդանութիւնը պահպանւում են ոչ թէ անհաշիւ ուտել խմելով, այլ՝ պահեցողութեամբ:

Պահեցողութիւնը կարևոր պարտք է համարուած ոչ միայն Քրիստոսից սկսած, այլ և Նրանից հարիւրաւոր տարիներ առաջ պահում էին սրբութեամբ Սուրբ Հոգով լցուած մարդիկ, աստուածատես, աստուածախօս մարգարէք: Աւելի յետ գնալով՝ տեսնում ենք, որ պահքը ամենից առաջ սահմանել է Ինքն Աստուած: Հէնց որ ստեղծուեց առաջին մարդը՝ բանական արարածը, իսկոյն հետը սկսուեց և պահքը, այնքան պահեցողութիւնը հարկաւոր էր նրան: «Այս բոլոր ծառերի պտուղը կարող ես ուտել, բայց այս մէկ ծառի պտուղը չուտե՛ս». ահա՛ ինչ ասեց Աստուած Ադամին, որ և դեղեցկապէս երգում է մեր Շնորհալի

հայրապետ սուրբը Ներսէսը. «Որ զօրէնս սրբութեան պահոց՝ նախ ի դրախտին աւանդեցեր»: Տէ՛ր Աստուած, ասում է, պահքը սրբութեամբ պահելու օրէնքը ամենից առաջ Դու դրախտումը տուիր:

Մէկ մտածի՛ր հիմա. եթէ պահքը հարկաւորուեց փափկութեան դրախտի մէջ, ինչքա՜ն աւելի հարկաւոր է մեզ այս փշոտ աշխարհում, այս հրապոյրների, այս մեղքերի աշխարհում: Եթէ պահքը հարկաւորուեց առաջին անմեղ մարդկանց, փորձութեան հանդիպելուց առաջ, ի՛նչքան աւելի հարկաւոր է մեզ՝ մեղաւորներիս, այս փորձութեանց աշխարհում. եթէ վերք ստանալուց առաջ հարկաւորուեց սպեղանին (դեղը), ի՜նչքան աւելի հարկաւոր է վէրք ստանալուց յետոյ: Եթէ մեղքը մեր դէմ զինուելուց առաջ զէնք հարկաւորուեց, ի՜նչքան աւելի այդ զէնքը հարկաւոր կը լինի մեզ մեղքի դէմ դուրս գալու ժամանակ:

Պահեցողութեան զօրութի՞ւնն ես ուզում իմանալ: Ասա՛ տեսնեմ, ի՞նչպէս պատահեց, որ Դաւիթը մարգարէական շնորհք ստացաւ. պահեցողութեա՛մբ: Ինչո՞վ Աննան կարողացաւ մարգարէանալ Յիսուսի մասին. նրանով, որ գիշեր-ցերեկ ծառայում էր տաճարում աղօթքով ու պահքով: Ինչի՞ համար Յովհաննէս Մկրտիչը «մեծ ի ծնունդս կանանց» կոչուեց Յիսուսից. իր պահեցողութեա՜ն համար: Ի՞նչն էր պատճառը, որ անառակ որդին դարձաւ իր հօր տունը. պահեցողութեան զօրութի՛ւնը: «Ես,-ասում է,-այստեղ սովից մեռնում եմ»: Եթէ ստիպողական քաղցը, եթէ ակամայ պահքը այդքան փրկարար եղաւ, ինչե՜ր չի անի կամաւոր պահքը:

Քրիստոսից յետոյ պահեցողութեան օրէնքը սրբացրին Նրա սուրբ առաքեալները՝ պահելով ու պահել տալով ամէն շաբաթ երկու օր, Զատկից առաջ էլ՝ քառասուն օր: Առաքեալներն ասում են քեզ. ո՜վ անարգ կաւ, ազատն Աստուած քեզ համար, քո փոխարէն բռնուեց և Իր հրաշագործ ձեռքերը քո պատճառով կապուած՝ մատնուեց հրէից ձեռքը. երկինք ու երկիր ստեղծողը, քեզ մեղքի գերութիւնից ազատելու համար, կախուեց Գողգոթայի անարգ փայտից և խաչուեց, քո

հոգին կենդանի պահելու համար Իր հոգին աւանդեց. այս պատճառով քեզ վրայ սուրբ պարտք ենք դնում չորեքշաբթին պահել Յիսուսի մատնութեան յիշատակի և ուրբաթը Նրա խաչելութեան ու մահուան յիշատակի համար, այլև քառասնօրեայ պահք ենք սահմանում և եկեղեցու սուրբ սեղանը ծածկում քո աչքից, ինչպէս Աստուած Ադամին դրախտից դուրս գցելուց յետոյ փակեց նրա առաջ փափկութեան դրախտի դռները, որպէս զի սուրբ պահեցողութեամբ պատրաստես քեզ Քրիստոսի սուրբ Յարութեանն արժանանալու համար:

Քառասնօրեայ պահքը շատ խորհրդաւոր է: Քառասուն տարի տևեց իսրայէլացոց պանդխտութիւնը անապատում, մենք էլ քառասուն օր պահելով՝ երկնային զատիկը պէտք է տօնենք. չէ՞ որ մենք էլ պանդուխտ ենք այս երկրում և մեր աւետեաց երկիրը երկինք է: Քառասուն տարի մեղանչեց Մանասէ թագաւորը, Աստուած նրան միայն քառասուն օր տուեց ապաշխարելու: «Օր ընդ տարւոյ եդի քեզ»,-ասում է. մի տարուայ մեղքիդ դէմը մէկ օր պահք դրի: Քառասուն օր պահեցին Նինուէացիք՝ երեք օր ծոմ կենալով. թագաւորն իջաւ գահից, քուրձ հագաւ, մոխրի վրայ նստեց, մարդ ու անասուն ոչինչ չկերան, ոչինչ չխմեցին, առ Աստուած աղաղակեցին: Ողորմելի՜ էր այն հարուստ ու բազմամարդ քաղաքի տեսքը: Եզների բառաչը, ոչխարների մայոցը, անասնոց կաղկանձը, մանկանց ու կանանց ողբ ու լացի հետ խառնուած, աշխարհք էր դղրդում, քարեր սասանեցնում: Եւ պահքը փրկարար եղաւ. Աստուած հաշտուեց մարդու հետ, Նինուէն չկործանուեց: Մովսէսն ու Եղիան էլ քառասուն օր պահեցին, մէկը՝ սարի վրայ, միւսը՝ ճանապարհին: Ինքը աշխարհի Փրկիչն էլ, քառասնօրեայ պահքով պնդուելով, պատրաստւում էր թշնամու դէմ: «Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ»: Ի՜նչ եմ լսում: Տէ՛ր, միթէ Քեզ է՞լ է հարկաւորել պահքը, միթէ Դու է՞լ ես պահեցողութեան կարիք զգացել: Դու, որ առատ ձեռքդ բաց ես անում և լցնում, լրացնում բոլոր արարածների պէտքերը, Դու է՞լ ես քաղցել: Այո՛, գիտեմ միտքդ. Դու պարտք ունէ-

իր վճարելու, չես ուզեցել պարտական մնալ: Առաջին Ադամը չկարողացաւ պահել իրան, չկարողացաւ պահել Աստուծոյ հրամանը, կերաւ արգելուած պտուղը, իսկ Դու՝ երկրորդ Ադամդ, պահում ես՝ նրա պարտքը վճարելու համար: Նա կերաւ, մահ մտցրեց աշխարհ, Դու պահում ես, որ կեանք տաս քաղցած աշխարհին: Նա փորձուեց սատանայից և չպահելով՝ յաղթուեց, Դու եկար փորձուեցիր նրանից և խաղք ու խայտառակ անելով՝ յաղթեցիր: Ի՜նչ գեղեցիկ խրատ մեզ համար՝ պահքով զինուել թշնամու դէմ և միշտ նոյն թշնամու դէմ: Ինչպէս երգում է շարականը. «Այսօր պահօք ճշմարտութեան ելցուք ի լեառն սրբութեան ընդ Քրիստոսի՝ պատերազմել ընդ թշնամւոյն»:

Իրանք առաքեալները ի՞նչպէս պահեցին: Պօղոսը պահեց շատ շատ անգամ, Պետրոսը գրեթէ ոչինչ չէր ուտում. միայն օրը մի դանկի լուբիա: Մատթէոսը բանջարով ու ընդեղէնով էր կերակրւում: Յակոբոսը մսից ու գինուց խպառ հրաժարուեց: Նախնի քրիստոնեայք մեզ պէս տեսակ տեսակ պասուայ կերակուրներ ու խորտիկներ չէին ուտում, այլ բաւականանում էին միայն հացով ու աղով, որից և մեծ պահքը կոչուեց աղուհաց: Պահքը մի սանձ է, որով հոգին կառավարում է մարմինը, ինչպէս կառապանը ձիերին, և չէ թողնում, որ մարդս ընկնի: Պահքով հանգչում է սրտի բոցը, պահքով հալածւում են հեշտութիւնները և թոչնում ցանկութիւնները: «Պահքը,-ձայն է տալիս մեր առաջին հայրապետ սուրբ Լուսաւորիչը,-զօրացնում է մեր հոգևոր կեանքը և խափանում է մարմնաւոր անկարողութիւնները, որովհետև մէկի զօրանալու միջոցին միւսը տկարանում է: Ինչպէս որ լեշակեր թռչունները անխնայ ուտելուց դժուարութեամբ են թռչում և հեշտութեամբ որսացւում իսկ սակաւակերները արագաթռիչ են և դժուարբռնելի, այնպէս էլ որկրամոլ ու չափաւոր մարդն է: Պահքը հզօր պարիսպ է և ամուր դուռ, որ խափանում է խորամանկ թշնամու մուտքը: Պահքը հանգցնում է ցանկութեանց բորբոքուած հուրը. որովհետև ինչպէս որ կրակը փայտի պակասելուց հանգչում է, այնպէս էլ որկրամոլութիւնն ու արբեցութիւնը պա-

կասելով՝ ցանկութեանց բոցը հանգչում է, և նրա տեղը բորբոքւում են սրբութիւնն ու արդարութիւնը՝ պնդեալ պահքով: Պահքը ախտերի ծովածուփ ալիքների դէմ մի խաղաղ նաւահանգիստ է և ամէն վտանգից ազատ պահելով՝ հասցնում է կեանքի նաւահանգիստը»:

Բայց՝ ով պահեցողութեան իսկական նպատակը հասկանում է, չպէտք է տանջի մարմինը, այլ պէտք է զրկի նրան այն ամէն վայելքներից, որոնք անվայել են մեր քրիստոնէական կեանքին: Մարմինը մի բեռն է, որ պէտք է թեթևացնել՝ նաւը ազատելու համար: Մարմինը մի գերի է, որ միշտ կամենում է տէր լինել: Քրիստոնեան պէտք է խիստ վարուի իր մարմնի հետ: Եւ սրա համար ոչ թէ պէտք է մի օր պահել, հինգ օր չպահել, այլ պէտք է շարունակ պահել, հարկաւոր է պահել ամէն օր, ամբողջ կեանքում: Մի ժամանակ Եփեսոս անունով մի քաղաքում, անկարգ կերուխումի ետևից ընկած բազմութեան մէջ մեծ աղմուկ բարձրացաւ: Աղմուկը դադարեցնելու համար խնդրեցին Հերակլիտոս անունով փիլիսոփային, որ մի բան խօսի ժողովրդին: Կռապաշտ փիլիսոփան բեմ բարձրացաւ, վեր առաւ մի բաժակ, սառը ջուր լցրեց, գցեց մէջը մի քանի հատ ոսպ ու սիսեռ և խմելով այդ խառնուրդը՝ հեռացաւ հրապարակից, առանց մի խօսք ասելու: Սրանով ուզում էր ասել թէ՝ աղմուկների առաջն առնելու համար պէտք է հեռու պահել ժողովրդին անհաշիւ կերուխումից և չափաւորութեան մէջ կրթել նրան:

Երբ մարդուս բնութիւնը իրան հարկաւոր եղած ուտելիքն ու խմելիքն ուզում է, դա քաղց է ու ծարաւ. բայց հարկաւոր եղածը ստանալուց յետոյ՝ էլի է ուզում ուտել խմել, դա որկրամոլութիւն է: Առանց ուտել խմելու, ի հարկէ, չենք կարող ապրել, նշանակում է՝ պէտք է ուտենք խմենք՝ ապրելու համար, ոչ թէ ապրենք՝ ուտել խմելու համար: Անչափ ուտել խմելուց շատերն են մեռնում, բայց քիչ ուտելուց ոչ ոք չէ մեռնում: Պէտք եղածից աւելի ուտելը ոչ թէ սնունդ է, այլ՝ թոյն և ամէն հիւանդութեան պատճառ: Ի՞նչ էր պատճառը, որ հին ժամանակ մարդիկ ապրում էին ութ հարիւր, ինն հարիւր տարի: Սուրբ Գիրքը պատասխանում է. «Մարդուս

կեանքը պահւում է հացով ու ջրով», այսինքն՝ պարզ ու հասարակ սնունդով: Այն ժամանակուայ մարդիկ միս չէին ուտում, տեսակ տեսակ կերակուրներ չէին ուտում, կերածները հաց էր ու պտուղ, խմածները՝ ջուր: Մարդիկ յետոյ հնարեցին համով կերակուրները և ընտիր, թանկագին խմիչքները, որոնք պատճառ դարձան կեանքի հետզհետէ կարճանալուն: «Որկրամոլութիւնից շատերը մեռան,- ասում է Սուրբ Գիրքը,-իսկ չափաւոր ուտող խմողն իր կեանքն է երկարացնում»: Վենետիկցի մի հարուստ ազնուական չափաւոր կեանք անցկացնելու մասին մի գիրք ունի գրած, որի մէջ իր մասին պատմում է, թէ մինչև երեսունհինգ տարեկան դառնալը, անչափ ուտել խմելու պատճառով, միշտ հիւանդոտ կեանք է անցկացրել, միշտ դեղերի կարօտ, բայց երբ սկսել է ուտել խմելուն չափ դնել, էլ ամենևին հիւանդութիւն չէ ունեցել և ապրել է իննսունհինգ տարի: Իսկ մի բժիշկ, որ հարիւր քառասուն տարի ապրեց, երբ հարցնում էին այդքան երկար ապրելու պատճառը, պատասխանում էր, «սեղանից այնպէս եմ վեր կենում, որ դեռ ախորժակ եմ ունենում ուտելու»:

Բայց վատն այն է, որ որկրամոլութիւնը ոչ միայն մարդուս առողջութեանն է վնասում, կեանքը կարճացնում, այլ և զանազան մեղքերի պատճառ դառնալով՝ հոգին էլ է սպանում: «Գիրացա՛ւ, ստուարացաւ և լայնացաւ,-ասում է Սուրբը Գիրքը,- և եթող զՏէր Աստուած՝ զԱրարիչ իւր»: Ուտել խմելով փորն ու գլուխը հաստացրեց, ասում է, և իր Ստեղծողից հեռացաւ: Իսկ կերուխումի տնից մինչև անառականոցը մի քայլ է: Այս պատճառով, երբ սուրբերը մարմնական փորձութիւն էին զգում, իսկոյն ծոմ էին կենում, սովորական կերակուրներից էլ հեռու էին կենում և այդպիսով իրանց ներսի կրակը մարում: Անչափ կերուխումի հետևանքը այնքան վնասակար է մեր հոգևոր կեանքին, որ դրա դէմ Ինքը Յիսուս էլ է ձայն բարձրացնում. «Զգո՛յշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ»: Զգուշացէ՛ք, ասում է, չլինի թէ ուտել խմելուց միտքներդ պղտորուի, սիրտներդ ծանրանայ, հոգիներդ թմրի, որովհետև կարող է պատահել,

որ յանկարծ վրայ հասնի ձեզ մահը, այն էլ ոչ միայն ժամանակաւոր, այլև յաւիտենական մահը: Յիսուս ոչ միայն զգուշացնում է չափազանց ուտել խմելուց, այլև վայ է տալիս. «Վա՜յ ձեզ, որ յագեալք էք»: Վա՜յ ձեզ, ասում է, որ կերել կշտացել էք, վա՜յ ձեզ, որ կեանքի խաչերը թողած՝ նորանոր փափուկ կեանք էք ստեղծում ձեզ համար: Յիսուս վայ է տալիս, Պօղոս առաքեալը՝ բացատրում. «Զի այդպիսիք Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնին»:

Որկրամոլի միւս տեսակն արբեցողն է, որի համար ոչ այնքան ուտելը, որքան խմելը մի պահանջ է դարձել: Արբեցողը անասունից էլ վատթար է, որովհետև եթէ փորձես նրան չափից աւելի խմեցնել, սպանես էլ՝ չի խմի, միայն մարդն է, որ բաւական խմելուց յետոյ պատրաստ է նորից խմելու: Պէտք է տեսնել, թէ մեր եկեղեցական հայրերն ի՜նչ փառաւոր անուններ են տալիս արբեցողութեանը: Մէկն ասում է՝ արբեցողութիւնը կամաւոր դիւահարութիւն է, անօրէնութեան մայր և ամէն առաքինութեան թշնամի: Միւսը թէ՝ գինովութիւնը մի ախորժելի դիւահարութիւն է, մի անուշ թոյն և ծանր մեղք, որովհետև գինովացածը ոչ միայն մեղք է գործում, այլև ինքը հէնց ոտքով գլխով մեղք է:

Այո՜, արբեցողը մարդկութեան նախատինք է: Մարդուս կատարելութեանց մէջ ամենից մեծն ու ազնիւը իր խելքն ու բանականութիւնն է: Խենթը խելք ունեցողի ամէն արածն անում է, բայց որովհետև բանականութիւնը կորցրել է, վրան խղճում ենք: Ո՜րքան աւելի թուք ու մուրի է արժանի այն թշուառականը, որ իր կամքով զրկում է իրան այդ մեծ կատարելութիւնից՝ բանականութիւնից՝ Աստուծոյ թանկագին պարգևից: Բայց բանականութեան կորուստից աւելի բարոյական անկումն է մեծ կորուստ: Արբեցողը ամենից առաջ կորցնում է կանոնաւոր աշխատելու սովորութիւնը: Տեսնում ես՝ մարդը առաջ գործունեայ, աշխատող, իր ոտքին գլխին նայող մի մարդ էր, բայց գինու սիրուց դարձաւ անհոգ, ծոյլ, սրիկայ: Սիրտը աշխատանքից կտրած, որդոց,

ընտանիքի հոգսը մտքից հանած, ինչ ասում են, ինչ ուզում են, ամէն բանի էլ «բան չունե՜ս» ասելով՝ թրև է գալիս մի գինետնից միւս գինետուն և իր կրքին բաւականութիւն տալու համար ոչ մի բանից չէ քաշւում, ոչնչից չէ հրաժարւում: Ահա՛ թէ ինչ տեղից է առաջ գալիս ընտանիքի կործանումը, աղքատութիւնը և յանցանքներ գործելու եռանդը:

Եթէ գերեզմանները բացուեն, հազարաւոր մարդիկ կը յայտնեն մեզ, որ իրանց կրած վշտերի ու թշուառութեանց մեծ մասը առաջ է եկել անչափ գինի և օղի գործածելուց: Հաշուել են, որ անձնասպանութեան չորս դէպքից մէկը կատարւում է գինի ու օղի գործածելուց, աղքատանալու երեք դէպքից երկուսը առաջ է գալիս արբեցողութիւնից, բանտերում եղող երեք կալանաւորից երկուսին, գինին ու օղին է ներս խռկել այնտեղ: Խելագարութիւնը, յանցանքները առաջ են գալիս արբեցողութիւնից: Գողութեանց, սպանութեանց և դատարաններ քաշքշուելու գլխաւոր պատճառը արբեցողութիւնն է: Սուրբ Գիրքը Եսայի մարգարէի բերանով վայ է տալիս արբեցողներին. «Վա՜յ նրանց,~ասում է,~որոնք լուսանալուն պէս գինետներն են շտապում»: Իսկ Պօղոս առաքեալը աւելի կարճ ու խիստ է խօսում. «Արբեցողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն», որովհետև արբեցողութիւնն ամէն չարութիւն, ամէն անառակութիւն անել է տալիս մարդուս: Եւ այդ բոլորը առաջ է գալիս ինչի՞ց. նրանից, որ մարդիկ մոռացել են, թէ ինչ է նշանակում պահք:

Յիսուս աղօթքի մասին խրատելուց յետոյ շատ յարմարապէս իսկոյն պահքի մասին է խօսում՝ ցոյց տալու համար, որ դրանք իրարից անբաժան պէտք է լինին: Սուրբ Ոսկեբերանն էլ է ասում. «Տկար է աղօթելն առանց պահոց»: Թոյլ է աղօթքն, ասում է, եթէ պահքը նրան չէ ամրապնդում: Ինչո՞ւ: Որովհետև աղօթելիս մենք հոգևորապէս ենք նուիրւում Աստուծուն, իսկ պահելիս նուիրւում ենք թէ՛ հոգով ու թէ՛ մարմնով, որով լինում ենք Աստուծուն մատուցած մի անուշահոտ ողջակէզ, և մեր զոհը լինում է կատարեալ:

ԲԱՆ Գ

Ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք յաւետարանն:
Մարկ. Ա 15

Մինչև կոկորդը մեղքի մէջ խրուած մարդկութեանը Յիսուս երկու հրաման է արձակում՝ ապաշխարել և հաւատալ Աւետարանին: Բայց Աւետարանի շատ խրատներ, Յիսուսի շատ պատուիրանքներ, եկեղեցու շատ պահանջներ մեր ժամանակում միայն գրքերում ենք տեսնում, եկեղեցում լսում. իրօք ոչ մի տեղ չեն պահպանւում: Աղօթքից սառած ժողովրդից, պահեցողութիւնը մոռացած քրիստոնէից, մեղքը արհամարհող մարդուց ի՞նչ ունինք զարմանալու, որ ապաշխարութեան չէ դիմում, մեղքերը չէ զղջում: Այս աշխարհասէր ժողովրդի մէջ աւելի հեշտ կարելի է գտնել իրանց հոգու վրայ հսկող, իրանց անմեղութիւնը պահպանող մարդիկ, քան թէ ապաշխարող մեղաւորներ: Այն մարդը, որ չէ զգում, թէ վէրք է ստացել, ի՞նչ կը մտածի սպեղանիքի մասին. նա, որ չէ խոստովանում, որ ինքը հիւանդ է, ի՞նչ կարիք ունի բժիշկի դիմելու: Մեղքն ու մեղանչելն էլ հոգի կորցնող բան չէ թւում մեզ, ուստի սովորական երևոյթների կարգն է անցել: Կա՞յ այնպիսի մարդ, որ կա՛մ մտածութեամբ, կա՛մ խօսքով, կա՛մ գործով մեղանչելիս չլինի. աւելի ճիշտն ասենք. կա՞յ այնպիսի մի քրիստոնեայ, որ հէնց այդ երեք կերպովն էլ մեղանչելիս չլինի: Կարո՞ղ ենք մէկ օր մթնեցնել, կարո՞ղ ենք մի քայլ փոխել, որ կամ աչքներովս չտեսնենք մեղքը կամ ականջներովս չլսենք: Ո՛չ և ո՛չ: Անցել են այն ժամանակները, երբ մեղքը ծանր էր գործողի համար, զզուելի՝ լսողի համար, սոսկալի՝ տեսնողի համար: Իսկ այժմ մեղքը իր բոլոր կեղտոտ, ապականիչ կողմերով գործւում է մեր աչքի առաջը, հրապարակի վրայ, բարի լուսի հետ, և սակայն տեսնում ենք անտարբեր, անցնում ենք անուշադիր: Բայց սուրբերից մէկն ասում է. «Եթէ ես գիտենայի, թէ իմ մտքի մի խորհուրդը, իմ սրտի մի ցանկութիւնը, իմ ձեռքի մի գործը ուղղակի առ

Աստուած չպէտք է նայի, Աստուծոյ ուզածի պէս չպէտք է շարժուի, կը ցանկանայի, որ ոչ միտք ունենայի, ոչ սիրտ, և ոչ ձեռք»:

Դանակի, որի հարուածը մարմինն է վիրաւորում, լեզուի, խօսքի պատճառած վիշտը սիրտն է վիրաւորում, բայց մեղքի հարուածը հոգին է վիրաւորում ու աղտոտում: Եթէ հոգին կարելի լինէր տեսնել, ամօթից պէտք է կարմրէինք՝ տեսնելով նրան սևացած, բծերով լի, ուռոյցներով պատած և զազրատեսիլ: Եթէ մարմնի թանձրութեան և ոսկրների կարծրութեան միջովը երևում է նրա տգեղութիւնը, ի՞նչ կը լինէր, եթէ մերկ լինէր:

Մեղքի տուած վնասները շատ շատ են: Եթէ մի քաղաքում մահը կոտորած է անում, թէպէտ շատերն են մեռնում, բայց շատերն էլ ազատւում են: Եթէ մրրիկը կարկտահար է անում մի այգի և վնասում շատ պտուղների, շատերն էլ մնում են անվնաս: Եթէ ծովը ալէկոծւում է և մի քանի նաւ խորտակում, մի քանիսն էլ ազատւում են: Բայց երբ մեղքը մտնում է մեր հոգին, ամէն լաւ բան աւերում, ամէն բան ոչնչացնում է: Մեղքը ոչ միայն մեր մարմինն է քայքայում, մեր հոգին ապականում, այլ և Աստուծուն է վիրաւորում: Եթէ մէկը փչացնում է թագաւորի պատկերը կամ նշանաւոր նկարիչի մի նկարը, նա դրանով վիրաւորում է թագաւորին, նկարչին: Իսկ Աստուած երկնային թագաւորն է և ամենքի նկարիչն ու արուեստաւորը. ուրեմն մեղքը, որ մեզանում Աստուծոյ պատկերն է փչացնում, Աստուծուն է վիրաւորում: Եթէ մէկը քաղաքում, օրէնքի հակառակ, աղմուկ է բարձրացնում, անկարգութիւն անում, նա դրանով բարկացնում է ոստիկանութեանը. իսկ մեղքը Աստուծոյ օրէնքներին հակառակ գնալն է, ուրեմն մեղքը բարկացնում է Աստուծուն:

Մեղքը այրում չորացնում է մեր հոգու ջլերը, փշրում խորտակում է մեր խորհուրդների ոսկրները և փչում մարում է մեր մտքի լոյսը: Եթէ մեղքը մեր ամենասիրելի Բարեկամին «սպանեց», մենք էլ նրան մեր ամենագլխաւոր թշնամին պէտք է համարենք: Մեր «Տիրոջն ու

Ուսուցչին» սպանողին մեզ սպանող պէտք է համարենք, այս պատճառով պէտք է զինուե՛նք նրա դէմ մեր բոլոր ուժով ու հնարներով: Իսկ եթէ յաղթուենք կռուի մէջ, ապաշխարութեան պէտք է դիմենք:

Աստուած շուտ չէ աչքից գցում մեղաւորին. Նա ամէն հնար ու միջոց տալիս է նրան դարձի գալու համար և շուտ չէ ձեռք վեր առնում նրանից: Մանասէ թագաւորին քառասուն տարի ժամանակ տուեց, ջրհեղեղի դարու մեղաւորներին՝ հարիւր տարի, Իսրայէլացւոց ազգին՝ հազար հինգ հարիւր տարի: Բայց սոսկալի պատիժ է, եթէ Աստուած թողնում է մեղաւորին իր մեղքի մէջ, եթէ ձեռք է վեր առնում նրանից՝ թողնելով որ իր սրտի ուզածն անի: Եւ վա՜յ այն մեղաւորին, որի բանը յաջող է գնում աշխարհումս. նշան է թէ՝ զոհ պէտք է գնայ Աստուծոյ բարկութեանը: «Այս ի՛նչ բան է,-աղաղակում է Երեմիա մարգարէն,-որ չարերի ճանապարհները յաջողուած են»: Բայց շուտով էլի ինքն է պատասխանում. «Գիտեմ, գիտեմ, ո՜վ Աստուած, Դու նրանց ժողովում ես կոտորելու համար»:

Մեղքերի բեռից թեթևանալու միակ միջոցը ապաշխարութիւնն է, եթէ միայն մարդս, զգալով իր մեղաւորութիւնը, ուղղուել, Աստուծուն մօտենալ է կամենում: Ապաշխարութիւնը զղջացողի համար երկրորդ աւազան է: Ինչքան որ քրիստոնեայ չեղող մարդու հարկաւոր է մկրտութիւնը, այնքան էլ մեղաւոր քրիստոնէին հարկաւոր է ապաշխարութիւնը, որովհետև թէ մէկով և թէ միւսով մեղքերը լուացւում են: Ջուրն ու անձրևը տեսանելի կրակն են հանգցնում, իսկ ջերմ արցունքը մեղքի կրակն է հանգցնում: Ապաշխարութիւնը զղջացող մարդու վրէժխնդրութիւնն է, որով նա պատժում է իր անձը: Իսկ նա, որ ապաշխարութեան չէ դիմում, մեղքի վրայ մեղք է դիզում, մինչև որ կը պատժուի անհանգչելի կրակով: Մարդս գտնւում է Աստուծոյ և արարածների մէջտեղը, իր ձեռքին է՝ Աստուծոյ կողմը լինել կամ արարածների կողմը: Եւ նա անպատճառ կա՛մ Աստուծոյ կողմն է, կա՛մ արարածների: Երբ մէկը ծանր կերպով մեղանչում է, այն ժամանակ նա մէջքը դարձնում է Աստուծոյ

կողմը, երեսը արարածների կողմը՝ աւելի արարածներին սիրելով, քան նրանց Արարչին: Իսկ երբ մէկը զղջում է իր մեղքը, այն ժամանակ դառնում է առ Աստուած՝ դարձնելով մէջքը արարածների կողմը:

Ծանր բան է մեղքի մէջ ընկնելը, բայց աւելի ծանր է մեղքի մէջ մնալը, վատ բան է վէրքերով խոցոտուիլը, բայց աւելի վատ է վիրաւորուած մնալը, բժշկի ցոյց չտալը: Մարմնաւոր ցաւերի ու վէրքերի համար բժիշկը դառը դեղեր է տալիս, այրում է մեր վէրքերը, բայց հոգևոր բժիշկը՝ սուրբ Եկեղեցին, մեր հոգևոր վէրքերի վրայ այնպիսի զովացուցիչ բալասան է դնում, որ առանց երկար տանջելու մի բոպէում վէրքերը բժշկում է: Մարմնաւոր հիւանդութեանց համար դեղերի ու բժշկի փող պէտք է տալ, եթէ մի բժիշկը չէ օգնում, միւսին պէտք է դիմենք, շատ անգամ մեր տեղում բժիշկ չկայ, սարեր պէտք է կտրենք, ծովեր պէտք է անցնենք, ուրիշ երկրներում բժիշկ ու դեղ փնտռենք. շատ անգամ էլ այնպէս է պատահում, որ ողջ աշխարհը պտտում ենք, բայց բժիշկ ու դեղ չենք գտնում: Իսկ մեր հոգևոր հիւանդութիւնները բժշկելու համար այդ նեղութիւններից ոչ մէկը չէ հարկաւոր. բժիշկն էլ է մեր կողքին, դեղն էլ. և ո՛չ թէ մեր կողքին, այլ հէնց մեր մէջն է: Հոգևոր վէրքերի դեղը սրտի խորքից դուրս եկած հառաչանքն է, արտասուքի երկու կաթիլն է, հոգևոր դեղը երկու խօսք է՝ «Մեղաւոր եմ, Տէ՛ր Աստուած, քաւի՛ր ինձ՝ մեղաւորիս»:

Շատ մարդ, զգալով որ ինքը խրուած է անթիւ մեղքերի մէջ, ամենևին չէ էլ մտածում նրանց միջից դուրս գալու մասին. և զգալով, որ ինքն արդէն կորած է՝ մտքովն էլ չէ անց կացնում ապաշխարելը՝ թողութեան ոչինչ յոյս չունենալով: Բայց շատ կը սխալուենք, եթէ այդպէս դատենք: Երկնաւոր Դատաւորը երկրաւոր դատաւորի պէս չէ դատում: Երկրաւոր դատաւորի հոգը չէ, թէ մէկը, օրէնքի դէմ

մեղանչելով, ծռուել է ուղիղ ճանապարհից և իր համար սև ու մութ ապագայ պատրաստել. նա յիշում է օրէնքի յօդուածը, դատաստան է անում և արժանաւոր պատիժը տալիս: Բայց երկնաւոր Դատաւորը միշտ ներելու մասին է մտածում, երկնաւոր Հովիւը մոլորեալ ոչխարի հոգսումն է, երկնաւոր Հայրը անառակ որդու դարձին է սպասում. «Մեղաւորի մահը չեմ ուզում ես»,-ասում է:

Ուրեմն, թող ոչ ոք չասի թէ՝ սխալուեցի, խաբուեցի, ոտքով գլխով կորայ, էլ փրկութեան յոյս չկայ. ընկայ, կործանուեցի, էլ կանգնելու յոյս չկայ. խաւարեցի, կուրացայ, էլ աչք բաց անելու հնար չկայ. վիրաւորուեցի, մեռայ, էլ յարութեան յոյս չկայ: Նա, որ չորս օրուայ թաղուած Ղազարոսին յարութիւն տուեց, մի՞թէ քեզ, որ կենդանի ես, չի՞ կարող ոտքի կանգնեցնել. Նա, որ Իր սուրբ արիւնը խաչի վրայ թափելով՝ փրկեց քեզ քո առաջին ծնողների մեղքից, աւելի հեշտ չի՞ փրկի քեզ քո սեպհական մեղքերից: Ո՛չ, չպէտք է կորես փրկուելուդ յոյսը. յուսահատութիւնը վտանգաւոր է: Այն հիւանդը, որ բժշկուելու յոյս չունի, արդէն ինքն է հեշտացնում իր քայքայուելը, ինքն է մօտեցնում իր մահը, իսկ այն հիւանդը, որ յոյս ունի բժշկուելու, խնայում է իր անձը և դեղ ու դարման է փնտռում: Այն աւազակը, որ թողութիւն ստանալու յոյս չունի, աւելի յանդուգն է դառնում և ուղղակի դէպի կորուստն է դիմում, իսկ նա, որ թողութեան յոյս ունի, զսպում է իրան, ուղղում է իրան: Քո մեղքերի շատութիւնը չի կարող յաղթել Աստուծոյ ողորմութեանը, քո վէրքը, քո հիւանդութիւնը չի կարող այնպիսի վէրք, այնպիսի հիւանդութիւն լինել, որ «իմաստուն և ճարտարապետ Բժիշկը» չկարողանայ բժշկել: Ուրեմն, մեղանչեցի՞ր, մի՛ կորիր յոյսդ, Աստուած մարդասէր է: Ադամը բանի տեղ չդրեց Աստուծոյ պատուիրանքը, իր կամքը առաջ տարաւ. Աստուած չէ՞ր կարող իսկոյն և եթ փոշի դարձնել նրան: Բայց բաւականացաւ նրան դուրս գցելով դրախտից և նրա դիմացը բնակեցնելով, որ լաւ տեսնի ու իմանայ, թէ ինչ տեղից, ինչպիսի փառքից ու պատուից ընկաւ, որ

տեսնի ամէն օր և ապաշխարութեան կարօտանայ, կրկին իր տեղը դառնալուն արժանանայ: Կայէնը սպանեց իր եղբօրը, բայց Աստուած չսպանեց Կայէնին, այլ թեթև պատիժ տուեց նրան. «Երերուիս ու տատանուիս,- ասեց,-աշխարհիս վրայ, հանգստանալու տեղ չգտնես»: Ի՛նչքան մեծ էր յանցանքը, բայց ինչքան փոքր՝ պատիժը:

* —— ✠ —— *

Փրկուելու, թողութիւն ստանալու ճանապարհը Քրիստոս Ինքն է ցոյց տալիս: Ապաշխարելու համար Նա մի ճանապարհ չէ տալիս, որ չլինի թէ՝ հեռու է, քարոտ է, փշոտ է ասելով՝ դժուարացնես ապաշխարութիւնը: Նա մի քանի ճանապարհ է տալիս քեզ. մէկը չես հաւանո՞ւմ, միւսո՛վը գնա, ամէնքն էլ մի տեղ են տանում:

Ապաշխարելու առաջին, կարճ, ուղիղ ու հանգիստ ճանապարհը զղջումն է, մեղքի խոստովանուելն է: Խոստովանուի՛ր մեղաւորութիւնդ այստեղ և եթ քո ներքին դատաւորի՝ քո խղճի առաջը, քո մէջդ, որպէս զի յետոյ ստիպուած չլինիս տիեզերքի մեծ հրապարակի վրայ երկնաւոր Դատաւորի առաջը մերկացնելու քո ծածուկ պահած մեղքերը:

Դրա համար քեզ զղջմամբ ապաշխարելու մի օրինակ տամ: Եւ որ տեսնես, թէ ամէն կարգի ու աստիճանի մարդ էլ մեղանչում ու ապաշխարում է, և մանաւանդ, թէ շատ մարդ իր մեղքից անհամեմատ մեծ ապաշխարանքի տակ է գցում իրան, ես պէտք է դնեմ քո առաջը ոչ թէ մի սովորական ապաշխարողի, մի հասարակ մահկանացուի, այլ տէրութեան գահի վրայ բազմած, թագով պսակուած, միլիոնաւոր ժողովրդի հրամայող մի թագաւորի ապաշխարութիւնը: Եւ եթէ իմանաս, որ այդ թագաւորը միևնոյն ժամանակ Աստուծոյ Սուրբ Հոգով լցուած մի հոյակապ մարգարէ է՝ այն մեծ մարգարէն, որի խօսքերի վրայ՝ իբրև անգին մարգարտի, իբրև մեղրի խորիսխի վրայ, հաւաքուեցին աշխարհիս բոլոր հայրապետները և, ագահաբար յափշտակելով, եկեղեցու թանկագին սեպհականութիւնը չինեցին, առաւօտ, ճաշ ու

երեկոյ նրա խօսքերը հնչեցրին քրիստոնէից ականջին,- այն ժամանակ դու աւելի կարիք կը զգաս նրա օրինակից ամաչելու, նրա փորձից ոգևորուելու, այն ժամանակ դու տեսած կը լինես ճշմարիտ ապաշխարողի մի ամենալաւ օրինակը:

Այդ մեծ ապաշխարողը Դաւիթ թագաւորն է՝ Իսրայէլի մարգարէն, հոգևոր բանաստեղծը, իր ոսկեթել քնարի լարերի վրայ Աստուծոյ գործքն ու անունը փառաւորող երկնային աշուղը: Ի՞նչ էր դրա մեղքը. շնութիւն և սպանութիւն: Մարգարէն ոտքի տակ տուեց Աստուծոյ երկու պատուիրանքը՝ մի՛ շնար, մի՛ սպանաներ. խլեց օտարի կինը և մարդուն սպանել տուեց պատերազմի դաշտում: Այդ ժամանակ Դաւիթը քառասունինն տարեկան էր և տասնհինգ տարուայ թագաւոր:

Ողջ Երուսաղէմը դղրդուեց՝ այդ անսպասելի լուրը լսելով. բարի մարդիկ տրտմեցին, չարերը խնդացին: Իսկ Դաւիթը մօտ մի տարի մնաց իր մեղքի մէջ և ունեցաւ մի որդի: Եւ քանի որ նա խնդում ու ցնծում էր նորածին մանկան վրայ, քանի որ նա արբած էր մեղքից և ինքն իրան կորցրել, ահա Աստուած ուղարկեց նրա մօտ Նաթան մարգարէին: Եկաւ հասաւ վէրքի բժիշկը. մարգարէն՝ մարգարէի մօտ, հպատակը՝ թագաւորի մօտ:

Նաթանը նրան ասեց.

- Մի քաղաքում բնակում էին երկու մարդ, մէկը այնքան հարուստ էր, որ իր անասունների ու նրանց տեսակների թիւն անգամ չգիտէր, իսկ միւսը՝ այնքան աղքատ, որ մի գառն ունէր միայն: Նա այդ գառը աչքի լսի պէս էր սիրում, ուստի և իր աղքատիկ կերակրից էր մասը հանում նրան, խմեցնում էր իր միակ ամանից և անկողին մտնելիս նրան իր ծոցումն էր քնեցնում: Մէկ օր մի ճանապարհորդ հիւր եկաւ հարստի տունը: Հարուստը քար կտրուեց, սիրտ չարեց իր հիւրի համար մի ոչխար մորթել, խլեց աղքատից նրա հոգու հատոր գառնուկը, մորթեց և նրա մսից կերակուր պատրաստեց իր հիւրի համար:

Դաւիթը, որ դեռ չէր հասկացել այդ առակի միտքը, բարկացաւ ու

գոռաց.

- Աստուած գիտէ, որ այդ անխիղճ հարուստը չարագործ է և մահուան արժանի, իսկ մորթած գառան փոխանակ կը վճարի եօթնապատիկը:

- Այն հարուստ մարդը դո՛ւ ես, թագաւո՛ր, - ասեց Նաթանը,- ինքդ վճռեցիր քո պատիժը:

Մարգարէի այս խօսքերը սուր նշտարի պէս ծակեցին թագաւորի սիրտը. երկիւղից լեզուն կապուեց, և միայն այսքանը ասեց. «Մեղա՜յ, Տէ՛ր»:

Նաթանը շարունակեց.

- Այսպէս է ասում Աստուած. «Ես քեզ օծեցի Իսրայէլի թագաւոր, ես ազատեցի քեզ Սաւուղի ձեռքից, ես հպատակեցրի քեզ Իսրայէլացոց բոլոր տասներկու տոհմը: Եթէ այս քիչ է, դրանից աւելին կանեմ: Իսկ դու ինչո՞ւ անարգեցիր Իմ պատուիրանքները: Դու կինը խլեցիր և մարդուն անողորմաբար սպանել տուիր: Այս պատճառով սուրը չի հեռանայ քո տնից, ազգուտակով կը ջնջեմ քեզ»:

Սարսափած Դաւիթը ասեց դողալով.

- Ես մեղանչեցի Աստուծոյ առաջը:

- Իսկ Աստուած ներում է քեզ,- վրայ բերեց Նաթանը,- դու չես մեռնի:

Բայց Դաւիթը չբաւականացաւ դրանով: Նա հանեց թագաւորական ծիրանին և քուրձ հագաւ, իջաւ ոսկի աթոռից և նստեց չոր գետնին՝ մոխրի վրայ: Նիհարեցրեց իր անձը պահքով. ուտում էր մոխրախառն կերակուր, խմում էր արտասուախառն գինի, գիշեր-ցերեկ լաց ու կոծով ու յորդահոս արցունքով կուրացրեց իր աչքերը, որոնք մեղանչելու առաջին պատճառն էին դարձել, և թէպէտ միայն մի գիշերուայ մեղքով աղտոտեց իր ամուսնական անկողինը, բայց այն աղտը լուանալու համար՝ քանի կենդանի մնաց՝ ամէն գիշեր արցունքով թրջեց իր անկողինը: Եւ այդ անում էր այն մտքով, որ ինչպէս իր արարքից իր ողջ տէրութիւնը գայթակղուեց, այնպէս էլ ուզում էր, որ ամէնքն իմանան իր բոլոր սրտով առ Աստուած դառնալը:

- Տէ՛ր, իմ մեղքը ամէն բոպէ աչքիս առաջն է, - ասում էր: Ուզում

է ասել՝ թէպէտ Դու Քո անչափ ողորմութեամբ թողիր իմ մեղքը, բայց ես չեմ մոռանայ երբէք: Յիշում եմ այն կինը, որին խաբեցի, յիշում եմ նրա ամուսինը, որին սպանել տուի, յիշում եմ ժողովուրդը, որին գայթակղեցրի, յիշում եմ այս բոլորը և ողբում:

Դաւիթը Աստուծոյ ողորմութեանն արժանանալու համար շատ բան կարող էր յիշեցնել Նրան: Շատ անգամ էր պատերազմել նա հեթանոսների դէմ, շատ անգամ ի սէր Աստուծոյ ներել էր իր թշնամիներին, զարմանալի բարեպաշտութեամբ պատուել էր ուխտի տապանակը և այլն: Բայց նա դրանցից ոչ մէկը չյիշեց՝ գիտենալով, որ երբ մարդ մի անգամ մեղանչում է, արած բոլոր առաքինութիւնները ոչնչանում են:

Դաւիթը աւելի այն պատճառով էր իրան մեղաւոր ճանաչում, որ ուրիշ շատ բարիքների հետ Աստուած տուել էր նրան մարգարէական ոգի և տուել էր այնպէս առատ-առատ, որ նա ոչ միայն Իսրայէլի, այլ և «մարգարէից թագաւոր» է կոչւում:

- Աչքդ հեռացրո՛ւ իմ մեղքերից, Տէ՛ր, -ասում է նա, որով կարծես Աստուծուց խնդրում է, որ պարտապանի ձեռագրի պէս ոչ թէ իր մօտ պահի, որ ամէն կարդալիս ստիպի նրան պարտքը վճարել, այլ բոլորովին ջնջի, պատռի, որ էլ իրաւունք չունենայ պահանջելու:

Շնացող թագաւորից յետոյ ահա և մի շնացող կին՝ Մարիամ Մագդաղենացի: Դա իր երկրում ամենքին յայտնի մի հրէայ կին էր՝ շատ մեղքերի տէր: Տեսաւ իր մեղքերը, սոսկաց, հառաչեց և վճռեց դառնալ առ Աստուած և էլ չբաժանուել Նրանից: Հէնց որ նա լսեց, թէ Յիսուս ճաշի է հրաւիրուած փարիսեցի Սիմոնի տանը, խսկոյն գնաց, ոտքն ընկաւ. ոչինչ դժուարութիւն, ոչինչ արգելք չկարողացաւ նրա ճանապարհը փակել: Փոքր բան չէր նրա պէս մի ազնուական կնոջ համար ապաշխարողի զգեստով երևալ այն քաղաքում, որտեղ ամենքին յայտնի էր իր վարքը. հեշտ չէր առանց կանչուելու երեւալ սեղա-

նի վրայ, բոլոր հիւրերի առաջ, մի հպարտ փարիսեցու դիմացը, որ նրան պէտք է անարգէր դրա համար: Բայց նա, մեղքերի սաստիկ խայթից, դրանցից ոչ մէկը բանի տեղ չդրեց և իր մէջ ասեց. «Մեղաւոր երեւալուց չամաչեցի, ապաշխարող երևալու համա՞ր պէտք է ամաչեմ. Աստուծուց չվախենալով՝ ինձ աշխարհին յանձեցի, ինձ Աստուծուն յանձնելու համար աշխարհի՞ց պէտք է վախենամ»:

Այս պատճառով իր աչքերը, որ անպարկեշտ բաների նայելու վրայ էր բանեցրել, իր մեղքերը լալու վրայ բանեցրեց. իր արցունքով թրջելով Յիսուսի ոտքերը՝ մազերը, որ իբրև գլխի զարդ էր բանեցրել, Յիսուսի ոտքերը սրբելու վրայ բանեցրեց. անուշահոտ իւղը, որով իր մազերն էր օծում, թափեց Յիսուսի գլխին. ոտքերը, որոնցով դէշ ճանապարհներն էր գնում, Յիսուսի արքայութեան նեղ ճանապարհը գնալու վրայ բանեցրեց: Մի խօսքով՝ Մարիամը որոշեց վարքը ուղղել, սուրբ կեանք անց կացնել և արեց: Թողեց իր ծանօթները, որոնց էլ չերևեցաւ երբէք, ապաշխարողի զգեստ հագած՝ Յիսուսի ետևից գնաց և ամենևին չհեռացաւ Նրանից մինչև Գողգոթայի անգութ տեսարանը, մինչև խաչի վրայ հոգին աւանդելը, մինչև գերեզման իջնելը:

Եւ Յիսուս, հաւանելով ու գովելով դարձի եկող այդ կնոջ արարքը, ասեց այս նշանաւոր խօսքը. «Ամէն աշխարհում, ուր էլ որ քարոզուի Իմ Աւետարանը, ուր էլ կարդացուի Իմ հրաւէրը դէպի երկնային արքայութիւնը, թող յիշուի և այն, ինչ որ արեց դա՝ մահիցս առաջ օծելով Իմ մարմինը»: Եւ այն օրից քարոզւում է Մարիամի արածը ու կը քարոզուի միշտ:

Արժէ լսել, թէ մեր սուրբ հայրերն ու հայրապետներն ինչպէս են ուզում, որ ցոյց տանք մեր մեղքերի ծանրութիւնը: Ահա ի՛նչ զգացմունքներ են ծնեցնում նրանք մեր սրտում, ի՛նչ խօսքեր են դնում մեր բերանը:

«Արարա՛ծ աշխարհ, վրա՛ս նայեցէք, ախտակի՛ց եղէք. երկի՛նք ու գետինք, եկէք ողբացէ՛ք եղկելի անձս. չարեաց ցանկութիւնը ցաւալի տեսքով ցաւեցրեց աչքերս, յանցանքիս վէրքերով վշտանում է հոգիս,

վարանեալ չրջում եմ. ցեխի մէջ խրուած՝ թաւալւում եմ մեղքի մէջ, թո-թափել չեմ կարում. հոգով մեռած եմ, մտքով մոլորուած, մարմնով կամ միայն: Թշնամին հանապազ ինձ կամենում է կորցնել, իսկ Դո՛ւ, Տէր իմ, ա՛յց արա մոլորեալ ոչխարիս: Իմ անօրէնութիւնքը գլխիցս էլ վեր են բարձրացել ու ծանր բեռան պէս դրուած են սրտիս վրայ, իսկ Դո՛ւ, Տէր, յիշի՛ր, որ բարերութեանդ պատկերն եմ: Կեանքի ծովը հանապազ ինձ ալէկոծում է, նաւս ընկղմելու վրայ է, Նաւապե՛տ բարի, հասցրու՛ ինձ աջդ: Մեղքերիս շատութիւնից արժանի չեմ վերև նայելու, երկնից բաձ-րութիւնը տեսնելու, ամենակա՛լ Տէր, թո՛ղ ինձ իմ մեղքերը»:

Ապաշխարութեան երկրորդ ճանապարհը ուրիշի յանցանքը ներելն է: Քրիստոս պարզապէս պայման է դնում մեզ հետ. «Եթէ,- ասում է,- դուք կը ներէք ուրիշներին իրանց յանցանքը, ձեր երկնաւոր Հայրն էլ կը ների ձեր յանցանքը. իսկ եթէ դուք չէք ների նրանց, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ չի ների»: Այս է այն պայմանը, որով կարող ենք թողու-թիւն ստանալ Աստուծուց, ոչ թէ մարդու կողմից առաջարկուած պայ-ման, այլ ուղղակի երկնքից, ուղղակի այն սրտից, որ ներելը սովորեցրեց մեզ աշխարհի միակ ամբիոնից՝ խաչի վրայից: Քահանայք ծաղրում էին, ժողովուրդը՝ հայհոյում, աւազակը՝ անարգում, և այդ բոլորի դէմ՝ Գող-գոթայի վրայ ոչինչ տրտունջ չէր լսւում, ոչ մի գանգատ, ոչ մի յանդի-մանութիւն. լսւում էր միայն մի աղօթք՝ նրանց մեղքը ներելու մասին:

Բայց մեզ վշտացնողներին, մեր սիրտը խոցողներին ներելու համար հինգ գլխաւոր բան չպէտք է մոռանանք:

1. Ներել՝ առանց բացատրութեան, այսինքն՝ առանց յիշելու այն պատճառները, որոնցից առաջ է եկել քո խէթն ու ատելութիւնը դէպի քեզ վիրաւորողը: Սրա պատճառն այն է, որ քանի դու յիշում ես ատելութեանդ պատճառները, այնքան նորոգում ես ատելութիւնդ և փոխանակ ստացած վէրքդ ներողամտութեան ձիթով բժշկելու՝ դու

թէ՛ քո և թէ՛ ուրիշի սրտում նոր նոր վէրքեր ես բաց անում:

2. Ներել ամէն անգամ: Հրէաները երկու անգամ էին ներում, երրորդ անգամ հարուածի տեղ հարուած էին տալիս, վէրքի տեղ՝ վէրք: Իսկ Պետրոս առաքեալը, իր համբերութեան չափը ցոյց տալու համար, դարձաւ Յիսուսին ասեց. «Տէ՛ր, ինձ վիրաւորողին քանի՞ անգամ ներեմ, եօ՞թն անգամ»: «Ո՛չ թէ եօթն անգամ,-պատասխանեց Յիսուս,- այլ եօթանասուն հատ եօթ անգամ»: Օ՜հ, կը մտածես դու, մօտ հինգ հարիւր անգա՜մ: Բայց այդպէս չպէտք է հասկանալ, սիրելի՛ս, որով-հետև սիրտը թուերի հետ գործ չունի: Այլ Յիսուս, այդքան հեռացնե-լով ներելու սահմանները, ուզում է մեզ հասկացնել, որ ներելը չի կարելի չափի ու սահմանի տակ դնել. ուզում է ասել՝ միշտ պէտք է նե-րես, որովհետև քանի համարես, ոչ թէ ներած, այլ նորոգած կը լինես:

3. Ներել առանց տեղի, ժամանակի ու անձի պայմանի: Ինչ որ կա-րելի է ներել այստեղ, այն չպէտք է տեղափոխես մի ուրիշ տեղ. ինչ որ կարելի է ներել այսօր, պէտք է ներես այսօր և եթ. ինչ որ կարելի է ներել առանց վկայի, պէտք է ներես առանձին, սրտագէտ Աստուծոյ առաջը: Եթէ ներում ես մի յանցանքը, պէտք է ներես բոլոր յանցանք-ները. եթէ ներում ես մի հակառակորդի, պէտք է ներես հէնց ամեն-քին: Այսպիսի ներումը կը լինի կատարեալ ներում: Բայց երբ վիրաւ-որանքի ներելը ուզում ես որ անպատճառ պատահի այս կամ այն յար-մար տեղում, եթէ յետաձգում ես մի այլ յարմար ժամանակի, եթէ նե-րում ես ուրիշների առաջը, եթէ ներում ես մէկին, չես ներում ամեն-քին, եթէ ներում ես չնչին յանցանքը, լռում ես մեծերի մասին, դու այդպիսով ճիւղերը կտրատում ես, իսկ արմատին ձեռք չես տալիս, վէրքը միշտ վէրք է մնում:

4. Ներել մշտապէս: Երբ դու ներում ես միայն սրբութիւն ընդունե-լու ժամանակ, իսկ յետոյ նորից սրում ես նետերդ հակառակորդիդ սիրտը կրկին խոցոտելու համար, դու այդպիսով ներած չես լինում: Այդպէս էր անում աննեռող Սաւուղ թագաւորը: Հեզ Դաւիթը, Գողի-

աթի դէմ կռուի դուրս գալով, իր կեանքը վտանգի ենթարկեց, որ ազատի իր թագաւորի կեանքը, սրբի նախատինքը Իսրայէլի ճակատից, բայց Սաւուղը գեղարդը ձեռքից բաց չէր թողնում, միշտ լարուած էր մնում Դաւթի դէմ: Իսկ դու պէտք է ներես մի անգամ ընդ միշտ:

5. Ներել՝ առանց դիրքը քննելու: Պէտք է ասես՝ մեծը, հարուստը, գիտունը ես եմ, նա՛ պէտք է ինձնից ներում խնդրի. չպէտք է ասես՝ այսինչ գործում յանցաւորը ես չէի, նա էր, ուրեմն նա՛ պէտք է ներում խնդրի: Ինչպէս հարիւր ռուբլու գողը չի կարող արդարանալ նրանով, որ հարիւր է գողացել, ոչ թէ հազար, այնպէս էլ նա, որ ինքը չունի խէթ իր ընկերոջ դէմ, այլ ընկերն ունի իր դէմ, չի կարող ասել՝ ես չպէտք է գնամ նրա դուռը, նա՛ պէտք է գայ իմ դուռը ինձնից ներում խնդրելու: Ինչպէս որ որդին չէ պատուում իր հօրը, երբ անարգում է իր եղբօրը, ինչպէս ծառան չէ պատուում իր տիրոջը, երբ չէ կատարում նրա կամքը, այնպէս էլ ոչ ոք չի կարող ասել, թէ փառաւորում է Աստուծոյ անունը, երբ արհամարհում է իր եղբօրը:

Ապաշխարութեան բոլոր տեսակներն էլ լուանում են մեր մեղքերը և դառնում երկրորդ աւազան: Դեռ չէ եղել մի ապաշխարող, որ իր սիրտը կոտրի Յիսուսի առաջը և չփրկուի: Մատթէոսը երէկ մաքսաւոր, անողորմ կողոպտիչ էր, այսօր բազմած է երկնքում: Պետրոսը՝ իր Աստուծուն և ուսուցչին ուրացողը, այսօր փառքով է պսակուած: Պողոսը՝ երէկ հայհոյիչ և եկեղեցի հալածող, այսօր «ընտրութեան անօթ», Աստուծոյ մօտ է հանգստանում: Աւազակը՝ երէկ իբրև մարդասպան խաչուած, այսօր արքայութեան մէջ է նստած:

Էլ ինչո՞ւ ենք ծուլանում, շտապենք մի այսպիսի ողորմած Տիրոջ մօտ, որ բազուկները տարածած՝ մեզ է սպասում: Բայց Աստուած, տեսնելով մեր դանդաղութիւնը, դուրս է գալիս, կանգնում արքայութեան դռների մօտ և ձայն տալիս. «Եկէ՛ք Ինձ մօտ, ամէն վաստակածնե՛ր ու բեռնաւորներ, եկէ՛ք հանգստացնեմ ձեզ»:

Հոգևոր բժիշկը մեծ գին չէ պահանջում, ձրիաբար է առաջարկում ամէն ցաւի դեղը: Հիւա՞նդ ես, ասում է, ես ձրի եմ բժշկում. մտի՛ր սենեակդ, բե՛ր Ինձ արտասուք ինչքան կարողանաս, մի կաթիլ էլ որ լինի, բաւական է քեզ երկրորդ անգամ մկրտելու և առաջին փառքիդ հասցնելու համար: Մեղաւո՞ր ես. ես ողորմած եմ, չեմ եկել կանչելու արդարներին, այլ քեզ պէս մեղաւորներին՝ արդարութեան ճանապարհով: Ծարա՛ւ ես. մի՛ դանդաղիր, ես կենաց աղբիւրն եմ. ով ծարաւ է, թող Ինձ մօտ գայ և յաւիտեան չի ծարաւի: Քաղցա՛ծ ես. մի՛ լքանիր, «ես եմ հացն կենաց՝ երկնքից իջած». ով այս հացից ուտի, յաւիտեան կապրի: Մե՛րկ ես. ես քեզ պատմուճան եմ և վերարկու, միայն չարութիւններից մերկացի՛ր, և ես կըհագցնեմ քեզ առաջին հանդերձդ:

Տե՛ս ինչքան սիրեցի քեզ: Երկիրը քեզ համար ստեղծեցի, երկինքը քեզ համար յօրինեցի, արքայութիւնը քեզ համար պատրաստեցի, անկեալ հրեշտակների տեղը քեզ համար թողի: Քեզ համար Աստուածս մարդացայ, ամէն անարգանք կրեցի, անձս զոհեցի, արիւնովս մեղքերդ լուացի, քեզ Հօրս հետ հաշտեցրի: Էլի ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ, ասա՛, ես սովոր եմ ամէն տեսակ ծառայութեան: Եթէ մատնիչիս ոտքերը լուացի, քեզ՝ ես առաւել. դու մի կաթիլ արցունք թափի՛ր Իմ կոնքը, ես Յորդանանի առատութեամբ շնորհքներ թափեմ վրադ: Ինչո՞ւ ես փախչում Ինձնից, արի մո՛տ, ես չեմ բարկանում, չեմ մեղադրում, չեմ յայտնում մեղքդ, չեմ յանդիմանում, որովհետև ողորմած եմ, որովհետև Իմ ստեղծածն ես, Իմ պատկերն ես, Իմ նմանութիւնն ես: Դժուար բան չեմ պահանջում քեզնից, միայն դարձի՛ր Իմ կողմը, և ես կը դառնամ քո կողմը: Դէ՛հ, մի՛ ամաչիր, արի՛ մօտս:

Այո՛, սիրելիս, գնանք Յիսուսի մօտ, քանի որ լսում ենք Նրա ողորմած ձայնը. «Եկէ՛ք Ինձ մօտ»: Քանի որ Նա մեզ սիրելով է Իր մօտ կանչում, գնա՛նք մօտը: Եթէ ոչ՝ կը գայ ժամանակ, երբ Նա մեզ կասի՝ Կորէ՛ք աչքիցս, բայց այն ժամանակ ո՛ւշ կը լինի:

ԲԱՆ Դ

Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է Նա եւ արդար՝ առ ի թողուլ մեզ զմեղս մեր:
Ա Յովհ. Ա 9

Ապաշխարութիւնը կատարեալ անելու համար՝ բացի զղջումից կարևոր է և խոստովանութիւն: Խոստովանութեան հրաւէրի ձայնը առաջին անգամ դրախտումն ենք լսում: Հէնց որ Ադամը մեղանչեց Աստուծոյ հրամանի դէմ, իսկոյն Աստուած՝ ամենատես բնութիւնը, չտեսնող ձևանալով, քաղցրութեամբ դէպի խոստովանութիւն է հրաւիրում առաջին մեղաւորին՝ ձայն տալով նրան. «Ադա՛մ, ո՞ւր ես»: Ուզում է ասել՝ Ադա՛մ, Ես արդէն տեսայ, որ դու մեղանչեցիր, բայց չե՞ս խոստովանուի, որ արածդ մեղք է, թողութիւն ստանալ չե՞ս կամենայ: Արի դու ինձ լսի՛ր, խոստովանուի՛ր և կարդարանաս: Մի և նոյնն է կրկնում և Եսայի մարգարէն. «Ասա՛ անօրէնութիւններդ և կարդարանաս»: Իսկ Սողոմոնը պարզաբանում է. «Ով ծածկի,- ասում է,- իր մեղքերը, չի արդարանայ, իսկ ով պատմի ու յանդիմանի, կը սիրուի»: Եւ երբ առաքեալն ասում է. «Լուացարուք, սրբեցարուք», ոչ թէ մեր կերակրոտ ամանեղէնի մասին է ասում, այլ մեր սիրտն ու խիղճը լուանալու և սրբելու մասին է ասում, որովհետև իսկոյն վրայ է բերում. «և ընկեցէ՛ք զչարիս յանձանց ձերոց», այսինքն՝ խոստովանուեցէ՛ք ձեր մեղքերը:

Իր մեղքերը քահանայի մօտ խոստովանուողը ինքն իր դէմ է դուրս գալիս, ասես թէ ամբաստանում է իրան, իր արարքներն է յանդիմանում, որովհետև խոստովանուել նշանակում է իր արածը յայտարարել, իրան մեղադրել: Դրա համար է որ մեծ ապաշխարող Դաւիթը ձայն է տալիս գովելով. «Ի՜նչ սիրուն բան է խոստովանուել Աստուծոյ և Նրա քահանայից առջև»:

Խոստովանութիւնը թեթևացնում է մեղքի ծանրութիւնը: Խոստովանութիւնը որտեղից դուրս է գալիս, իր ժանգոտ ամանը ոսկու պէս

փայլեցնում է: Խոստովանութիւնը ապաշխարողի պարիսպ է, գլորեալի կանգումն, երկնքի բացող, երկնաքաղաքն առաջնորդող: Մեղաւո՞ր ես. հազար բարեգործութիւն էլ որ անես, բայց արած մեղքերդ չխոստովանուես, սուտ է, զուր է, թէ աղօթես, թէ պահես, թէ ողորմես, թէ ճգնես, առանց խոստովանութեան անկարելի է, որ թողութիւն գտնես:

Բայց քանի որ խոստովանութիւնը այսչափ հարկաւոր պահանջ է ամէն մեղաւորի համար, մարդ զարմանում է և ապշում, թէ ինչպէս կան դեռ ևս մեղաւորներ, որոնք այնպէս ուշ ուշ են խոստովանւում և աւելի քաղցր ու ախորժ են համարում հանգիստ մնալ իրանց մեղքերի մէջ՝ նման անբան անասունների, որոնք սիրով ընկղմւում են տղմի մէջ և յամառութեամբ մնում այնտեղ: Այս է պատճառը, որ Աստուած մարգարէի բերանով աղաղակում է. «Ես վրէժ կը պահանջեմ նրանցից, որոնք խրուած են իրանց տղմի մէջ»:

Պարտքդ ուշացնելով՝ պարտքից չես ազատւում. լաւ կանես, որ քանի քիչ է, վճարես, որպէս զի հետզհետէ շատանալով՝ չծանրանայ ուսիդ: Մի տարի ձեռքդ մի՛ լուանա, կը տեսնես՝ ինչպէս է մրոտւում. նորից մաքրելու համար ինչքան սապոն, լիմոն բանեցնես, ինչքան լուանաս, սրբես, սևութիւնը միշտ կը մնայ, բծերը չեն անցնի: Այդպէս էլ՝ ինչքան քննես սիրտդ, խիղճդ, միշտ մի նոր կեղտ կը գտնես լուանալու համար: Այդ պատճառով, քանի մեղքերդ գլխիցդ չեն բարձրացել, մտի՛ր սրտիդ խորքը, լաւ քննի՛ր, ամէն կողմ մա՛ն արի, ամէն անկիւնը քրքրի՛ր և կարծածիցդ աւելի այլանդակ գարշութիւններ կը գտնես: Ի՜նչ ես ուշացնում. Աստուծոյ դէմ յայտնի մեղանչելուց չես քաշւում, քահանային ծածուկ խոստովանուելո՞ւց ես քաշւում:

Յիսուս, Իր տեղը քահանայ դնելով երկրիս վրայ, դրել է նրա ձեռքը և քո մեղքերիդ թողութիւն տալու և չտալու իշխանութիւնը՝ ասելով. «Ում որ դու արձակես երկրիս վրայ, նա արձակուած կը լինի երկնքումը, և ում կապէս երկրիս վրայ, կապուած կը լինի երկնքումը»: Ասա՛ տեսնեմ, քահանան ի՞նչպէս պէտք է գործածի իր այդ աստուա-

ծատուր իշխանութիւնը, եթէ դու, շարունակ ուշացնելով, զանցառութեան տաս և չխոստովանուես նրա մօտ քո մեղքերը: Կուզե՞ս միթէ, որ ինչպէս պատահի, այնպէս անի. մէկին արձակի, միւսին կապի: Ուրեմն, եթէ նա լաւ պէտք է գործածի իր իշխանութիւնը՝ արժանաւորին արձակում տալով, անարժանին չտալով, պէտք է գիտենայ մեղքերիդ թիւն ու ծանրութիւնը: Իսկ եթէ դու չյայտնես մեղքերդ, քահանան ի՞նչպէս թողութիւն տայ կամ չտայ: Դատաւորը ի՞նչպէս կարող է ազատել կամ պատժել յանցաւորին, եթէ լաւ չգիտենայ նրա բոլոր արածները: Եւ ահա քահանան Քրիստոսի պէս, որ դատաստանի օրը գալու է դատելու ամենիս, նստում է դատողական աթոռի վրայ, իսկ խոստովանուողը, ինչպէս մեղադրեալ, ձախակողմեան դասի մեղաւորների նման՝ չոքում է նրա ձախակողմը՝ գլխակոր և ամօթալից:

Տե՛ս, Աստուած չէ ուղարկում քեզ հրեշտակի մօտ խոստովանուելու, որ չլինի թէ նրա սրբութիւնը աչքիդ առաջ ունենալով՝ երկիւղ կրես մեղքերիդ արժանաւոր պատիժ ստանալուդ մասին: Այլ ուղարկում է քեզ նման մարդու մօտ, որ գիտէ իր տկարութեամբ քո տկարութիւնը չափել և մարդասիրութեամբ օգնել, որովհետև ինքն էլ Աստուծոյ մարդասիրութեանն է կարօտ, ուստի և ներողամիտ կը լինի դէպի քո մեղքերը: Դու պէտք է շնորհակալ լինես, որ Աստուած մեղքերիդ թողութեան իրաւունքը քահանային է տուել և քո զղջման ու նորոգման գործը թեթևացրել: Այսպէ՛ս մտածիր: Եթէ թագաւորը ասէր մի մահապարտի. «Քեզ կը ներեմ ու մահից կազատեմ, եթէ գնաս արած յանցանքդ պատմես իմ փոխանորդին», իսկոյն ուրախ ուրախ չէ՞ր վազի դէպի փոխանորդը իր յանցանքը խոստովանուելու: Ուրեմն, պէտք է շտապել քահանայի մօտ, որ Աստուծոյ միջնորդն է և մարդու բարեխօսը:

Մեղքերդ քահանայի մօտ խոստովանուելուց առաջ հարկաւոր պատրաստութիւնը պէտք է տեսնես: Պէտք է մաքրես սիրտդ, հանես նրա միջից ամէն խէթ, նախանձ, ատելութիւն, իսկ դրա համար պէտք

է հաշտուես այն ամէն մարդու հետ, ում որ և է կերպով վիրաւորել ես կամ ումից վիրաւորուել ես: Քրիստոնէից այնքան է հարկաւոր ընկերոջ սիրտ շահելը, հոգին գրաւելը, որ եթէ մարդ առաջ հաշտ չլինի իր ընկերոջ հետ, Աստուծոյ հետ ոչ մի կերպով չի կարող հաշտուել:

Դու պէտք է մէջդ մի սրտաքննութիւն անես, պէտք է միտքդ բերես, թէ ինչ տեղեր ես եղել, ում հետ ես ապրել, ինչ գործով ես պարապել վերջին խոստովանութիւնից առաջ: Պէտք է մտածես մեղանչելուդ բոլոր հանգամանքների մասին, պէտք է աչքի առաջ ունենաս քո կացութիւնը, աստիճանը, հասակը, ժամանակը, երբ սկսել ես մեղանչել, որքան ես մնացել մեղքի մէջ, այն անձը, ում հետ մեղանչել ես, այն անձինք, որոնց գայթակղեցրել ես, և թէ ինչպէս ես մեղանչել: Այս բոլորի վրայ պէտք է օրինաւոր ուշք դարձնես, որպէս զի խոստովանութիւնդ անհաշիւ և անզգոյշ չլինի, ինչպէս առաքեալն էլ ասում է. «Եթէ մեր անձը քննէինք, չէինք դատապարտուի»:

Ահա մէկը մօտենում է քահանային՝ խոստովանուելու: Բայց ինչի՞ց դրդուած. մի՞թէ յիրաւի մի ներքին պահանջ է զգում: Ո՛չ, մօտենում է, որովհետև ուրիշներն էլ են մօտենում. մօտենում է, որովհետև խոստովանուելը «ադաթ է», և մօտենում է շատ անգամ ոչ թէ դրա համար նախապատրաստուած, այլ հէնց կանգնած տեղը մտքովը անց է կացրել, որ դա էլ մի պարտք է, մի սովորութիւն է, պէտք է կատարել: Նա մօտենում է՝ յոյսը քահանայի վրայ դրած, գիտենալով, որ ինչ որ նա ասի, ինքն էլ եթէ կարողանայ՝ կը կրկնի, եթէ ոչ՝ «մեղա՛յ Աստուծոյ» հօ՛ կասի:

Շատ քիչ է պատահում, որ խոստովանուողը պատրաստի պատասխան ունենայ: Երբ քահանան հարցնում է. «Ի՞նչ ես արել, որդի՛, ի՞նչ ունես ասելու», եթէ կին է, «Է՛հ, տէրտէ՛ր,-ասում է,-քեզ խօմ լաւ

յայտնի է, երեխանց տէր ենք, չարացնում են, բարկանում ենք, սիրտ-ներս վիրաւորում ենք, ուրիշ ի՞նչ պէտք է ունենամ»: Եթէ տղամարդ է՝ «Դու խօմ լաւ գիտես, տէ՛ր Հայր, փեշաքար մարդ ենք, սուտ էլ ենք խօսում, խաբում էլ ենք, ձեռնաքաշութիւն ենք անում. էսպէս էլ որ չանենք, մի տուն քուլփաթը ինչո՞վ պահենք»:

Շատն էլ քահանայի հարցմունքին ուղղակի պատասխանում է. «Ոչինչ»: Է՜հ, սիրելիս, երբ ոչինչ ասելիք չունես, ինչո՞ւ ես եկել: Եթէ հիւանդ չես, ինչո՞ւ ես գնում բժշկի մօտ: Եթէ կարիք չունես, ինչո՞ւ ես դուռը բաղխում: Եթէ յանցանք չունես, եթէ ոչինչ ասելիք չունես, նշանակում է դու հողեղէն չես, հրեղէն ես, մարդ չես, հրեշտակ ես: Նշանակում է՝ քո սիրտը մարդկային սրտերից չէ, քո միտքը, քո զգայարանքները մարդկային չեն: Նշանակում է՝ աշխարհք իր բոլոր պատրանքներով, կեանքը իր բոլոր հրապոյրներով, գեղեցկութիւնը իր բոլոր կախարդանքով, ոսկին իր բոլոր փայլով, իր բոլոր ոյժով՝ սրանցից ոչ մէկը քեզ վրայ, քո սուրբ սրտի, քո մաքուր խղճի, քո անարատ բարոյականի, քո անախտ հոգու վրայ ոչինչ ազդեցութիւն չէ՞ ունեցել: Նշանակում է՝ դու մի այնպիսի աչք ունես, որին գեղեցկութիւնը չէ գրաւել, որին ոսկին չէ շլացրել. դու մի այնպիսի ականջ ունես, որ երբէք չէ ախորժել գէշ զրոյց լսել, չար խորհուրդներ ընդունել. դու մի այնպիսի լեզու ունես, որ երբէք սուտ չէ խօսել, ոչ ոքի չէ վիրաւորել, ոչ ոքի անուն չէ արատաւորել. դու մի այնպիսի ձեռք ունես, որ ոչինչ չէ յափշտակել, ոչ ոքի վրայ չէ բարձրացել, ոչինչ չէ խարդախել, չէ կեղծել. դու մի այնպիսի ոտք ունես, որ մրջիւն անգամ չէ կոխ տուել, չարութեան ճանապարհ չէ անցել. դու մի այնպիսի սիրտ ունես, որի դռները միշտ փակ են եղել անիրաւութեանց դէմ, որին օտար են գէշ ցանկութիւնները, որին խորթ է մեղք ասուած բանը: Վերջապէս նշանակում է՝ դու ունես մի այնպիսի հոգի, որ իշխում է մտքիդ, սրտիդ և բոլոր զգայարանքներիդ վրայ. մի այնպիսի հոգի, որ ոսկու պէս մաքուր է, բիւրեղի պէս փայլուն:

Եթէ այդպէս է, եթէ դու մի այդպիսի անբիծ, անարատ արարած ես, ուրեմն օրհնուի՜ այն արգանդը, որ քեզ ծնեց, օրհնուի՜ այն տունը, որ քեզ սնեց, օրհնուի՜ և այն աշխարհը, որ քեզ պահեց: Ե՛րթ ի խաղաղութիւն, քահանայի մօտ քեզ համար տեղ չկայ, եկեղեցին քեզպէսների համար չէ, երկիրը քեզ չի կարող կրել իր վրայ, քո տեղը լուսեղէն երկինքն է:

Օ՜րհնած, մէկ աչքդ բա՛ց արա, տե՛ս, թէ այս ապաշխարութեան օրերում եկեղեցին ի՜նչ է ձայն տալիս, ի՜նչ է յիշեցնում, ի՜նչ սովորեցնում: Եկեղեցին այս օրերս իրան մեղքերի ցեխի մէջ շաղախուած, աներևոյթ թշնամուց ծանրապէս վիրաւորուած տեսնելով՝ իր թշուառ վիճակից է գանգատում, օգնութիւն խնդրում.

«Հա՛յր բազումողորմ, խոստովանում եմ Քո առաջև, ինչպէս անառակ որդին, իմ յանցանքներից մաքրի՛ր ինձ, Տէ՛ր, ինչպէս երբեմն մաքսաւորին, և ողորմի՛ր: Մեղա՛յ, Տէր, խոստովանւում եմ իմ յանցանքները, մեղա՛յ, ողորմի՛ր: Իմ մեղքերը ցոյց կը տամ Քեզ, Քրիստո՛ս, որ հոգիների բժիշկն ես և կեանքի տէրը, բժշկի՛ր իմ հիւանդութիւնները: Ամէն ժամանակ իմ աղաչանքն այս է. սրբի՛ր ինձ իմ մեղքերից»:

Եւ ի՜նչ սրտից է բղխում այս խոստովանութիւնը, ի՜նչ կրծքից են թռչում այս հառաչները, ո՜վ է, որ իր յարկը վայոց տուն է չինել, ո՜վ է, որ իր տունը մեղքերի ծով է չինել: Եկեղեցու սիւն, հայրենեաց փառք, ազգի պարծանք, առաքելապատիւ սուրբ Ներսէս Շնորհալին է այդ մեղքերի մէջ կորած, արցունքների մէջ խեղդուած մեղաւորը: Իսկ դու ասում ես՝ անմեղ եմ: Ի՜նչ ենք արդեօք նրա առաջը ես, դու, այս ապականուած աշխարհը: Զէ՜, սիրելիս, արի՛, դու դա՛ս առ այդ սուրբ ուսուցչից, դաս ոչ թէ սովորական իմաստութեան, այլ՝ դաս Աստուծոյ երկիւղի իմաստութեան, անձի խոնարհեցման իմաստութեան: «Ո՞վ իցէ, որ կեցցէ և ոչ մեղիցէ»: Մարդ կը լինի՞, որ ապրի ու չմեղանչի: Ուրեմն, երբ քահանան քեզ հարցնում է՝ ի՞նչ ես արել, որդի՛ս, ասա՛ ի՞նչ չեմ արել, տէ՛ր Հայր, ոտքից գլուխ մեղաւոր եմ, մեղքի գերի եմ,

մի՞թէ լեզուն կարող է պատմել, մի՞թէ խօսքը կարող է նկարագրել այն ամէն չարութիւնները, ամէն անօրէնութիւնները, որ ես արել եմ, իմ մեղքը շատ է քան երկնքի աստղը. քան ծովի աւազը, մեղաւո՛ր եմ, օգնի՛ր անարժանիս:

Մեղաւորը պէտք է խոստովանուի անկեղծութեամբ, առանց ստելու և ամբողջութեամբ յայտնելով իր մեղքերը: Սուտ խօսել այնտեղ, ուր եկել ես ստախօսութիւնդ խոստովանուելու, գողունի կերպով ծանր մեղքերդ թաքցնել նրա մօտ, ում մօտ եկել ես գողութիւնդ խոստովանուելու, դա կրկնակի մեղք է, ի հարկէ. և շատ էլ որ քահանային խաբես, Աստուծուն չես կարող խաբել: Եթէ ճշմարտութեամբ, անկեղծօրէն չես խոստովանում, այդպիսով ոչ թէ չես թեթևանում մեղքերիցդ, այլ նոր նոր մեղքեր ես աւելացնում: Ընդհակառակը՝ ամէն անգամ խոստովանուելիս՝ այնպէս պէտք է մտածես, թէ քո վերջին խոստովանութիւնն է, հոգեվարքի խոստովանութիւնն է: Ով անկեղծ է խոստովանում, նա մօտ է ուղղուելու: Առաջին քրիստոնեայք այս լաւ էին հասկանում, ուստի, ինչպէս սովորութիւն էր, իրանց ծանր մեղքերն էլ խոստովանում էին եկեղեցում, ժողովրդի բազմութեան առաջը, բարեկամների ու թշնամիների, ծանօթի ու անծանօթի առաջը: Բայց մայրախնամ եկեղեցին, գիտենալով իր որդոց թուլութիւնը, զիջող եղաւ և սահմանեց խոստովանուել միայն մի քահանայի առաջ: Սովորութիւնը վերացաւ, բայց հետքը մնաց, այն էլ՝ միայն պատարագիչ քահանայի վրայ, որ դառնալով դէպի ժողովուրդը՝ «Եւ առաջի ձեր, հարք և եղբարք,-ասում է,- զամենայն մեղս, զորս գործեալ եմ». հայրե՛ր ու եղբայրներ, մեծե՛ր ու փոքրեր, ձեր առաջն էլ եմ խոստովանում իմ բոլոր մեղքերը:

Անկեղծութեամբ խոստովանուելու համար ոչինչ չպէտք է ծածկես քահանայից, որովհետև ինչ որ այստեղ ծածկելու լինես մի քահանայի առաջ, այն դատաստանի օրը ստիպուած կը լինես մերկացնելու ողջ աշխարհի առաջը: Այն ժամանակ ամօթից կասես սարերին՝ ընկէ՛ք ինձ վրայ, և բլուրներին թէ՝ ծածկեցէ՛ք ինձ: Այստեղ եթէ անկեղծ խոստո-

վանուես, թողութիւն կը ստանաս, իսկ այնտեղ ոչ խոստովանուելու ժամանակ է, ոչ էլ՝ թողութեան: Մարդասպանն էլ, կախաղան բարձրանալիս, խոստովանում է իր յանցանքը, բայց չէ փրկւում: Այս պատճառով առաքեալը, մեզ դէպի ճշմարիտ խոստովանութիւն յորդորելով, ասում է. «Եթէ ասենք թէ՝ ոչինչ մեղք չունենք, մեզ ենք խաբում, որովհետև ասածներիս մէջ ճշմարտութիւն չկայ, իսկ եթէ չծածկենք, խոստովանուենք, պէտք է հաստատ գիտենանք, որ արդարադատ Յիսուս իսկոյն թողութիւն կը տայ մեզ»:

Խոստովանուելիս քահանան քեզնից մի բան է ուզում միայն՝ քո սիրտն է ուզում: Երբ նա քեզ հարցնում է՝ որդի՛, ի՞նչ ես արել, դրանով ուզում է ասել՝ ամբողջ կեանքդ դու անց ես կացնում սիրտդ մարդկանցից ծածկած, ամբողջ տարին դու այն չես երեւում, ինչ որ կաս, միթէ այս կարճ րոպէներին է՞լ չես բաց անի իմ առաջ քո սիրտը:

Մարդս պէտք է խոստովանուի համեստ կերպով, ամէն բանի մէջ իրան մեղադրելով, ուրիշի արածը չյիշելով, իր արածը խիստ մերկացնելով: Խոստովանուողը, որ գնում է դատուելու, ինքն իր գործի դատաւորը չպէտք է հանդիսանայ, չպէտք է սկսի պաշտպանել իր դատը այլոց դէմ. միակ դատաւորը քահանան է լինելու: Քահանայի մօտ այնպէս պէտք է խօսես, ինչպէս յանցաւորը խօսում է դատաւորի հետ, որ իրան պէտք է ազատի կամ պատժի, ո՛չ թէ ինքնահաւանութեամբ ու պարծենալով: Դու ոչ միայն պէտք է խօսես խոնարհութեամբ, այլ և պէտք է լսես խոնարհութեամբ, երբ խոստովանահայրը քեզ խրատում ու յանդիմանում է: Միթէ դու խելագար չէի՞ր համարի այն հիւանդին, որ կծում է իր վէրքը բժշկող վիրաբոյժի ձեռքը: Եթէ խոստովանուողը գնացել է իրան յանդիմանելու, ուրեմն քահանայի մօտ իրան արդարացնելու տեղը չէ, պատճառներ մէջ բերելու ժամանակ չէ: Շատը՝ հէնց որ իր մեղքը խոստովանում է, իսկոյն պատճառն էլ հետն է բերում: Որը իր մարդու վրայ է

գցում յանցանքը, որը՝ իր կնոջ վրայ, որը՝ որդոց. յանցանքն ուզում է ասել, բայց յանցաւոր չէ ուզում երևալ: «Եթէ այս կինս չստեղծէիր, ես արգելուած պտուղը չէի ուտի»: Այսպէս են խօսում շատերը: Եթէ եկել ես քեզ արդարացնելու, այսինքն՝ մեղքդ ծածկելու, մի և նոյն է թէ չես խոստովանւում: Ի՞նչ օգուտ ունին այդ պատճառանքները, այդ մահանէքը: Մեղքը արուել է. Աստուծոյ դէմ, Աստուծոյ հակառակ գնալու ոչինչ պատճառ չէիր կարող ունենալ. ուրեմն արածդ մեղք է: Խոստովանուիր մեղքդ ոչ թէ պատճառները փնտռելով, այլ դեղը փնտռելով, այն ժամանակ կասեմ, որ դու, այո, խոստովանւում ես: Գաւիթն աղօթում էր. «Տէ՛ր, մի՛ թողներ, որ մեղքերս արդարացնելու համար պատճառներ փնտռեմ». նոյնը պէտք է դո՛ւ խնդրես խոստովանանքի գնալիս:

Խոստովանուելու նպատակն է մեղքերից թեթևանալ, արդարանալ: Բայց չպէտք է կարծես, թէ խոստովանութիւնը քեզ նորից մեղանչելու իրաւունք է տալիս: Ով որ թողութիւն ստանալու յուսով է մեղանչում, նա խաբեբայ է, ոչ թէ խոստովանուող: Եւ անմիտ է այն մարդը, որ ասում է՝ այս մեղքն անեմ, յետոյ խոստովանուեմ, միևնոյն է թէ ասէր՝ այս մեղքն անեմ, յետոյ զղջամ: Աշխարհումս անուանի վիրաբոյժներ շատ կան, բայց ոչ ոք իրան բարձրից ցած չէ գցում, որ յետոյ վիրաբոյժին դուրս ընկած ոսկորը ուղղել տայ: Կրկնուած զղջումը հոգին մաշում է, որովհետև մեղանչելն ու զղջումը սովորական բան է դառնում, արուեստ է դառնում: Եթէ արած մեղքիդ վրայ զղջալուց յետոյ բոլորովին չես նորոգւում, զղջումդ զղջում չէ: Եթէ այն նպատակով չես զղջում ու խոստովանւում, որ միւս անգամ չմեղանչես, եթէ չես որոշում բոլոր ուժովդ մեղքի դէմ դուրս գալ, ապա զղջումդ ու խոստովանանքդ ոչինչ միտք, ոչինչ նշանակութիւն չունի: Այդ է պատճառը, որ Յիսուս ումը բժշկում էր, զգուշացնելով ասում էր՝ «Տե՛ս, դու բժշկուեցիր, էլ չմեղանչես, որ չլինի թէ յետինը աւելի վատ

լինի, քան առաջինը, չլինի թէ աւելի ծանր պատասխանատուութեան տակ ընկնես. որովհետև այն ժամանակ քեզնից կը պահանջուի թէ՛ հին և թէ՛ նոր մեղքերիդ հաշիւը»:

Ի՛նքդ դատիր. միթէ աւելի մեծ պատժի չէ՞ արժանի այն յանցաւորը, որ դատաւորից ներումն է ստացել, բայց նորից ոտնատակ է տալիս օրէնքը: Արժանի՞ է հայրական սիրուն այն որդին, որի յանցանքը ներել է հայրը, և կրկին վշտացնում է նրան առաջուայ յանցանքներով: Աւելի ցաւ չէ՞ պատճառում ծնողական սրտին, երբ հայրը ձեռք է բերում իր որդուն նորից կորցնելու համար: Ձեռք բերած բարիքն ուրախութիւն է, իսկ ձեռք բերած և կրկին կորցրած բարիքը՝ կրկին ցաւ: Այսպէս էլ՝ ով իր մեղքերի թողութիւնը ստանալուց յետոյ էլի առաջուայ անկարգ կեանքն է անց կացնում, նա կրկին պատիժ է պատրաստում իր համար:

Շատ մարդ դժուարանում է խոստովանուել՝ ամաչելով իր մեղքերը քահանայի մօտ թուելուց: Բայց ամաչելու ոչինչ չկայ, որովհետև մարդ ոչ թէ իսկապէս քահանայի առաջն է խոստովանւում, այլ Աստուծոյ առաջը, Յիսուսի առաջը, որ աներևոյթ կերպով ներկայ է խոստովանութեան ժամանակ: Քահանան կարգուած է միջնորդ լինելու Աստուծոյ և մարդու մէջ և երբ նա թողութիւն է տալիս, ինքը չէ՛, այլ Աստուա՛ծ է, որ թողնում է մեղքերը: Ինքը քահանան էլ, չնայելով իր կարգի ու կոչման սրբութեանը, նոյնպէս մի մեղանչական մարդ է և, լինելով սրտերի բարեկամ, ներողամիտ է իր Տիրոջ պէս: Եւ քահանայի առաջը ծունկ չոքելով՝ սրտով պէտք է գնանք Յիսուսի մօտ, պէտք է գնանք հաւատով ու մանկական համարձակութեամբ: Պէտք է գնանք ոչ թէ ինչպէս Պետրոս առաքեալը, որ գնում էր Գեննեսարէթի ջրերի վրայ, ո՛չ թէ նրա պէս պէտք է նայենք մեր մարմնի ծանրութեանը, ջրերի խորութեանը և հողմի ոյժին, այլ միայն պէտք է նայենք Յիսուսին, որ տարածում է դէպի մեզ Իր աջը՝ մեզ մեր մեղքերի ծովից հանելու համար, որ չասի ամէն մէկիս. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր»:

ԲԱՆ Ե

Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, յիս բնակեսցի եւ Ես ի նմա:
Յովհ. Զ 57

Ահա՛, սիրելիս, ապաշխարեցիր, հիմա եկել ես վերջին մեծ գործի համար. եկել ես ճաշակուելու: Միտքդ ի՞նչ է, քաղցա՞ծ ես, կը կշտանա՞ս միթէ նշխարի այն փոքր մասնիկով, ճա՞շ կը դառնայ քեզ համար գինու մէջ թաթախած հացի այն փշրանքը: Ո՛չ, միտքդ ուրիշ է, դու եկել ես հաղորդուելու: Բայց գիտե՞ս հաղորդուելն ինչ է:

Հաղորդուել նշանակում է մասնակից լինել. մասնակից լինել ո՛չ թէ հասարակ հացի, սովորական ճաշի, այլ հոգևոր հացի, մի այնպիսի փառաւոր ճաշի, որ Ինքը Յիսուսն է պատրաստել քեզ համար, մի այնպիսի չտեսնուած, չլսուած ճաշի, որտեղ կոչնատէրն իր հիւրերին հացի փոխանակ տալիս է իր Մարմինը և գինու փոխանակ՝ իր Արիւնը: Եւ այդ սեղանը, որ բացւում է քեզ համար, սովորական, հասարակ մարդու սեղան չէ, թագաւորական ճոխ սեղան է՝ լի Աստուծոյ ամէն բարութիւնով, մի աստուածային սուրբ սեղան, որի վրայ ճաշ պատրաստողը և հէնց ինքը ճաշը Աստուած է:

Ի՜նչ երևելի բան պէտք է լինէր, եթէ մի թագաւոր, սեղան նստած, իր ամանից բաժին ուղարկէր մի աղքատի. ի՜նչքան աւելի, եթէ իր թևից մի կտոր կտրէր և տար նրան ուտելու: Իսկ Յիսուս հաղորդութեան սուրբ խորհրդի մէջ մեզ կերակրում է ոչ թէ Իր սեղանից բաժին ուղարկելով կամ Իր մսից մի կտոր, այլ՝ Իր ամբողջ մարմինը, արիւնը, հոգին և աստուածութիւնը: Մեր Փրկիչը բաւական չհամարեց մէկ լինել մեզ հետ միայն մարդանալով, այլ ուզեց, որ ս. հաղորդութեամբ ամէն մէկիս հետ առանձին միանայ. դրա համար իր անձը խառնեց, շաղուեց մեզ հետ, որ մէկ բան դառնանք, որովհետև «իսպառ սիրեց մեզ»:

Եթէ Յիսուս հրամայէր մեզ, որ ինչ բարիք կը ցանկանանք մեր հոգուն, խնդրենք Իրանից, ո՜ւմ մտքովը կանցնէր խնդրել Նրանից, որ

Իր մարմինն ու արիւնը տայ մեզ: Բայց Ինքը լաւ գիտէր, որ մեր հոգին կենդանի պահելու համար ամենալաւ ու օգտակար կերակուրը Ինքն է. ուստի 33 տարի մեզ հետ ու մեր մէջ ապրելուց յետոյ ուզեց մշտապէս անբաժան լինել մեզնից և երկինք գնալուց առաջ չկամենալով, որ Իր և մեր մէջ Իրանից զատ մի ուրիշ յիշատակ մնայ՝ հաղորդութեան սուրբ խորհուրդը հաստատեց: Նա Իր բոլոր ամենակարող զօրութեամբ, ասում է սուրբերից մէկը, դրանից աւելի բան չէր կարող տալ մեզ: Նա դրանով բաց արեց մեզ համար Իր սիրոյ գանձարանը և ոչ միայն բաց արեց, այլ և դատարկեց բոլորովին:



Բայց քանի՞ անգամ պէտք է հաղորդուել:

Առաջին քրիստոնեայք ամէն օր միասին հաւաքւում էին ու հաղորդւում, որովհետև գիտէին, որ հաղորդութիւնը այն հացն է, որ Յիսուս սովորեցրեց մեզ խնդրել՝ «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»: Գիտէին, որ սովորական հացը մարմնի կենդանութիւնն է պահպանում, իսկ հաղորդութեան հացը՝ հոգու կենդանութիւնը. գիտէին, որ այն գերազանց հացը ուտելով՝ յաւիտեան կարող էին ապրել: Բայց հաղորդութեան տուած օգուտները մի անգամից չէ զգում մարդ, այլ շուտ շուտ հաղորդուելով՝ վերջն է նկատում: Շուտ շուտ և արժանապէս հաղորդուողին նոյնն է պատահում, ինչ որ երեխային: Երեխան իր մեծանալը չէ նկատում, բայց երբ մի տարի առաջ հագած շորը նորից է հագնում, տեսնում է, որ կարճ է գալիս իրան, ապա թէ զգալի կերպով իմանում է, որ ինքը մեծացել է:

Այո՛, առաջին քրիստոնեայք ամէն օր էին հաղորդւում, բայց հիմա՞: «Ի՜նչ խելագարութիւն է,-ասում է ս. Ոսկեբերանը,-Քրիստոս այս սուրբը հացը հանապազօրեայ հաց սահմանեց մեզ համար, բայց շատերը չինել են տարեկան հաց»: Այդ իր ժամանակուայ մարդիկ. իսկ մեր ժամանակ կան շատ մարդիկ, որոնք ոչ թէ տարին մի անգամ, այլ

հինգ տարին մի անգամ են հաղորդւում, իսկ շատերը չեն էլ հաղորդ-ւում: Եթէ այն խելագարութիւն է, հապա ա՞յս ինչ է: Կարելի է դու ասես՝ ես այն պատճառով եմ ուշ ուշ հաղորդւում, որ ինձ սառած եմ զգում Աստուծոյ սիրուց: Միևնոյն չէ՞, եթէ ասես՝ ես կրակին չեմ մօտենում, որովհետև ինձ մրսած եմ տեսնում: Կարելի է քեզ անմե-ղադիր անելու համար պատճառ բերես քո անարժանութիւնը, բայց այդպէս մտածելով՝ դու հրաժարւում ես բժշկից, որովհետև հիւանդ ես: Այն ինչ՝ «բժիշկը ոչ թէ առողջներին է հարկաւոր, այլ հիւանդնե-րին»: Եւ եթէ շուտ շուտ հաղորդուելուն արժանի չես, ուշ ուշ հաղոր-դուելուն ի՞նչպէս արժանի կը լինես. եթէ մի տարուայ մեղքերիդ թիւը շատ ես համարում հաղորդուելուդ համար, երկու տարուայ մեղքերիդ թիւը աւելի չի՞ լինի: Զէ՞ որ միշտ այդպէս ուշացնելով՝ պէտք է այն-քան ուշանայ, որ ամենևին էլ արժանի չես լինի հաղորդուելու: Զար-մանալի՜ է: Ինչ որ Աստուած մեզ վնասակար համարելով՝ արգելում է, այն անում ենք, իսկ ինչ որ օգտակար է համարում, նրանից փախ-չում ենք: Ադամին ու Եւային ասեց՝ այս պտղից չուտէ՛ք՝ կերան, մեզ ասում է՝ առէ՛ք, կերէ՛ք՝ չենք ուտում:

Առաջին քրիստոնեայք ամէն կողմից գնում էին Ձիթենեաց լեռը՝ համբուրելու այն սուրբ տեղը, ուր Քրիստոսի համբարձուելուց յետոյ մնացել էր Նրա ոտքերի հետքը: Իսկ հիմա ամբողջ Քրիստոս բազմած է ս. սեղանի վրայ, և ոչ ոք չէ ուզում մօտենալ Նրան: Այս պատճառով Նա գանգատում է. «Զի՞նչ օգուտ է քեզ յարենէ Իմմէ». ի՞նչ օգուտ ունիս դու,ասում է, Իմ արիւնից. ի՞նչ օգուտ ունեմ ես՝ պատրաստելով քեզ համար այս երկնային կերակուրը, երբ դու, սո-վալլուկ լինելով, հեռու ես փախչում Իմ հացը չուտելու համար: Ո՜հ, ի՜նչ զուր է կորչում Իմ աշխատանքը, ի՜նչ զուր պատրաստեցի քեզ համար այս կենսատու դեղը, երբ հիւանդ լինելով՝ հրաժարւում ես ընդունելուց:

Այն ինչ՝ սուրբերից մէկը հաղորդուելու ցանկութեամբ այնպէս էր

վառւում, որ հաղորդութեան օրը սաստիկ գանգատում էր ժամերի ուշ անցնելուց, և երբ միայն մի՛ ժամ էր մնում, «Մի ժամ միայն մնաց,-ասում էր,-ահա շուտով գալու է ինձ մօտ Յիսուս»: Իսկ մաքրասուն կոյսերից մէկը ասում էր. «Եթէ հաղորդուելուս օրը հարկաւոր լինէր անցնել թշնամեաց սրերի միջից կամ երկնքի մրրկալի կայծակների միջից, ոչինչ երկիւղ չէր կարող արգելել ինձ ս. սեղանին մօտենա-լուց»: Ինչո՞ւ էին դրանք այդպէս բորբոքուած հաղորդուելու սիրով. որովհետև լաւ գիտէին, որ հոգին աւելի է շահւում մէկ անգամ հա-ղորդուելով, քան թէ ամբողջ շաբաթ լոկ հաց ու ջրով պահք պահե-լով: Այս պատճառով երկու տեսակ մարդիկ պէտք է որ անպակաս հաղորդուեն՝ կատարեալները և անկատարները: Կատարեալները՝ որ միշտ կատարելութեան մէջ մնան, և անկատարները՝ որ կատարելու-թեան հասնեն. պէտք է հաղորդուեն ուժեղները՝ չտկարանալու հա-մար, տկարները՝ ուժովանալու համար, հիւանդները՝ հոգևոր հիւան-դութիւնից բժշկուելու համար, առողջները՝ չհիվանդանալու համար:



Հաղորդուելու օրն իսկ, ով դրա համար հարկաւոր պատրաստու-թիւնը չէ տեսել, դեռ ևս ժամանակ ունի պատրաստուելու: Եսայի մարգարէն մարգարէանալուց առաջ տեսիլք է տեսնում, որ սերովբէ-ներից մէկը վկայութեան խորանի «Սրբութիւն սրբոց» կոչուած տե-ղում, ուր միշտ վառ պահւում էր երկնքից իջած կրակը, ունելիքով մի փոքրիկ կտոր է վեր առնում այն կրակից ու դնում նրա բերանը՝ մեղ-քերն այրելու և սիրտը մաքրելու համար: Դրանից յետոյ Եսային ստանում է մարգարէական շնորհք: Այս բանը մեր հայրապետ Շնոր-հալին շարականի մէջ այսպէս է երգում. «Յաստուածային կայծա-կունսն՝ ի սրովբէից անհպելին, անմաքրապէս մերձեցաք՝ զոլ պարտա-պան Քում խորհրդոյ»: Տէ՛ր Յիսուս, ասում է, Քո աստուածային կայ-

ծերին, այսինքն՝ մարմնիդ և արեանդ, անարժանութեամբ մօտեցանք ու պարտական եղանք: Հիմա մտածի՛ր դու. եթէ լուսեղէն հրեշտակը ունելիքի էր կարօտ՝ աստուածային կայծը վեր առնելու համար, հապա մենք ի՞նչ պատրաստութեամբ պէտք է մօտենանք՝ Նրան մեր մէջ ընդունելու: Եւ եթէ զատկական գառն ուտելու համար Յիսուս «մի փառաւոր զարդարուած վերնատուն էր փնտռում», Իրան մեր ներսը ընդունելու համար ի՞նչպիսի փառաց տաճար կը ցանկանար ունենալ: Եթէ Մովսէս մարգարէն օրէնքի տախտակները պահելու համար տապանակ չինելիս ազնիւ անփուտ փայտ էր ընտրում ու մաքուր ոսկով պատում, դու ի՞նչպէս պէտք է պատրաստես քեզ օրէնքներ Տուողին ընդունելու: Եթէ հարիւրապետը վայել չէր համարում Յիսուսին իր տանը ընդունել, եթէ Յովհաննէս Մկրտիչը իրան արժանի չէր համարում Նրա կօշկի կապերը յետ անելու, հապա դու՝ թշուառութեամբ, անգիտութեամբ և չարութեամբ լի մի չնչին արարած, ի՞նչ պատրաստութիւն պէտք է տեսնես: Եւ Յիսուս ինչ փառքով որ փառաւորուեց Թաբոր սարի վրայ, ինչ փառքով որ այժմ բազմած է Հօր աջակողմը, նոյն փառքով գտնւում է և հաղորդութեան նշխարի մէջ:

Մովսէս մարգարէն Քորեբ անունով մի սարի վրայ տեսաւ մի թուփ, որ վառւում էր, բայց չէր այրւում: Նա ուզեց մօտենալ՝ այդ հրաշալի երևոյթը լաւ տեսնելու, յանկարծ թփի միջից լսեց մի ձայն, որ ասում էր. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս, կօշիկներդ հանի՛ր, կանգնած տեղդ սուրբ է»: Միթէ նոյնքան հրաշալի չէ՞ այն սկիհը, որին դու մօտենում ես: Թուփը վառող կրակը Ինքը Աստուած, Ինքը Յիսուսն էր, և այդ սկիհի մէջ հացի ու գինու տեսակով գտնւում է նոյն աստուածային կրակը, որ արժանաւոր ճաշակուողին մաքրում, զտում, կենդանացնում է, իսկ անարժան ճաշակուողին այրում, կիզում, ոչնչացնում է: Հանի՛ր, ուրեմն, կօշիկներդ, յե՛տ արա հոգիդ կաշկանդող բոլոր մեղսական կապերը և այնպէս մօտեցիր սրբութիւն տանելու:

Մոռացիր քեզ շրջապատող ամեն երկրաւոր բան. այժմ քեզ նայում

է քո պահապան հրեշտակը, քեզ նայում են բոլոր երկնային զօրութիւնքը: Դու այժմ ասես թէ վերջին դատաստանի առաջն ես կանգնած, այժմ վճռուելու է քո վիճակը, և դու հաղորդուելու ես՝ կա՛մ յաւիտեան ապրելու, կա՛մ յաւիտեան մեռնելու: Ուրեմն, ասա՛ քեզ ու քեզ՝ Տէ՛ր Յիսուս, յոյսս դնելով Քո անսպառ բարութեան վրայ և անսահման ողորմութեան վրայ՝ ես գալիս եմ, ինչպէս հիւանդը իր Փրկչի մօտ, ինչպէս քաղցածն ու ծարաւը՝ կեանքի Աղբիւրին, ինչպէս աղքատը՝ երկնային Թագաւորին, ինչպէս արարածը՝ իր Արարչին: Ի՞նչ եմ ես, որ մօտենում եմ Քեզ, և ի՞նչ ես Դու, որ հաճում ես խոնարհել դէպի ինձ՝ ինձ համար կենաց հաց և հոգևոր փրկութիւն դառնալու: Հոգիս բորբոքւում է մարմինդ ընդունելու ցանկութեամբ, սիրտս ծարաւ է սրտիդ հետ միանալուն: Ի՞նչպէս կարելի է ճանաչել Քեզ ու չսիրել, Տէր. ի՞նչպէս կարելի է սիրել ու չմիանալ Քեզ հետ: Զարթեցրո՛ւ սիրտս թմրութիւնից, որ հոգով ճաշակեմ քաղցրութիւնդ. լուսաւորի՛ր աչքս, որ լաւ տեսնեմ այս մեծ խորհուրդը. ամրացրո՛ւ ինձ, որ չտատանուեմ հաւատիս մէջ: Մեղաւոր եմ, Տէր, առաջին մեղաւորն աշխարհիս վրայ, բայց է՛լ չեմ ուզում մեղաւոր մնալ: Հաւատում եմ Քեզ, Տէ՛ր, օգնի՛ր անհաւատութեանս: Չեմ համբուրում Քեզ Յուդայի համբոյրով, չեմ փոխի Քեզ ողջ աշխարհի հետ, չեմ ծախի Քեզ ոչ մի գնով, միայն օգնի՛ր ինձ, որ անդատապարտ հաղորդուեմ Քո սուրբ խորհրդին: Լուսաւորի՛ր միտքս, փոխի՛ր սիրտս, ուղղի՛ր կեանքս, սանձի՛ր կրքերս և իբրև Աստուած թագաւորի՛ր վրաս:

Հաղորդուելուց յետոյ եկեղեցին ձայն է տալիս. «Դուք, որ հաւատով ընդունեցիք աստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ և անապական խորհուրդը, շնորհակա՛լ եղէք Տիրոջը»: Սա մի գոհանալու հրաւէր է, երախտագէտ լինելու յորդոր է: Ցիրաւի, ով որ չէ յիշում իր ստացած բարիքը, նա ոչ միայն արժանի չէ աւելի մեծ բա-

րիք ստանալուն, այլ և արժանի չէ հէնց նրան, ինչ որ արդէն ստացել է: Օրինակներ են եղել, որ մարդ իր անձը զոհել է բարեկամի համար. բայց լսե՞լ ես երբ և իցէ, որ մէկը մեռած լինի իր թշնամեաց համար, իր թշնամեաց փոխարէն: Ամէն մեղաւոր Աստուծոյ թշնամին է, բայց Աստուած մեռաւ մեզ համար, մեր փոխարէն: Եւ ի՛նչպէս մեռաւ. ինչ-պէս չեն մեռնում այժմ նոյն իսկ աւազակները: Յիսուս մեռաւ խաչի մահով՝ անարգ ու խայտառակ մահով: Լսե՞լ ես, որ մարդ մեռնելիս կտակի, որ իր մարմինը կտոր կտոր անեն, բաժանեն քաղցածներին, որ նրանք սովամահ չլինին, իր արիւնը խմեցնեն մեռնողներին, որ նրանք չունչ առնեն, կենդանանան: Իսկ Յիսուս, ինչպէս Սիոնի վերնատան մէջ կտակեց Իր աշակերտներին, ամէն օր նորից զենւում է եկեղեցու ս. սեղանի վրայ՝ մաս մաս կտրատուելով, և մենք ճաշակում ենք, որ մեր հոգին յաւիտեան չմեռնի: Ահա՛ թէ որքան մեծ է մեր ստացած բարիքը, բայց ի՞նչպէս պէտք է շնորհակալ լինենք:

Շնորհակալութիւնը պէտք է հաւասարուի ստացած բարիքին, զոհաբերութեանը պէտք է պատասխանել զոհաբերութեամբ: «Մենք էլ Յիսուսի վէրքերի փոխանակ պետք է վերքե՞ր կրենք.Նրա արեան փոխանակ մեր արի՞ւնը թափե՛նք», կը հարցնես դու: Ո՛չ, չսարսե՛ս դրանից. արեան հոտն իսկ սոսկում է պատճառում մեզ: Մեր ժամա-նակում հաւատացեալին էլ խաչը չեն բարձրացնում, այլ խաչով են պսակում: Մենք ունենք ուրիշ վէրքեր, ուրիշ չարչարանք, ուրիշ մահ: Կայ մի ուրիշ Գողգոթայ, կայ մի ուրիշ խաչ, որի վրայ կարող ենք բարձրանալ ու խաչուիլ: Մեր սրտերում բուն դրած չարութիւնները մեռցնելն է այն մահը, որ պահանջում է մեզնից Յիսուս: Մաքուր, ան-բիծ կեանքն է այն խաչը, որի վրայ իբր չարչարուելով՝ խաչւում է մեր սիրտը: Միմեանց օգնելը, իրար սիրելը, սիրով խնդալն է այն սուրբ կեանքը, որ պահանջում է մեզնից անարիւն զոհը: «Մենք շատ ենք,-ասում է առաքեալը,-բայց միասին կազմում ենք մի մարմին, որով-հետև մի հացից ենք հաղորդւում»: Մի հաց ենք ուտում. ուրեմն

ամէնքս էլ մի և նոյն զգացմունքը պէտք է ունենանք, մի և նոյնը մտածենք: Մի բաժակից ենք խմում. ուրեմն մէկ սիրտ պէտք է ունե-նանք, իրար համար միատեսակ պէտք է բաբախեն մեր սրտերը, մի հոգի պէտք է լինենք շատ մարմինների մէջ. ինչպէս Յիսուս բնակում է մեր մեջ մենք էլ՝ Նրա մէջ: Ինքն էլ այդ հրաւէրն է կարդում, այդ խոստումն է անում մեզ. «Ով ուտում է Իմ մարմինը և խմում է Իմ արիւնը, նա Իմ մէջ կը բնակուի, Ես էլ՝ նրա մէջ»:

ԲԱՆԴ

Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է Նա՝ եւ արդար առ ի թողուլ մեզ զմեղս մեր։

Ա. Յովհ. Ա. 9։

Պաշխարութիւնը կատարեալ անելու համար, բացի զղջումից՝ կարեւոր է և խոստովանութիւն։ Խոստովանութեան հրաւէրի ձայնը՝ առաջին անգամ դրախտումն ենք լսում։ Հէնց որ Ադամը մեղանչեց Աստուծոյ հրամանի դէմ, իսկոյն Աստուած, ամենատես բնութիւնը, չտեսնող ձեւանալով, քաղցրութեամբ դէպի խոստովանութիւն է հրաւիրում առաջին մեղաւորին, ձայն տալով նրան «Ադամ, ո՞ւր ես»։

Ուզում է ասել՝ Ադամ ես արդէն տեսայ որ դու մեղանչեցիր, բայց չե՞ս խոստովանուի որ արածդ մեղք է, թողութիւն ստանալ չե՞ս կամենայ։ Ա՛րի, դու ինձ լսի՛ր, խոստովանուի՛ր, և կարդարանաս։ Մի և նոյնն է կրկնում և նոյնի մարգարէն «Ասա՛ անօրէնութիւններդ, և կարդարանաս»։ Իսկ Սողոմոնը պարզաբանում է «Ո՛վ ծածկի, ասում է, իր մեղքերը՝ չի արդարանայ, իսկ ով պատմի ու յանդիմանի, կը սիրուի»։ Եւ երբ առաքեալն ասում է «Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք», ոչ թէ մեր կերակրոտ ամանեղէնի մասին է ասում, այլ մեր սիրտն ու խիղճը լուանալու և սրբելու մասին է ասում։ որովհետև իսկոյն վրայ է բերում «և ընկեցէ՛ք զչարիս յանձանց ձերոց», այսինքն՝ խոստովանուեցէք ձեր մեղքերը։

Իր մեղքերը քահանայի մօտ խոստովանուողը՝ ինքն իր դէմ է դուրս գալիս, ասես թէ ամբաստանում է իրան, իր արարքներն է յանդիմանում, որովհետև խոստովանուել՝ նշանակում է իր արածը յայտարարել, իրան մեղադրել։ Դրա համար է որ մեծ ապաշխարող Դաւիթը ձայն է տալիս գովելով. Ի՞նչ սիրուն բան է՝ խոստովանուել Աստուծոյ և նրա քահանայից առջև»։

Խոստովանութիւնը թեթևացնում է մեղքի ծանրութիւնը։ Խոստովանութիւնը սրտեղից դուրս է գալիս, իր ժանգոտ ամանը ոսկու պէս փայլեցնում է։ Խոստովանութիւնը ապաշխարողի պարիսպ է, գլորեալի կանգումն, երկնքի բացող, երկնաքաղաքն առաջնորդող։—Մեղաւո՞ր ես, հաղար բարեգործութիւն էլ որ անես, բայց արած մեղքերդ չխոստովանուես, սուտ

է, զուր է, թէ աղօթես, թէ պահես, թէ ողորմես, թէ ճգնես, առանց խոստովանութեան՝ անկարելի է որ թողութիւն գտնես։

Բայց քանի որ խոստովանութիւնը այսչափ հարկաւոր պահանջ է ամեն մեղաւորի համար, մարդ զարմանում է և ապշում թէ՝ ինչպէս կան դեռ և՛ս մեղաւորներ, որոնք այնպէս ո՛չ ո՛չ են խոստովանո՛ւմ, և աւելի քաղցր ու ախորժ են համարում հանգիստ մնալ իրանց մեղքերի մէջ, նման անբան անասուններին, որոնք սիրով ընկղմուում են աղմի մէջ և յամառութեամբ մնում այնտեղ։ Այս է պատճառը, որ Աստուած մագարէի բերանով աղաղակում է. «Ես վրէժ կը պահանջեմ նրանցից, որոնք խրուած են իրանց աղմի մէջ»։

Պարտքդ ուշացնելով՝ պարտքից չես ազատուում, լաւ կանես որ, քանի քիչ է՝ վճարես, որպէս զի հետզհետէ շատանալով, չծանրանայ ուսիդ։ Մի տարի ձեռքդ մի լուանայ, կը տեսնես՝ ինչպէս է մրոտուում։ Նորից մաքրելու համար, ինչքան սապոն, լիմոն բանեցնես, ինչքան լուանաս, սրբես սևութիւնը միշտ կը մնայ, բծերը չեն անցնի։ Այդպէս էլ՝ ինչքան քննես սիրտդ, խիղճդ. միշտ մի նոր կեղտ կը գտնես՝ լուանալու համար։ Այդ պատճառով, քանի մեղքերդ գլխիցդ չեն բարձրացել, մաքր սրտիդ խորքը, լաւ քննիր, ամեն կողմ մանր արի, ամեն անկիւնը քրքրիր — և կարծածիցդ աւելի այլանդակ գարշութիւններ կը գտնես։ Ի՞նչ ես ուշացնում։ Աստուծոյ դէմ յայտնի մեղանչելուց չես քաշուել, քահանային ծածուկ խոստովանուելո՞ւց ես քաշուում։

Ցիսուս՝ իր տեղը քահանայ դնելով երկրիս վրայ՝ դրել է նրա ձեռքը և քո մեղքերիդ թողութիւն տալու և չտալու իշխանութիւնը՝ ասելով՝ «Ում որ դու արձակես երկրիս վրայ՝ նա արձակուած կըլինի երկնքումը. և ում կապես երկրիս վրայ՝ կապուած կը լինի երկնքումը։ Ասա տեսնեմ՝ քահանան ի՞նչպէս պէտք է գործածի իր այդ աստուածատուր իշխանութիւնը՝ եթէ դու՝ շարունակ ուշացնելով՝ զանցաւորութեան տաս և չխոստովանուես նրա մօտ քո մեղքերը։ Կուզէս միթէ՝ որ ինչպէս պատահի՝ այնպէս անի՝ մէկին արձակի՝ միւսին կապի։ Որեմն՝ եթէ նա լաւ պէտք է գործածի իր իշխանութիւնը՝ արժանաւորին արձակում տալով՝ անարժանին չտալով՝ պէտք է գիտենայ մեղքերիդ թիւն ու ծանրութիւնը։ Իսկ եթէ դու չյայտնես մեղքերդ՝ քահանան ի՞նչպէս թողութիւն տայ կամ չտայ։ Դատաւորը ի՞նչպէս կարող է ազատել կամ պատժել յանցաւորին՝ եթէ լաւ չգիտենայ նրա բոլոր արածները։ Եւ ահա քահանան Քրիստոսի պէս՝ որ դատաստանի օրը գալու է դատելու ամենիս՝ նստում է դատողական աթոռի վրայ՝ իսկ խոստովանողը՝ ինչպէս մեղադրեալ՝ ձախակողմեան դասի մեղաւորների նման՝ չոքում է նրա ձախակողմը՝ գլխակոր և ամօթալից։

Տես՝ Աստուած չէ ուղարկում քեզ՝ հրեշտակի մօտ խոստովանուելու՝ որ չլինի թէ նրա սրբութիւնը ոչքիդ առաջ ունենալով՝ երկիւղ կրես մեղքերիդ արժանաւոր պատիժ ստանալուդ մասին։ Այլ ուղարկում է քեզ նման մարդու մօտ՝ որ գիտէ իր տկարութեամբ քո տկարութիւնը չափել և մարդասիրութեամբ օգնել՝

որովհետև ինքն էլ Աստուծոյ մարդասիրութեանն է կարօտ, ուստի և ներողամիտ կը լինի դէպի քո մեղքերը։ Դու պէտք է շնորհակալ լինես, որ Աստուած մեղքերիդ թողութեան իրաւունքը քահանային է տուել և քո ղղման ու նորոգման գործը թեթևացրել։ Այսպէս մտածիր։ Եթէ թագաւորը ասէր մի մահապարտի՝ քեզ կը ներեմ ու մահից կազատեմ, եթէ գնաս արած յանցանքդ պատմես իմ փոխանորդին, իսկոյն ուրախ ուրախ չէր վազի դէպի փոխանորդը՝ իր յանցանքը խոստովանուելու։ Ուրեմն, պէտք է շտապել քահանայի մօտ, որ Աստուծոյ միջնորդն է և մարդու բարեխօսը։

Մեղքերդ քահանայի մօտ խոստովանուելուց առաջ՝ հարկաւոր պապրաստոՒՒ-ը պէտք է տեսնես։ Պէտք է մաքրես սիրտդ, հանես նրա միջից ամեն խէթ, նախանձ, ատելութիւն, իսկ դրա համար պէտք է հաշտուես այն ամեն մարդու հետ, ում որ և է կերպով վիրաւորել ես, կամ ումից վիրաւորուել ես։ Քրիստոնէից այնքան է հարկաւոր ընկերոջ սիրտ շահելը, հոգին գրաւելը, որ եթէ մարդ առաջ հաշտ չլինի իր ընկերոջ հետ, Աստուծոյ հետ ոչ մի կերպով չի կարող հաշտուել։

Դու պէտք է մէջդ մի սրտաքննութիւն անես, պէտք է միտքդ բերես թէ՝ ինչ սեղեր ես եղել, ում հետ ես ապրել, ինչ գործով ես զբաղել վերջին խոստովանութիւնից առաջ։ Պէտք է մտածես մեղանչելուդ բոլոր հանգամանքների մասին, պէտք է աչքի առաջ ունենաս քո կացութիւնը, ասոիճանը, հասակը, ժամա-

նակը, երբ սկսել ես մեղանչել, որքան ես մնացել մեղքի մէջ. այն անձը, ում հետ մեղանչել ես, այն անձինք, որոնց գայթակղեցրել ես, և թէ ինչպէս ես մեղանչել։ Այս բոլորի վրայ պէտք է օրինաւոր ուշք դարձնես, որպէս զի խոստովանութիւնդ անհաշիւ և անզգոյշ չլինի, ինչպէս առաքեալն էլ ասում է. «Եթէ մեր անձը քննէինք, չէինք դատապարտուի»։

*
* *

Ահա մէկը մօտենում է քահանային՝ խոստովանուելու։ Բայց ինչի՞ց դրդուած. միթէ յիրաւի մի ներքին պահանջ է զգում։ Ոչ. մօտենում է, որովհետև ուրիշներն էլ են մօտենում. մօտենում է, որովհետև խոստովանուելը ոգին է. և մօտենում է շատ անգամ ո՛չ թէ դրա համար նախապատրաստուած, այլ հէնց կանգնած տեղը մոքսվը անց է կացրել որ գա էլ մի պարտք է, մի սովորութիւն է, պէտք է կատարել։ Նա մօտենում է յոյսը քահանայի վրայ դրած, գիտենալով որ ինչ որ նա ասի, ինքն էլ եթէ կարողանայ կը կրկնի, եթէ ո՛չ «մեղայ Աստուծոյ» հո՛ կասի։

Շատ քիչ է պատահում, որ խոստովանողը պոռչապոչ պոռոնչան ունենայ։ Երբ քահանան հարցնում է՝ ի՞նչ ես արել, որդի, ի՞նչ ունես ասելու — եթէ կին է «է՜հ, տէրտէր. ասում է, քեզ խօմ լաւ յայտնի է, երեխանց տէր ենք, չարացնում են, բարկանում ենք, սիրտներս վիրաւորում ենք, ուրիշ ի՞նչ պէտք է ունենամ»։ Եթէ աղամարդ է՝ «Դու խօմ լաւ գիտես, տէր

հայր, փեշաքար մարդ ենք, սուտ էլ ենք խօսում, խաբում էլ ենք, ձեռնաքաշութիւն ենք անում։ Էսպէս էլ որ չանենք, մի տուն քուլփաթը ինչո՞վ պահենք»։

Շատն էլ քահանայի հարցմունքին ուղղակի պատասխանում է՝ «Ոչինչ»։ Է՜հ, սիրելիս, երբ ոչինչ ասելիք չունես, ինչո՞ւ ես եկել։ Եթէ հիւանդ չես, ինչո՞ւ ես գնում բժշկի մօտ։ Եթէ կարիք չունես, ինչո՞ւ ես դուռը բաղխում։ Եթէ յանցանք չունես, եթէ ոչինչ ասելիք չունես, նշանակում է դու հողեղէն չես, հրեղէն ես, մարդ չես, հրեշտակ ես։ Նշանակում է՝ քո սիրտը մարդկային սրտերից չէ, քո միտքը, քո զգայարանքները մարդկային չեն։ Նշանակում է՝ աշխարհք իր բոլոր պատրանքներով, կեանքը իր բոլոր հրապոյրներով, գեղեցկութիւնը իր բոլոր կախարդանքով, ոսկին իր բոլոր փայլով, իր բոլոր ոյժով – սրանցից ոչ մէկը քեզ վրայ, քո սուրբ սրտի, քո մաքուր խղճի, քո անարատ բարոյականի, քո անախտ հոգու վրայ ոչինչ ազդեցութիւն չէ՞ ունեցել։ Նշանակում է՝ դու մի այնպիսի աչք ունես, որին գեղեցկութիւնը չէ գրաւել, որին ոսկին չէ շլացրել, դու մի այնպիսի ականջ ունես, որ երբէք չէ ախորժել գէշ զրոյց լսել, չար խորհուրդներ ընդունել, դու մի այնպիսի լեզու ունես, որ երբէք սուտ չէ խօսել, ոչ ոքի չէ վիրաւորել, ոչ ոքի անուն չէ արատաւորել, դու մի այնպիսի ձեռք ունես, որ ոչինչ չէ յափշտակել, ոչ ոքի վրայ չէ բարձրացել, ոչինչ չէ խարդախել, չէ կեղծել, դու մի այնպիսի ոտք ունես, որ մրջիւն անգամ չէ կոխ տուել, չարութեան ճանապարհ չէ անցել, դու մի այնպիսի սիրտ ունես, որի դռները միշտ փակ են եղել անի-

բաւութեանց դէմ՝ որին օտար են գէշ ցանկութիւններ-
ը՝ որին խորթ է մեղք ասուած բանը։ Վերջապէս նը-
շանակում է՝ դու ունես մի այնպիսի հոգի՝ որ իշխում է
մտքիդ՝ սրտիդ՝ և բոլոր զգայարանքներիդ վրայ. մի
այնպիսի հոգի՝ որ ոսկու պէս մաքուր է՝ բիւրեղի պէս
վայլուն.

Եթէ այդպէս է՝ եթէ դու մի այդպիսի անբիծ՝ ա-
նարատ արարած ես՝ ուրեմն օրհնուի՜ այն արգանդը՝
որ քեզ ծնեց՝ օրհնուի այն տունը՝ որ քեզ ոնեց՝ օրհ-
նուի՜ և այն աշխարհը՝ որ քեզ պահեց։ Երթ ի խաղա-
ղութիւն՝ քահանայի մօտ քեզ համար տեղ չկայ. եկե-
ղեցին քեզպէսների համար չէ. երկիրը քեզ չի կարող
կրել իր վրայ. քո տեղը լուսեղէն երկինքն է։

Օ՜րհնած՝ մէկ աչքդ բաց արա՝ տես թէ այս ապաշ-
խարութեան օրերում եկեղեցին ի՜նչ է ձայն տալիս՝
ինչ է յիշեցնում՝ ի՜նչ սովորեցնում։ Եկեղեցին այս օրե-
րը՝ իրան մեղքերի ցեխի մէջ շաղախուած՝ աներևոյթ
թշնամուց ծանրապէս վիրաւորուած տեսնելով՝ իր թըշ-
ուառ վիճակից է գանգատում՝ օգնութիւն խնդրում։—

«Հայր բազումողորմ՝ խոստովանում եմ քո առա-
ջև ինչպէս անառակ որդին. իմ յանցանքներից մաքրիր
ինձ՝ տէր՝ ինչպէս երբեմն մաքսաւորին՝ և ողորմիր.
Մեղայ՝ տէր՝ խոստովանուում եմ իմ յանցանքները՝
մեղայ՝ ողորմիր։ Իմ մեղքերը ցոյց կը տամ քեզ՝ Քրիս-
տոս՝ որ հոգիների բժիշկն ես և կեանքի տէրը. բժշկիր
իմ հիւանդութիւնները. Ամեն ժամանակ իմ աղաչանքն
այս է. սրբիր ինձ իմ մեղքերից»։

Եւ ի՜նչ սրտից է բղխում այս խոստովանութիւնը.

ինչ կրծքից են թռչում այս հառաչները. ո՞վ է, որ իր յարկը վայոց տուն է շինել, ո՞վ է, որ իր տունը մեղքերի ծով է շինել։ Եկեղեցու սիւն, հայրենեաց փառք, ազգի պարծանք, առաքելապատիւ սուրբ Ներսէս Շնորհալին է այդ մեղքերի մէջ կորած, արցունքների մէջ խեղդուած մեղաւորը։ Իսկ դու ասում ես՝ անմեղ եմ։ Ի՞նչ ենք արդեօք նրա առաջը ես, դու, այս ապականուած աշխարհը։ Չէ, սիրելիս. արի, դու դաս առ այդ սուրբ ուսուցչից. դաս ոչ թէ սովորական իմաստութեան, այլ դաս՝ Աստուծոյ երկիւղի իմաստութեան, անձի խոնարհեցման՝ իմաստութեան։ «Ո՞վ իցէ, որ կեցցէ, և ոչ մեղիցէ»։ Մարդ կը լինի՞, որ ապրի ու չմեղանչի։ Ուրեմն, երբ քահանան քեզ հարցնում է՝ Ի՞նչ ես արել, որդիս. ասա՝ ի՞նչ չեմ արել, տէր Հայր. ոտքից գլուխ մեղաւոր եմ, մեղքի գերի եմ. միթէ լեզուն կարո՞ղ է պատմել, միթէ խօսքը կարո՞ղ է նկարագրել այն ամենը չարութիւնները, ամէն անօրէնութիւնները, որ ես արել եմ։ իմ մեղքը շատ է քան երկնքի աստղը, քան ծովի աւազը. մեղաւոր եմ. օգնիր անարժանիս։

Մեղաւորը պէտք է խոստովանուի անկեղծութեամբ, առանց ստելու, և ամբողջութեամբ յայտնելով իր մեղքերը։ Ասա խօսել այնտեղ, ուր եկել ես ստախօսութիւնդ խոստովանելու, գողունի կերպով ծանր մեղքերդ թաքցնել նրա մօտ, ում մօտ եկել ես գողութիւնդ խոստովանելու, — դա կրկնակի մեղք է, ի հարկէ. և շատ էլ որ քահանային խաբես։ Աստուծուն չես կարող խաբել։ Եթէ ճշմարտութեամբ, անկեղծօրէն չես խոստովանում, այդպիսով ոչ թէ չես թեթևա-

նում մեղքերիցդ, այլ նոր նոր մեղքեր ես աւելացնում։ Ընդհակառակը, ամեն անգամ խոստովանուելիս՝ այնպէս պէտք է մտածես թէ քո վերջին խոստովանութիւնն է, հոգեվարքի խոստովանութիւնն է։ Ո՛վ անկեղծ է, խոստովանուում նա մօտ է ուղղուելու։ Առաջին քրիստոնեայք այս լաւ էին հասկանում, ուստի, ինչպէս սովորութիւն էր, իրանց ծանր մեղքերն էլ խոստովանուում էին եկեղեցում ժողովրդի բազմութեան առաջը, բարեկամների ու թշնամիների, ծանօթի ու անծանօթի առաջը։ Բայց մայրախնամ եկեղեցին, գիտենալով իր որդոց թուլութիւնը, զիջող եղաւ և սահմանեց խոստովանուել միայն մի քահանայի առաջ։ Սովորութիւնը վերացաւ, բայց հետքը մնաց։ այն էլ միայն պատարագիչ քահանայի վրայ որ դառնալով դէպի ժողովուրդը՝ «Եւ առաջի ձեր, հարք և եղբարք, ասում է, զամենայն մեղս, զորս գործեալ եմ։ Հայրեր ու եղբայրներ, մեծեր ու փոքրեր, ձեր առաջն էլ եմ խոստովանուում իմ բոլոր մեղքերը։

Անկեղծութեամբ խոստովանուելու համար ոչինչ չպէտք է ծածկես քահանայից։ որովհետև, ինչ որ այստեղ ծածկելու լինես մի քահանայի առաջ, այն դատաստանի օրը սոխպուած կը լինես մերկացնելու ողջ աշխարհի առաջը։ Այն ժամանակ ամօթից կասես սարերին՝ ընկէք ինձ վրայ, և բլուրներին թէ ծածկեցէք ինձ։ Այստեղ եթէ անկեղծ խոստովանուես, թողութիւն կը ստանաս։ իսկ այնտեղ ոչ խոստովանուելու ժամանակ է, ոչ էլ թողութեան։ Մարդասպանն էլ կախաղան բարձրանալիս՝ խոստովանուում է իր յանցան-

քը՝ բայց չէ փրկուում։ Այս պատճառով առաքեալը՝ մեզ դէպի ճշմարիտ խոստովանութիւն յորդորելով՝ ասում է. «Եթէ ասենք թէ՝ ոչինչ մեղք չունենք՝ մեզ ենք խաբում՝ որովհետև առածներիս մէջ ճշմարտութիւն չկայ. իսկ եթէ չծածկենք՝ խոստովանուենք՝ պէտք է հաստատ գիտենանք՝ որ արդարադատ Յիսուս իսկոյն թողութիւն կը տայ մեզ»։

Խոստովանուելիս քահանան քեզնից մի բան է ուզում միայն՝ քո սիրտն է ուզում։ Երբ նա քեզ հարցնում՝ որդի՝ ի՞նչ ես արել՝ դրանով ուզում է ասել՝ ամբողջ կեանքդ դու անց ես կացնում սիրտդ մարդկանցից ծածկած. ամբողջ տարին դու այն չես երեւում՝ ինչ որ կաս. միթէ այս կարճ րոպէներին էլ չես բայց անի իմ առաջ քո սիրտը։

*
* *

Մարդս պէտք է խոստովանուի հաղորդ էլերով՝ ամեն բանի մէջ իրան մեղադրելով՝ ուրիշի արածը չյիշելով՝ իր արածը խիստ մերկացնելով։ Խոստովանուողը՝ որ գնում է դատուելու՝ ինքն իր գործի դատաւորը չպէտք է հանդիսանայ՝ չպէտք է սկսի պաշտպանել իր դատը այլոց դէմ. միակ դատաւորը քահանան է լինելու։ Քահանայի մօտ այնպէս պէտք է խօսես՝ ինչպէս յանցաւորը խօսում է դատաւորի հետ՝ որ իրան պէտք է ազատի կամ պատժի՝ ոչ թէ ինքնահաւանութեամբ ու պարծենալով։ Դու ոչ միայն պէտք է խօսես խոնարհութեամբ՝ այլ և պէտք է լռես խոնարհութեամբ՝

երբ խոստովանահայրը քեզ խրատում ու յանդիմանում է։ Միթէ դու խելագար չէ՞իր համարի այն հիւանդին, որ կծում է իր վէրքը բժշկող վիրաբոյժի ձեռքը։ Եթէ խոստովանուողը գնայել է իրան յանդիմանելու, ուրեմն, քահանայի մօտ ինքն արդարացնելու տեղը չէ, պատճառներ մէջ բերելու ժամանակ չէ։ Շատը՝ հէնց որ իր մեղքը խոստովանուում է, իսկոյն պատճառն էլ հետն է բերում։ Որը իր մարդու վրայ է գցում յանցանքը որը՝ իր կնոջ վրայ, որը որդոց. յանցանքն ուզում է ասել, բայց յանցաւոր չէ ուզում երևալ։ «Եթէ այս կինս չըստեղծէիր, ես արգելուած պտուղը չէի ուտի»։ Այսպէս են խօսում շատերը։ Եթէ եկել ես քեզ արդարացնելու, այսինքն՝ մեղքդ ծածկելու, մի և նոյն է թէ չես խոստովանուում։ Ինչ օգուտ ունին այդ պատճառանքները, այդ մեղանչանքը։ Մեղքը արուել է. Աստուծոյ դէմ Աստուծոյ հակառակ գնալու ոչինչ պատճառ չէիր կարող ունենալ. ուրեմն, արածդ մեղք է։ Խոստովանուիր մեղքդ՝ ոչ թէ պատճառները փնտռելով, այլ դեղը փնտռելով, այն ժամանակ կասեմ որ դու այս, խոստովանուում ես։ Դաւիթը աղօթում էր. «Տէր մի թողներ որ մեղքերս արդարացնելու համար՝ պատճառներ փնտռեմ». նոյնը պէտք է դու ինդրես՝ խոստովանանքի գնալիս։

* * *

Խոստովանուելու նպատակն է՝ մեղքերից թեթևանալ, արդարանալ։ Բայց չպէտք է կարծես թէ խոս-

տովանութիւնը քեզ Նորից Ծեղանչելու իրաւունք է տալիս։ Ով որ թողութիւն ստանալու յուսով է մեղանչում նա խաբեբայ է, ոչ թէ խոստովանուող։ Եւ անմիտ է այն մարդը, որ ասում է՝ Այս մեղքն անեմ, յետոյ խոստովանուեմ. միևնոյն է թէ ասէր՝ Այս մեղքն անեմ յետոյ զղջամ։ Աշխարհումն անուանի վիրաբոյժներ շատ կան. բայց ոչ ոք իրան բարձրից ցած չէ դցում, որ յետոյ վիրաբոյժին դուրս ընկած օսկորը ուղղել տայ։ Կրկնուած զղջումը հոգին մաշում է, որովհետև մեղանչելն ու զղջումը սովորական բան է դառնում, արուեստ է դառնում։ Եթէ արած մեղքիդ վրայ զղջալուց յետոյ՝ բոլորովին չես նորոգուում, զղջումդ զղջում չէ։ Եթէ այն նպատակով չես զղջում ու խոստովանուում որ միւս անգամ չմեղանչես. եթէ չես որոշում բոլոր ուժովդ մեղքի դէմ դուրս գալ, ապա զղջումդ ու խոստովանանքդ ոչինչ միտք, ոչինչ նշանակութիւն չունի։ Այդ է պատճառը, որ Յիսուս ումը բժշկում էր, զգուշացնելով ասում էր՝ «Տես, դու բժշկուեցիր. էլ չմեղանչես, որ չլինի թէ յետինը աւելի վատ լինի։ քան առաջինը. չլինի թէ աւելի ծանր պատասխանատուութեան տակ ընկնես, որովհետև այն ժամանակ քեզնից կը պահանջուի թէ հին և թէ նոր մեղքերիդ հաշիւը»։

Ինքդ դատիր. միթէ աւելի մեծ պատժի չէ՞ արժանի այն յանցաւորը, որ դատաւորից ներումն է ստացել բայց նորից ոտնատակ է տալիս օրէնքը։ Արժանի՞ է հայրական սիրուն այն որդին, որի յանձանքը ներել է հայրը, և կրկին վշտացնում է նրան առաջուայ յանցանքներով։ Աւելի ցաւ չէ՞ պատճառում ծնողական սրր-

տին, երբ հայրը ձեռք է բերում իր որդուն՝ նորից կորցնելու համար։ Ձեռք բերած բարիքը ուրախութիւն է. իսկ ձեռք բերած և կրկին կորցրած բարիքը կրկին ցաւ։ Այսպէս էլ՝ ով իր մեղքերի թողութիւնը ստանալուց յետոյ՝ էլի առաջուայ անկարգ կեանքն է անց կացնում, նա կրկին պատիժ է պատրաստում իր համար։

*
* *

Շատ մարդ դժուարանում է խոստովանուել, ամաչելով իր մեղքերը քահանայի մօտ թուելուց։ Բայց ամաչելու ոչինչ չկայ. որովհետև մարդ ոչ թէ իսկապէս քահանայի առաջն է խոստովանուում, այլ Աստուծոյ առաջը, Յիսուսի առաջը, որ անտեսանելի կերպով ներկայ է խոստովանութեան ժամանակ։ Քահանան կարգուած է միջնորդ լինելու Աստուծոյ և մարդու մէջ. և երբ նա թողութիւն է տալիս, ինքը չէ, այլ Աստուած է, որ թողնում է մեղքերը։ Ինքը քահանան էլ չնայելով իր կարգի ու կոչման արքութեանը՝ նոյնպէս մի մեղանչական մարդ է, և, լինելով սրտերի բարեկամ, ներողամիտ է իր տիրոջ պէս։ Եւ քահանայի առաջը ծունկ չոգելով սրտով պէտք է գնանք Յիսուսի մօտ, պէտք է գնանք հաւատով ու մանկական համարձակութեամբ։ Պէտք է գընանք ոչ թէ ինչպէս Պետրոս առաքեալը. որ գնում էր Գեննեսարէթի ջրերի վրայ. ոչ թէ նրա պէս պէտք է նայենք մեր մարմնի ծանրութեանը, ջրերի խորութեա-

նը և հողմի ոյժին։—այլ միայն պէտք է նայենք Յիսուսին, որ տարածում է դէպի մեզ իր ԱՋԸ՝ մեզ մեր մեղքերի ծովից հանելու համար, որ չասի ամեն մէկիս, «Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր»։

ԲԱՆԵ.

Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցի եւ ես ի նմա։

Յովհ. Զ. 57.

Հա՛, սիրելիս՝ ապաշխարեցիր՝ խոստովանուեցիր՝ հիմա եկել ես վերջին մեծ գործի համար՝ եկել ես ճաշակուելու։ Միտքդ ինչ է՝ քաղցած ես՝ կը կշտանա՞ս միթէ նշխարի այն փոքր մասնիկով։ Ճաշ կը դառնայ քեզ համար գինու մէջ թաթախած հացի այն փշրանքը։ Ո՛չ՝ միտքդ ուրիշ է՝ դու եկել ես հաղորդուելու։ Բայց գիտե՞ս հաղորդուելն ինչ է։

Հաղորդուել՝ նշանակում է մասնակից լինել։ մասնակից լինել ոչ թէ հասարակ հացի, սովորական ճաշի, այլ հոգևոր հացի։ մի այնպիսի փառաւոր ճաշի, որ ինքը Յիսուսն է պատրաստել քեզ համար։ մի այնպիսի չտեսնուած, չլսուած ճաշի, որտեղ կոչնատէրը իր հիւրերին հացի փոխանակ տալիս է իր մարմինը և գինու փոխանակ՝ իր արիւնը։ Եւ այդ սեղանը, որ բացուում է քեզ համար, սովորական, հասարակ մարդու սեղան չէ։ թագաւորական ճոխ սեղան է, լի Աստուծոյ ամէն բարութիւնով։ մի աստուածային սուրբ սեղան, որի վրայ ճաշ պատրաստողը և հէնց ինքը ճաշը՝ Աստուած է։

Ի՜նչ երևելի բան պէտք է լինէր, եթէ մի թագաւոր սեղան նստած՝ իր ամանից բաժին ուղարկէր մի աղքատի։ ի՜նչքան աւելի, եթէ իր թևից մի կտոր կըտրէր և տար նրան՝ ուտելու։ Իսկ Յիսուս Հաղորդութեան սուրբ խորհրդի մէջ մեզ կերակրում է, ոչ թէ իր սեղանից բաժին ուղարկելով կամ իր մսից մի կտոր, այլ՝ իր ամբողջ մարմինը, արիւնը, հոգին և աստուածութիւնը։ Մեր Փրկիչը բաւական չհամարեց մէկ լինել մեզ հետ, միայն մարդանալով, այլ ուզեց որ ս. հաղորդութեամբ ամէն մէկիս հետ առանձին միանայ։ դրա համար իր անձը խառնեց, շաղուեց մեզ հետ, որ մէկ բան դառնանք, որովհետև «իսպառ սիրեց մեզ»։

Եթէ Յիսուս հրամայէր մեզ որ ինչ բարիք կը ցանկանանք մեր հոգուն, խնդրենք իրանից, ո՞ւմ մտքովը կանցնէր՝ խնդրել Նրանից որ իր մարմինն ու արիւնը տայ մեզ։ Բայց ինքը լաւ գիտէր, որ մեր հոգին կեն-

դանի պահելու համար, ամենալաւ ու օգտակար կերակուրը ինքն է. ուստի 33 տարի մեզ հետ ու մեր մէջ ապրելուց յետոյ՝ ուզեց մշտապէս անբաժան լինել մեզնից, և երկինք գնալուց առաջ՝ չկամենալով որ իր և մեր մէջ իրանից զատ՝ մի ուրիշ յիշատակ մնայ, — հաղորդութեան սուրբ խորհուրդը հաստատեց։ Նա իր բոլոր ամենակարող զօրութեամբ, ասում է սուրբերից մէկը, դրանից աւելի բան չէր կարող տալ մեզ։ Նա դրանով բաց արեց մեզ համար իր սիրոյ գանձարանը, և ոչ միայն բաց արեց, այլ և դատարկեց բոլորովին։

*
* *

Բայց քանի՞ անգամ պէտք է հաղորդուել։

Առաջին քրիստոնեայք ամէն օր միասին հաւաքւում էին ու հաղորդուում. որովհետև գիտէին որ հաղորդութիւնը այն հացն է, որ Յիսուս սովորեցրեց մեզ խնդրել՝ «Հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»։ Գիտէին որ սովորական հացը մարմնի կենդանութիւնն է պահպանում, իսկ հաղորդութեան հացը հոգու կենդանութիւնը. գիտէին որ այն գերազանց հացը ուտելով՝ յաւիտեան կարող էին ապրել։ Բայց հաղորդութեան տուած օգուտները մի անգամից չէ՛ զգում մարդ, այլ ը՞-ը՞-ը հաղորդո-ելով՝ վերջն է նկատում։ Շուտ շուտ և արժանապէս հաղորդուողին նոյնն է պատահում, ինչ որ երեխային։ Երեխան իր մեծանալը չէ՛ նկատում, բայց երբ մի տարի առաջ հագած շորը նորից է հագնում, տեսնում է որ կարճ է գալիս իրան, ապա

թէ զգալի կերպով խմանում է որ ինքը մեծացել է։

Այո՛, առաջին քրիստոնեայք ամէն օր էին հաղորդուում։ բայց հիմա՞։ Ի՞նչ խելագարութիւն է, ասում է Ս. Ոսկեբերանը, Քրիստոս այս սուրբ հացը հանապազօրեայ հաց սահմանեց մեզ համար, բայց շատերը շինել են տարեկան հաց»։ Այդ իր ժամանակուայ մարդիկ. իսկ մեր ժամանակ կան շատ մարդիկ, որոնք ոչ թէ տարին մի անգամ, այլ հինգ տարին մի անգամ են հաղորդուում. իսկ շատերը չեն էլ հաղորդուում։ Եթէ այն խելագարութիւն է, հապա՞ այս ինչ է։ Կարելի է, դու ասես՝ ես այն պատճառով եմ ուշ ուշ հաղորդուում, որ ինձ սառած եմ զգում Աստուծոյ սիրուց։ Միևնոյն չէ՞, եթէ ասես՝ ես կրակին չեմ մօտենում, որովհետև ինձ մրսած եմ տեսնում։ Կարելի է, քեզ անմեղադիր անելու համար՝ պատճառ բերես քո անարժանութիւնը. բայց այդպէս մտածելով դու հրաժարուում ես բժշկից, որովհետև հիւանդ ես։ Այն ինչ՝ «բժիշկը ոչ թէ առողջներին է հարկաւոր, այլ՝ հիւանդներին»։ Եւ՝ եթէ շուտ շուտ հաղորդուելուն արժանի չես, ուշ ուշ հաղորդուելուն ի՞նչպէս արժանի կը լինես. եթէ մի տարուայ մեղքերիդ թիւը շատ ես համարում հաղորդուելուդ համար, երկու տարուայ մեղքերիդ թիւը աւելի չի՞ լինի։ Չէ՞ որ միշտ այդպէս ուշացնելով պէտք է այնքան ուշանայ, որ ամենևին էլ արժանի չես լինի հաղորդուելու։ Զարմանալի է։ Ինչ որ Աստուած մեզ վընասակար համարելով արգելում է, այն անում ենք. իսկ ինչ որ օգտակար է համարում, նրանից փախչում ենք։ Ագամին ու Եւային ասեց՝ Այս պտղից չուտէք,—

կերան. մեզ ասում է՝ Առէք, կերէք, — չենք ուտում։

Առաջին քրիստոնեայք ամէն կողմից գնում էին Զիթենեաց լեռը, համբուրելու այն սուրբ տեղը, ուր Քրիստոսի համբարձուելուց յետոյ մնացել էր Նրա տոքերի հետքը։ Իսկ հիմա ամբողջ Քրիստոս բազմած է ս. սեղանի վրայ, և ոչ ոք չէ ուզում մօտենալ նրան։ Այս պատճառով նա գանգատում է՝ «Ի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ. ի՞նչ օգուտ ունիս դու, ասում է, իմ արիւնից. ի՞նչ օգուտ ունեմ ես, պատրաստելով քեզ համար այս երկնային կերակուրը, երբ դու, սովալլուկ լինելով, հեռու ես փախչում՝ իմ հացը չուտելու համար։ Ո՜հ, ի՞նչ զուր է կորչում իմ աշխատանքը, ինչ զուր պատրաստեցի քեզ համար այս կենսատու դեղը, երբ հիւանդ լինելով՝ հրաժարուում ես ընդունելուց։

Այն ինչ՝ սուրբերից մէկը հաղորդուելու ցանկութեամբ այնպէս էր վառուում, որ հաղորդութեան օրը սաստիկ գանգատում էր ժամերի ուշ անցնելուց. և երբ միայն մի ժամ էր մնում «Մի ժամ միայն մնաց, ասում էր, ահա շուտով գալու է ինձ մօտ Յիսուս»։ Իսկ մաքրասուն կոյսերից մէկը ասում էր. «Եթէ հաղորդուելուս օրը հարկաւոր լինէր անցնել թշնամեաց սրերի միջից կամ երկնքի մրրկալի կայծակների միջից, օչինչ երկիւղ չէր կարող արգելել ինձ ս. սեղանին մօտենալուց»։ Ինչո՞ւ էին դրանք այդպէս բորբոքուած հաղորդուելու սիրով. որովհետև լաւ գիտէին, որ հոգին աւելի է շահուում մէկ անգամ հաղորդուելով, քան թէ ամբողջ շաբաթ լոկ հաց ու ջրով պահք պահելով։

Այս պատճառով երկու տեսակ մարդիկ պէտք է որ անպակաս հաղորդուեն—կատարեալները և անկատարները։ Կատարեալները՝ որ միշտ կատարելութեան մէջ մնան. և անկատարները՝ որ կատարելութեան հասնեն. պէտք է հաղորդուեն ուժեղները՝ չտկարանալու համար, տկարները՝ ուժովանալու համար, հիւանդները՝ հոգևոր հիւանդութիւնից բժշկուելու համար, առողջները չհիւանդանալու համար։

*
* *

Հաղորդուելու օրն իսկ, ով դրա համար հարկաւոր պատրաստութիւնը չէ տեսել, դեռ և այս ժամանակ ունի պոպրսոպոպ-ելը։ Եսայի մարգարէն մարգարէանալուց առաջ տեսիլք է տեսնում որ սերովբէներից մէկը՝ վրկայութեան խորանի «Սրբութիւն սրբոց» կոչուած տեղում, ուր միշտ վառ պահուում էր երկնքից իջած կրակը, ունելիքով մի փոքրիկ կտոր է վեր առնում այն կրակից ու դնում նրա բերանը՝ մեղքերն այրելու և սիրտը մաքրելու համար։ Դրանից յետոյ Եսային ստանում է մարգարէական շնորհք։ Այս բանը մեր հայրապետ Շնորհալին շարականի մէջ այսպէս է երգում. «Յաստուածային կայծակունսն՝ ի սրովբէից անհպելին, անմաքրապէս մերձեցաք, գոլ պարտական քում խորհրդոյ»։ Տէր Յիսուս ասում է, քո աստուածային կայծերին, այսինքն՝ մարմնիդ և արեանդ անարժանութեամբ մօտեցանք ու պարտական եղանք։ Հիմա մտածիր դու. եթէ լուսեղէն հրեշտակը ունելիքի էր կա-

բոտ՝ աստուածային կայծը վեր առնելու համար։ Հապա մենք ի՞նչ պատրաստութեամբ պէտք է մօտենանք՝ նրան մեր մէջ ընդունելու։ Եւ եթէ զատկական գառը ուտելու համար՝ Յիսուս «մի փառաւոր զարդարուած վերնատուն» էր փնտռում իրան մեր ներսը ընդունելու համար ի՞նչպիսի փառաց տաճար կը ցանկանար ունենալ։ Եթէ Մովսէս մարգարէն օրէնքի տախտակները պահելու համար տապանակ շինելիս՝ ազնիւ անփուտ փայտ էր ընտրում ու մաքուր ոսկով պատում, դու ի՞նչպէս պէտք է պատրաստես քեզ՝ օրէնքներ Տուողին ընդունելու։ Եթէ հարիւրապետը վայել չէր համարում Յիսուսին իր տանը ընդունել. եթէ Յովհաննէս Մկրտիչը իրան արժանի չէր համարում նրա կօշկի կապերը յետ անելու — հապա դու, թշուառութեամբ, անգիտութեամբ և չարութեամբ լի մի հնչին արարած՝ ի՞նչ պատրաստութիւն պէտք է տեսնես։ Եւ Յիսուս ինչ փառքով որ փառաւորուեց Թափոր սարի վրայ, ինչ փառքով որ այժմ բազմած է Հօր աջակողմը, նոյն փառքով գըտնուում է և հաղորդութեան նշխարի մէջ։

Մովսէս մարգարէն Քորեբ անունով մի սարի վրայ տեսաւ մի թուփ, որ վառուում էր, բայց չէր այրուում։ Նա ուզեց մօտենալ՝ այդ հրաշալի երևոյթը լաւ տեսնելու. յանկարծ թփի միջից լսեց մի ձայն, որ ասում էր. «Մովսէս, Մովսէս, կօշիկներդ հանիր, կանգնած տեղդ սուրբ է»։ Միթէ նոյնքան հրաշալի չէ՞ այն սկիհը, որին դու մօտենում ես։ Թուփը վառող կրակը՝ ինքը Աստուած, ինքը Յիսուսն էր. և այդ սկիհի մէջ հացի ու գինու տեսակով գտնուում է նոյն աստուածային

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

վրակը, որ արժանաւոր ճաշակուողին մաքրում, զը-
տում կենդանացնում է. իսկ անարժան ճաշակուողին
այրում, կիզում, ոչնչացնում է։ Հանիր, ուրեմն, կոշիկ-
ներդ, յետ արա հոգիդ կաշկանդող բոլոր մեղսական
կապերը, և այնպէս մօտեցիր սրբութիւն տանելու։

Մուտացիր քեզ շրջապատող ամէն երկրաւոր բան,
այժմ քեզ նայում է քո պահապան հրեշտակը. քեզ
նայում են բոլոր երկնային զօրութիւնքը։ Դու այժմ
ասես թէ, վերջին դատաստանի առաջն ես կանգնած,
այժմ վճռուելու է քո վիճակը. և դու հաղորդուելու
ես՝ կամ յաւիտեան ապրելու, կամ յաւիտեան մեռնե-
լու։ Ուրեմն, ասա քեզ ու քեզ. Տէր Յիսուս, յոյսս
դնելով քո անսպառ բարութեան վրայ, և անսահ-
মান ողորմութեան վրայ՝ ես գալիս եմ, ինչպէս
հիւանդը իր Փրկչի մօտ, ինչպէս քաղցածն ու ծա-
բաւը՝ կեանքի աղբիւրին, ինչպէս աղքատը՝ երկնային
թագաւորին, ինչպէս արարածը՝ իր Արարչին։ Ի՞նչ
եմ ես, որ մօտենում եմ քեզ. և ի՞նչ ես դու, որ հա-
ճում ես խոնարհել դէպի ինձ, ինձ համար կենաց հաց
և հոգևոր փրկութիւն դառնալու։ Հոգիս բորբոքում
է մարմինդ ընդունելու ցանկութեամբ, սիրտս ծարաւ
է սրտիդ հետ միանալուն։ Ի՞նչպէս կարելի է ճանաչել
քեզ ու չսիրել, Տէր. ի՞նչպէս կարելի է սիրել ու չը-
միանալ քեզ հետ։ Զարթեցրո՛ւ սիրտս թմրութիւնից,
որ հոգով ճաշակեմ քաղցրութիւնդ. լուսաւորիր աչքս,
որ լաւ տեսնեմ այս մեծ խորհուրդը. ամրացրո՛ւ ինձ,
որ չտատանուեմ հաւատիս մէջ։ Մեղաւոր եմ, տէր,
առաջին մեղաւորը աշխարհիս վրայ. բայց էլ չեմ ու-

զում մեղաւոր մնալ։ Հաւատում եմ քեզ, տէր, օգ-նիր անհաւատութեանս։ Չեմ համբուրում քեզ Յուդա-յի համբոյրով, չեմ փոխի քեզ ողջ աշխարհի հետ, չեմ ծախի քեզ ոչ մի գնով, միայն օգնիր ինձ, որ անդատա-պարտ հաղորդուեմ քո սուրբ խորհրդին։ Լուսաւորիր միտքս, փոխիր սիրտս, ուղղիր կեանքս, սանձիր կրքերս և, իբրև Աստուած, թագաւորիր վրաս։

* * *

Հաղորդուելուց յետոյ եկեղեցին ձայն է տալիս, «Դուք որ հաւատով ընդունեցիք աստուածային, սուրբ երկնային, անմահ, անարատ և անապական խորհուրդը, շնորհակալ եղէք Տիրոջը»։ Սա մի գոհանալու հրաւէր է, երախտագէտ լինելու յորդոր է։ Ցիրաւի, ով որ չէ յիշում իր ստացած բարիքը, նա ոչ միայն արժանի չէ աւելի մեծ բարիք ստանալուն, այլ և արժանի չէ հէնց նրան, ինչ որ արդէն ստացել է։ Օրինակներ են եղել որ մարդ իր անձը զոհել է բարեկամի համար, բայց լսե՞լ ես երբ և իցէ, որ մէկը մեռած լինի իր թշնամեաց համար, իր թշնամեաց փոխարէն։ Ամէն մեղաւոր՝ Աստուծոյ թշնամին է, բայց Աստուած մեռաւ մեզ համար, մեր փոխարէն։ Եւ ինչպէս մեռաւ, ինչպէս չեն մեռնում այժմ նոյն իսկ աւազակները, Ցիսուս մեռաւ խաչի մահով, անարգ ու խայտառակ մահով։ Լսե՞լ ես որ մարդ մեռնելիս կտակի, որ իր մարմինը կտոր կտոր անեն, բաժանեն քաղցածներին, որ նրանք սովամահ չլինին, իր արիւնը խմեցնեն մեռնողներին, որ նրանք

շունչ առնեն։ կենդանանան։ Իսկ Յիսուս, ինչպէս Սիոնի վերնատան մէջ կտակեց իր աշակերտներին, ամէն օր նորից զենուումէ եկեղեցու ս. սեղանի վրայ, մասմաս կտրատուելով, և մենք ճաշակումենք որ մեր հոգին յաւիտեան չմեռնի։ Ա՜հա թէ որքան մեծ է մեր ստացած բարիքը, բայց ինչպէս պէտք է շնորհակալ լինենք։

Շնորհակալութիւնը պէտք է հաւասարուի ստացած բարիքին. զոհաբերութեանը պէտք է պատասխանել զոհաբերութեամբ։ «Մենք էլ Յիսուսի վէրքերի փոխանակ պէտք է վէրքեր կրենք. Նրա արեան փոխանակ մեր արիւնը թափենք»։ կը հարցնես դու։ Ո՛չ. չսարսես դրանից. արեան հոան իսկ սոսկում է պատճառում մեզ։ Մեր ժամանակում հաւատացեալին՝ էլ խաչը չեն բարձրացնում՝ այլ խաչով են պսակում։ Մենք ունենք ուրիշ վէրքեր, ուրիշ չարչարանք, ուրիշ մահ։ Կայ մի ուրիշ Գողգոթա, կայ մի ուրիշ խաչ. որի վրայ կարող ենք բարձրանալ ու խաչուիլ։ Մեր սրտերում բուն դըրած չարութիւնները մեռցնելն է այն մահը, որ պահանջում է մեզնից Յիսուս։ Մաքուր, անբիծ կեանքն՝ է այն խաչը, որի վրայ իբր չարչարուելով՝ խաչուում է մեր սիրտը։ Միմեանց օգնելը իրար սիրելը, սիրով խընդալն՝ է այն սուրբ կեանքը, որ պահանջում է մեզնից անարիւն զոհը։ «Մենք շատ ենք։ ասում է առաքեալը, բայց միասին կազմումենք մի մարմին, որովհետև մի հացից ենք հաղորդուում»։ Մի հաց ենք ուտում՝ ուրեմն, ամենքս էլ մի և նոյն զգացմունքը պէտք է ունենանք. մի և նոյնը մտածենք։ Մի բաժակից ենք խմում՝ ուրե-

մընն՝ մէկ սիրտ պէտք է ունենանք։ իրար համար միա-
տեսակ պէտք է բաբախեն մեր սրտերը։ մի հոգի պէտք
է լինե՞ք շատ մարմինների մէջ։ ինչպէս Յիսուս բնա-
կում է մեր մէջ՝ մենք էլ նրա մէջ։ Ինքն էլ այդ հրա-
ւէրն է կարդում՝ այդ խոստումն է անում մեզ՝ «Ով
ուտում է իմ մարմինը և խմում է իմ արիւնը՝ նա իմ
մէջ կը բնակուի՝ ես էլ՝ նրա մէջ»։

ՀԵՂԻՆԱԿԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, 34 *երես*, 1893, *գինն է* 8 *կոպէկ*.

2. ՁԱՐՁԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹԸ, 80 *երես*, 6 *պատկերով*. *գինը՝* 15 *կոպէկ*.

3, ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, *առաջին գրքոյկ*, 76 *երես*. *գինը՝* 15 *կոպէկ*.

4. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, *երկրորդ գրքոյկ*, *երկրորդ տիպ*, 91 *երես*. *գինը՝* 15 *կոպէկ*.

5, ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, *երրորդ գրքոյկ*, 120 *երես*, *գինը՝* 20 *կոպէկ*;

6. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, *չորրորդ գրքոյկ*, 110 *երես*, *գինը՝* 20 *կոպէկ*;

Հեղինակի հասցէն. Тифлисъ священнику *Эммануэлу Назарянцъ*.